



554

ل. I. 4







1903 fevrit 4



« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞մէ հոգին չձարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Չ. ՄԻՇԼԷ

1895 Մարտ 1ին, Պոլիս, ԾԱՂԻԿ հանդեսին հրատարակութեան նպատակը բացատրելով, սա տողերը կը գրէի. «ԾԱՂԻԿի խնդրանքները խորապէս հանդուրձած է քեզի մը հոգեկան դաստիարակութիւնը իր գրականութեանը միայն կը կատարուի, պայմանով որ այդ գրականութիւնը մտածման եւ գեղեցկին սնուցանող եւ մեծցնող տարրերն ունենայ: . . . ԾԱՂԻԿ ճշմարիտ հանդեսի մը հանգանակները պիտի ունենայ, ամբողջական ուսումնասիրութիւններ երկայացնելով ու խնդիրները իրենց ընդհանրութեան մէջ նկատելով: Անկիստ սահմանուած է մանաւանդ ընդարձակ եւ աշխատած գրականութեան: »

Միեւնոյն ծրագիրը աւելի բայն սահմաններով իրագործելու համար է որ այսօր կը ձեռնարկեմ ԱՆՍՆՅԻՆ հրատարակելու, տոգորուած մանաւանդ այն մտածմանը քեզի հարիզին՝ այս սիեգերական կեդրոնէն մեկնած գրական բազմակողմանի հրատարակութիւն մը կրնայ տեսակ մը միջնորդ հանդիսանայ եւրոպական ֆալսափայտութեան ու մեր ժողովրդին միջեւ, եւ միակզանայն՝ աշխարհի չորս կողմը ցրուած Հայերուն մէջ բարոյական կայ մը ձեւացնել:

Ու է քեզի ֆալսափայտ գործունէութեան գերծ, ու է քեզի կուսակցութեան սնկախ, սնունդական խնդիրներու բացարձակապէս սնունդացնելի, ԱՆՍՆՅԻՆ պիտի ըլլայ գոտ մտածմանական հրատարակութիւն մը: Ամէն տեսակ խնդիրներ, — նոյն իսկ ազգային եւ ֆալսափայտ կարգերը, որոնց բաժին մը պիտի յսկացուի, — նկատողութեան պիտի սնունդին այս հանդեսին մէջ՝ գրագէտի սնկողմանայ ֆլեմական ոգիով, եւ երբեք՝ գործիչի, աղանդաւորի կրֆոտ ու նպատակաւոր ձգտումներով:

ԱՆՍՆՅԻՆ պիտի պարունակէ 1. Ուսումնասիրութիւններ հայ ժողովրդին պատմութեան, գրականութեան, գեղարուեստին եւ յեղուին վրայ, եւ տեսութիւններ սնոր երկայ բարոյական եւ նիւքական կացութեան մասին. 2. Ուսումնասիրութիւններ գեղարուեստական, գիտական եւ ընկերական ընդհանուր խնդիրներու վրայ. 3. Փարզմանութիւններ օտար հին եւ նոր մտածողութեանց ամէնէն կարեւոր հրաշակերտներուն. 4. Կէտեր, վիպակներ եւ բանաստեղծութիւններ ազգային կամ առհասարակ արեւելեան կեանքի. 5. Ոտանաւոր եւ արձակ գրութիւններ՝ գրական ամէն սեռէ. 6. Հրատարակութիւն եւ ուսումնասիրութիւն հին ու նոր հայ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց եւ հեքիաթներու: ԱՆՍՆՅԻՆ պիտի ձգտի մասնաւորապէս «ազգային» գրականութիւնը զարգացնել գոտ հայ տարրերով:

Այն բազմազան ծրագրին իրականացման համար ուրախ եմ ծանուցանելու որ գրագէտներու, արուեստագէտներու եւ գիտնականներու խումբի մը աշակցութիւնն ապահոված եւ արդէն, եւ կը յուսամ գործակից ունենայ բոլոր այն հայ մտեր ուրոնի կը բաղձան մտածողական շտակին միջոցով ազգին բարոյական մակարդակը բարձրացնել:

Երբ ընդունելութիւն զտեմ այս ձեռնարկը եւ միջոցները ներեմ, մտադիր եմ հետզհետէ ձոխացնել հանդեսին գեղարուեստական մասը, պատկերներ, արուեստի հրաշակերտներու վերաբարոյութիւններ, ինքնուրոյն գծագրութիւններ հրատարակելով. իմ փախափստ է մանաւանդ հայկական վաղեմի զարդանկարչական արուեստին վերանորոգում մը փորձել այրագան ձեւերով: Այդ զարդարիւն մէկ առաջին գործարարութիւնն է ԱՆՍՆՅԻՆ ձախասանկարը գործաւոր հայ նկարիչը՝ Պ. Է. Եանին յորիւնց նմանողութեանը հին հայ նկարագործ ձեռագիրներու:

ԱՆՍՆՅԻՆ կոչեցի Հանդիսը, մեր հիմնաւորը եւ յախտեանական ստուածունիին սնունդով, որպէս զի Ռակտոյին, Անարատը, բարոյութեանց Բաշխիչը, հայ գեղին հոգին պատկերող մայրական Իիցանոյշը՝ այս ազգային գրական ձեռնարկին իր յուսաւոր քեւերովը հովսևաւորէ եւ զայն գեղեցկութեանը ու կեկոյնութեանը պայծառացնէ:

Պատրի կը համարիմ, ԱՆՍՆՅԻՆ առաջին քիւր հրատարակ հանած միջոցիս, շնորհակալութիւն յայտնել այն մէկ ֆակի գրագէտ սնանաւորութեանց որոնք հանձնեցան այս աւաքերին հիմնարկութիւնը նիւքապէս դիւրացնել, — հայ մտադրոյն որ ամէնէն սիրալիր բացատրութիւններով ծանոյց ԱՆՍՆՅԻՆ երեւումը, — բոլոր այն բազմաքիւն սնկասներուն որոնք հեռուէն ու մոտէն իրախառնական արտայայտութիւններով հաստատեցին այն հանդուրձը քեզ այս հրատարակութեանը կեկոյնական պէտք մը կը յրացուի, — եւ մանաւանդ ուստահայ ու քրիստոսայ այն ամէն գրագէտներուն որոնք իմ խնդրանքիս վրայ, եւ ունակ նոյն իսկ ինքնաքերաքար, իրենց գործակցութիւնը խոստացան:

# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ , ԳՐԱԿԱՆ , ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏԵՐԻՆ  
ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Ա . ՏԱՐԻ  
1898 — 1899

ԲԱՐԻՉ  
ՏՊԱՐԱՆ ԱՆԱՀԻՏԻ

REVISED

EDITION

1900

1900

1900

1900

# ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

## Ա Ն Ա Ն Կ Ց Ի

### Ա . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի Ն

ԲՈՂ Ա . Տ Ա Ն	էջ
Ատեղութեան ոգեւարը . . . . .	202
Հողանտայի խաղաղութիւնը . . . . .	249
Ա . Ր Ս Է Ն	
Եզիտին . . . . .	381
ԼԵՒՈՆ Բ Ա Շ Ա Լ Ե Ա Ն	
Յեզին ձայնը . . . . .	34
ԱՏՈՄ Ե Ա . Ր Ճ Ա Ն Ե Ա Ն	
Երկու քերթուած . — Հանգիստի իրիկունն . — Հոգեվարքի իրիկունն	370
ՏԻԳՐԱՆ Ե Ս Ա Յ Ե Ա Ն	
Գեղեցկին ընկերական դերը . . . . .	26
Բրոֆ . Պիւիսէր . . . . .	282
ՏՐ . ՏՐԴԱՏ Ե Ս Ա Յ Ե Ա Ն	
Պատճառորականութիւն . . . . .	240 , 266
Ե Ր Ո Ւ Խ Ա Ն	
Համբին վրէժը . . . . .	275
ՔԼԷՄԱՆ Ժ Ա Ն Է Ն	
Էսկար Շահին . . . . .	355
ԱՒԵՏԻՔ Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն	
Չանգը . . . . .	384
ԷՌՆԵՍՔ Լ Ա Վ Ի Ս	
Ֆրանսա եւ Անգլիա . . . . .	180
Ճշմարիտ Ֆրանսան . . . . .	182
ԼՈՒԻ Լ Է Ժ Է	
Միցքիկիւն . . . . .	298
Խ Ո Ս Ր Ո Վ	
Մտքիս խառնարանէն . —	
Ա . Երգեր . . . . .	136
Բ . Պատմութիւններ . . . . .	207
ՉԱՔԱՐԻԱ ՄԱՐԴԱՐ Խ Օ Ճ Ե Ն Ց	
Վարդ եւ Սոխակ . . . . .	11 . 176 , 217
ԱՂԵՔՍԱՆԴՐ Մ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն	
Երգ . . . . .	8
Դարավերջի բարեբերիք . . . . .	9

Պոյէզ (Պուշկին) . . . . .	էջ
Չմբան երգ . . . . .	9
Անչար (Պուշկին) . . . . .	171
Անչար (Պուշկին) . . . . .	175
Հ Ր Ա Չ	
Հայրենի երգեր . . . . .	71
Ճախարակին քերթուածը . . . . .	174
ՍԹԵՖԱՆ Մ Ա Լ Ա Ռ Մ	
Մաղիկները . . . . .	74
ԳԷՈՐԳ Մ Ե Լ Ի Ք - Կ Ա Ր Ա Գ Է Օ Չ Ե Ա Ն	
«Ամբոխային տրամաբանութիւն»ը	349
Գերման քաղաքականութիւնը Տաճկաստանում եւ նորա նշանակութիւնը Հայերի համար	372
Ա . Մ Ե Յ Ե Է	
Մեծն Պետրոսի յարաբերութիւնները հայ ժողովրդին հետ	306
Մ Ե Ն Ի Կ	
Հիւանդանոցի գիշեր . . . . .	19
Մ Ի Ր - Ե Ր Օ	
Շեյխորդին . . . . .	37
Եզիպտական տպաւորութիւններ . . . . .	163
Եզիպտահայ գաղթականութիւնը . . . . .	221
ԱՏԱՄ Մ Ի Ց Ք Ի Ե Վ Ի Չ	
Տաղ՝ երիտասարդութեան . . . . .	255
Նախահայրեր . — Բ . Մաս . Տեսարան Բ .	302
Փարիսը . . . . .	334
ՉԱՊԷԼ Յ Ո Վ Հ Ա Ն Ե Ն Է Ս Ե Ա Ն	
Կարմիր ջաղացքը . . . . .	40
Անճնասպան տղաքներ . . . . .	101
Մահը . . . . .	171
Վ . Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն	
Գեղարուեստիկութիւնը եւ նպատակը	288 , 336
Ն Ո Ւ Պ Ա Ր Փ Ա Շ Ա	
Մէկ քանի նոթեր Հայաստանի մէջ մտցուելիք բարենորոգմանց մասին	158

<b>ԱՐԱՄ Չ Ա Ր Ը Գ</b>		<b>Էջ</b>
Պատմիւր Աստըծուն . . . . .		165
Եկէ՛ք , եղբայրներ . . . . .		165
Մայրերն են խօսում . . . . .		166
Արձագանքը . . . . .		217
Երգեր . . . . .		236
Տգէտ ազգի հանձարին . . . . .		273
Հայ բրբերի աղօթքը . . . . .		732
Ժողովրդների երգը . . . . .		274
Երգեր . . . . .		274
Երգեր . . . . .		231
<b>ՍՄԲԱՏ ՇԱ ՀԱԶԻԶԵԱՆՑ</b>		
«Անահիտ» եւ հայ երիտասարդութիւնը . . . . .		99
<b>ԱՐՇԱԿ Չ Օ Պ Ա Ն Ե Ա Ն</b>		
Դարագլուխ . . . . .		1
Հայ գրականութիւնը . . . . .		9
Ցաւին տունը . . . . .		23
Հայգիրք . . . . .		29
Ճոքոնտան . . . . .		42
Նաչատուր Աբովեան . . . . .		51
Կիւսթավ Ֆլուպէն . . . . .		63
Մտաւորական կեանքէն . . . . .	71 ,	106
Գաղաքական կացութիւնը . . . . .	78 , 227 ,	309
Պատասխանատուութիւնները . . . . .		85
Նուպար փաշա . . . . .		118
Գիտակից ջանքեր . . . . .		128
Պ. Չերազի պատասխանը . . . . .		147
Դարավերջի Ֆրանսան . . . . .		149
«Մուրճ»ը եւ ռուսահայ արդի գրական . . . . .		178
նութիւնը . . . . .		197
Պատերազմի դէմ պատերազմը . . . . .		220
Նաչագող մը . . . . .		223
Ներկան . . . . .		230
Պերճ Պոչեանց . . . . .		235
Նաղաղութեան յաղթանակը . . . . .		261
Ամբոխը . . . . .		293
Բուշթին եւ Միցֆրիվիշ . . . . .		317
Ռուսահայեր եւ Թրքահայեր . . . . .		348
Հ. Երեմեանին բարոյականը . . . . .		357
Վենետիկի Միսիթարեանները . . . . .		385
Պ. Գրիգոր Չանչեանի յորեկեանը . . . . .		389
«Անահիտ»ի գերը . . . . .		
<b>ՎԻՔԹՈՌ ՊԷՌԱՌ</b>		
Նամակ խմբագրութեան . . . . .		184
<b>Գ. Մ. ՊԸՅԸԳԼԵԱՆ</b>		
Նամակ խմբագրութեան . . . . .		184
<b>ՊԼՈՎԻՑ</b>		
Նուպար փաշա . . . . .		144
<b>ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ</b>		
Մահուան արհաւիրքը . . . . .		6
Պամսին . . . . .		104

<b>ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ</b>		<b>Էջ</b>
Հ ա Վ Ի Բ	Ա. Պոչ թագաւորին սուրբ . . . . .	30
	Բ. Աստուածուհւոյն լոգանքը . . . . .	62
	Գ. Մրրիկ . . . . .	63
	Դ. Վարձակը . . . . .	131
	Ե. Ժամանակը . . . . .	162
	Զ. Ա. Փարամզատա . . . . .	346
	Է. Մովաջուլը . . . . .	347
	Ը. Նարեկացին . . . . .	379
Ուրուագիծներ . . . . .	103 ,	218
Օձակոչ . . . . .		109
Թամար . . . . .		265
Ջրհորը . . . . .		266
Մարա . . . . .		331
<b>Վ Ա Հ Ր Ա Մ</b>		
Պատրիարք մը որ կը զբօսնու . . . . .		278
<b>ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ</b>		
Երկու խօսք մեր գրաբարբառների միու- . . . . .		113
թեան մասին . . . . .		
<b>ՉԱՐԵՀ ՎԱՐՍՍՄԵԱՆ</b>		
Նոր հոգիներ . . . . .		232
<b>Է. ՄԵԼՔԻՌՈՍ ԵՐ ՎՈՎԻԻԷ</b>		
Նուպար փաշա . . . . .		141
<b>Տ Ե Ր Վ Ի Շ</b>		
*** . . . . .		66
Մեկնում . . . . .		104
Ցայգերգ . . . . .		206
*** . . . . .		288
<b>ԼԷՈՆ ՏԻԷՌՔՍ</b>		
Ղազարոս . . . . .		75
<b>ՏՐ.ԿՅ.ՓԱՇԱԵԱՆ</b>		
Նամակ խմբագրութեան . . . . .		190
<b>Պ. ՓԱՓԱՉԵԱՆ</b>		
Ինչո՞ւմ էր ուժը . . . . .		21
Նամակներ իմ հայրենիքից . . . . .		269
<b>ՏՐ.ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ</b>		
Հայուն ջիղերը . . . . .	14 ,	66
<b>ՕՇԻՆ</b>		
Նամակ խմբագրութեան . . . . .		145
<b>ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ</b>		
Անապատէն ձայն . . . . .		41
Մոսապ լեւիմ . . . . .		166
Բարի դահիճը . . . . .		213
Մուլէտ . . . . .		245
Մոսապ լեւիմ . . . . .		334
<b>ԿԻՒՍԹԱՎ ՖԼՈՊԷՌ</b>		
Հերովդիա . . . . .	64 , 168 , 237 , 284 ,	341

# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա.ՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1898

ԹԻԻ 1

## ԴԱՐԱԳԼՈՒԽ

Մեր ցեղին պատմութեան մէջ այս դարուն վերջին քառորդը պիտի մնայ իբրև ամենէն կարևոր, ամենէն նշանակալից շրջաններէն մէկը : Դեռ տեսչին մէջն ենք ամենքս ալ այդ գալարատանջ ժամանակամիջոցին, որ, ցնցումէ ցնցում, մեծադրոգ շարժքի մը յանդեցաւ : Բայց արդէն այդ երէկը անցեալի ձեւ տանելու վրայ է . մնայլ համապատկերին մէջ պատառուածքներ բացուեցան . եւ կարծեմ թէ կրնանք, ու պարտինք, ամփոփուելով կարելի եղածին չափ բարձր դիտակէտի մը վրայ, բոլորչի նայուածքով մը ընդգրկել մեր տոհմական կեանքին արդի ընդհանուր կացութիւնը, ճշդել զէպքերուն իմաստն ու հետեւանքը, կշռել ինչ որ կորսնցուցինք ու ինչ որ չահեցանք, որոշել ո՛ւսկից եկանք եւ ո՛ւր կը դիմենք :

Պատկերը կնճռոտ է, եւ խաւարով կուտակուած : Ոմանք, աղէտքին միժուլթիւնէն զահանդած, կարծեցին որ լսուած չոխնդը վերջնական կործանման մը շառաչիւնն էր . ընդհանուր յուսահատութիւն մը բարձրացաւ արիւնէն ու մութիւնէն . եւ մինչեւ այսօր, մէկ կողմէն՝ պոռոտախօս ստապատիր յաւակնութիւններու, միւս կողմէն՝ ողբակոծ շուարումներու մէջտեղը, շատեր, սահմակած, ուղեկորոյս, կը աատանին : Եւ սակայն, անվրդով ու հեռուն նայող աչք մը՝ այդ եղերական մթութեան մէջ պիտի տեսներ նշոյլներ ամենէն փրկարար լոյսին, լոյսի մը որ նոյն իսկ աղէտքէն կը ծնի : Յաւին մէջէն, հայ ազգը կ'երեւայ գեղեցկացած, բարձրացած, նոր

ու աւելի մեծ ճամբու մը սեմին վրայ : Փիւնիկն է՝ իր ածիւնէն վերածնելու պատրաստ : Եւ փիւնիկին խորին առասպելը յաւիտենական խորհրդանշանն է ազգերու պատմութեան :

Հայ ցեղին ժամանակակից տարեգրութեանց հետազօտիչներուն համար, ամենէն կենսական գործը պիտի ըլլայ վերլուծել այն գեղեցիկ երեւոյթը որով քանի մը դարու գեանամած սողումէ մը յետոյ, մեր ժողովրդին հոգին զէպի լոյսը բարձրացաւ՝ եւրոպական գաղափարներու նորոգիչ մղումին տակ : Պիտի տեսնուի ի՛նչպէս այս ազգը որ բիրտ ու բարբարոս տէրերու ձեռքը՝ ուշիմ բայց կրաւորական գործիք մը դարձած էր, կամաց կամաց գտաւ իր ինքնութիւնը, իր հինաւուրց ազնուականութիւնը, իր արժանապատուութեան զգացումը, իր ուժին եւ իրաւունքներուն գիտակցութիւնը :

Արեւմուտքի ոգին, հետզհետէ աւելի հզօր եւ յաղթական, թափանցելով մահմետականութեան թանձրացուցած խաւարչտին զանգուածին խորը եւ անոր մէջ ցրցքնելով իր կենդանի պայծառութիւնը, հայ ժողովուրդը, որ այդ մահացու բեռին տակ կրցեր էր մաքուր կեանքի նշխարներ պահպանել, թօթվուեցաւ, եւ ճիգով մը որուն ուժը իր երկայն ջախջախումին խորութեանը համարժէք էր, նետուեցաւ զէպի նոր, առողջ, գեղեցիկ ճարրը, որուն հեռուոր ու զժբազգ բայց հարազատ մէկ մասը կը զգար ինքզինքը : Եւ ահա լայն խլրտուքն է, ինչպէս մեծածաւալ տատանումները ծովուն՝ յանկարծ անցնող հովի մը ներքեւ, որ Պարսկաստանի խորերէն մինչեւ Վոսփորի ափերը, Հնդկաստանէն մինչեւ Կովկաս՝ բովանդակ ազգը կը զզրզէ : Մխիթար եւ իր պանծալի գործը՝ եւրոպա-

յէն Ասիա ձիւղաւորուած . ոռւսօ-պարսկական պատերազմը, եւ հայ քաջերուն դերը՝ ի նպաստ եւրոպական ուժին ընդդէմ բռնաւոր Ասիային . ոռւսական հայութեան աղւոր եռանդը՝ գերմանօ-ոռւս քաղաքակրթութեան նեցուկով՝ բարոյական, մտաւորական կեանք մը ստեղծելու, եւ բոլոր այն կրակոտ վերակենդանացումը՝ Աբովեանէն ու Նալբանդեանցէն մինչեւ Արծրունի ու Րաֆֆի եւ մինչեւ այսօրուայն ճոխ գրական փթթումը . Պոլիս ու Իզմիր, տեղական բոլոր ցեղերէն առաջ, պերճ ու հզօր ծաղկեւորումը որով հայ ժողովուրդը կը հաստատէ դպրոց, թատրոն, գրականութիւն, մամուլ, սահմանադրական բարքեր, եւ հաւատքն ու կամքը՝ քաղաքակրթ եւ անկաշկանդ կեանքի մը :

Ինական էր որ կենսականութեան այս ջերմ ցայտումէն յետոյ, ժողովուրդը, մղուած մանաւանդ համաբաղդ ուրիշ ազգութիւններու փրկութեանը փորձիչ օրինակէն, ցանկար այդ բարոյական-ազգային շարժումը իր տրամաբանական եզրակացութեանը հասցնել : Այդ իղձը ընդհանուր ազգին իղձը եղաւ . եւ զայն իրագործել փորձելու սկսողները ոչ թէ երիտասարդներն էին, այլ ժողովուրդին ամենէն ծանրախոն մասը . Պատրիարք, վաճառականներ ու գիււանապետներ յանդգնեցան առաջին քայլը առնել . անոնք ներկայացուցին ազգին բողոքը՝ քրիստոնեայ Եւրոպային . անոնք բացին ժողովրդին՝ ազատ կեանքի մը հեռանկարը . ժողովուրդը այդ սկսուած գործը շարունակեց՝ բնագրական ամբողջներուն յատուկ ծայրայեղ եւ միամիտ խանդավառութեամբ . երկրին մէջ, ամէն կողմ, երիտասարդութիւնը իր սիրտը, իր կեանքը դրաւ այդ ճամբուն մէջ . եւ կազմուեցաւ ուժ մը, խուլ, խորին, յարածուն . առնականութեան կոհակ մը բարձրանալ սկսաւ՝ լճացած զանգուածէն . յանդգնութեան, անձնագոհութեան, արութեան օրինակներ երեւցան որոնք պատիւ կը բերեն զանոնք արտադրող ժողովրդին եւ զոր պարտականութիւն մըն է մոռացումէ փրկել ու անկորուստ արձանադրել պատմութեան համար : Բայց վարիչները, առանց ուսումնասիրութեան, առանց փորձառութեան, եւ երբեմն առանց խղճմտութեան, չգիտցան սպասել որ այդ ուժը հասուննար եւ պայթէր նպաստաւոր պայմաններու մէջ, հապճեպեցին եւ ձափուտեցին գործ մը որ ամենէն լայն շրջահայեցութիւնը կը պահանջէր եւ ընդհանուր կացութեան խորին հմտութիւն, չարաչար մըսխեցին ժողովրդին աւելնն ու անձնուիրութիւնը

եւ ահաւոր ջախջախման մը մղեցին զայն : Այսպէս կամ այնպէս, արիւնը թափեցաւ, եւ այսօր սեւ թուական մը ունինք ետեւեմիս : Հիմա վայրկեանն է որ գլուխնիս երկու ձեռքերնուս մէջ առնենք ու ծանրօրէն, անկեղծօրէն, երկիւղածօրէն նկատենք կացութիւնը : Ամէն բան կորուսած չէ : Ընդհակառակն : « Մարտիրոսներուն արիւնը ի զուր աղաղակած պիտի չըլլայ, կ'ըսէր Անաղու Պրանս՝ Հայերուն, ուժ մը կայ ձեզի հետ, ցրուած բայց հզօր, — վեհանձն սրտերուն եւ ազնիւ մտքերուն համակրութիւնը » Արդարութեան համար թափուած արիւնը՝ պարծանք է մեր ժողովրդին, զայն գեղեցիկ ու սրբազան կը կացուցանէ աշխարհի առջեւ : Եւ եթէ նիւթական կորուստնիս ահագին է, բարոյական շահ մը ունինք մեծ ու բեղուն : Մոռցուած, արհամարհուած ազգ մըն էինք . մեր ճիգին ու մեր դժբաղդութեան մեծութեանը շնորհիւ՝ ամբողջ քաղաքակրթ աշխարհին ծանօթ ժողովուրդ մը դարձանք, ծանօթ ու համակրելի իր կամքովը, յանդգնութեամբը, զոհողութեան ոգովը, յարգելի՛ իր անարդար ապերջանկութեանը համար : Ամէն տեղ, Նոր Աշխարհն ինչպէս Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ, մեր ցեղին անցեալ ու ներկայ կեանքովը հետաքրքրուել սկսան . Իերմանիոյ մէջ մեր պատմութեան ու դրականութեան մասին ուսումնասիրութիւնները կը բազմապատկուին . եւ Ռուսիոյ բովանդակ մտաւորականութիւնը՝ յուզուած համակրութեան մը ապացոյցը տուաւ՝ Պ. Ջանշեանցի ուշիմ խնամքներով ի նպաստ Թուրքիոյ Հայոց խմբագրուած յիշատակարան-գրքին մէջ՝ մեր ժողովրդին կենսալիւր, քաղաքակրթիչ հոգւոյն առջեւ յարգանք եւ անոր ցաւերուն դիմացը կակիծ յայտնելով : Այս բոլորը պէտք է գիտնայ մեր ժողովուրդը : Եւ ոչ ոք կրնայ այնքան ամբարիշտ ըլլալ համարձակելու համար մտածել թէ ասոնք խօսք են միայն . խօսքը մեծագոյն գործն է, խօսքը ստեղծագործ ուժն է . քանի մը խօսքեր, քանի մը մեծ խօսքեր են որ աշխարհի երեսը փոխեցին, ու պիտի փոխեն : Այս բոլորը պէտք է գիտնայ մեր ժողովուրդը, ոչ թէ պղատոնական միսիթարանք մը գտնելու համար անոնց մէջ, այլ իր բռնելիք ուղղութիւնը ճշդելու համար :

« Ես ապահով եմ, կ'ըսէր օր մը ժողէս ինձի, որ ձեր դժբաղդութիւնը ձեզի օգտակար եղած պիտի ըլլայ . ձեզ չէինք ճանչնար, եւ հիմա կը դրաղինք ձեզմով, մարդկային թատերաբեմին վրայ՝ աւելի մօտ եկաք առաջին կարգին . հիմա

տարր մըն էք զոր հաշուի պէտք է առնել . ես չեմ ճանչնար մօտէն ձեր երկիրն ու ձեր ազգը , բայց կը կարծեմ որ ձեր աղէտքները նոյն իսկ ձեր մէջը բարերար փոփոխութիւններ պիտի բերեն , կորովը , հաւատքը , պայքարին սէրը , եղբայրակցական զգացումը պիտի շեշտեն ձեր մէջ , պիտի ազնուայնեն եւ զօրացնեն ձեզ : Կեանքին օրէնքն է . մարդկութիւնը ցաւով կը յառաջդիմէ : » Մեծ ատենարանին խօսքերը կը յիշեմ ոչ միայն իրենց հիանալի կերպով բարձր իմաստասիրութեանը համար , այլ մանաւանդ անո՛ր համար որ չափազանց ճիշդ են եւ խորաթափանց մեղի նկատմամբ :

Որովհետեւ՝ սանսուամէն անմիջապէս յետոյ , անխուսափելի տարբազարութեամբ մը , անձնական կրքերու տիրու բաղխումներ տեսնուեցան հոս ու հոն , որովհետեւ բազմախնդիրներու հրոս մը համաշխարհական գթութիւնը լրբաբար շահագործել ձգտեցաւ , որովհետեւ բարոյական անկման նշաններ երեւցան ու թուլացում մը , թունաւորում մը՝ մեր ժողովրդին այս կամ այն հատուածին մէջ , կարծողներ եղան թէ վերջնական անբարոյականացում մըն է որ մեզ համակեց , թէ ազգային աւանդական ամբողջ շէնքը քայքայուիլ սկսաւ : Եւ ահա , բաւական ատեն է որ շատեր կը յապաղին աղբիւններ քրքրելով , ժողովուրդը ինքիրմէ գանեցնելու մղղելով : Ասիկա ուրիշ բանի չի ծառայեր բայց եթէ սաստկացնել մեր մէջ արմատացած անտանելի թերութիւն մը , այն է ծայրայիտ յուստսութիւն՝ մեր մասին . ամենքս ալ կուլանք կ'ոլբանք հայ ծնած ըլլալուս . մեր ժողովրդին ամենէն սիրական գրողները երգիծաբաններն են , անոնք որ զինքը ծիծաղելի ու տգեղ կը ցուցնեն իրեն . « ուր հայ անդ վայ »ը մեր գլխաւոր առածը դարձած է : Իր թերութիւնները տեսնելը առաքինութիւն մըն է անշուշտ՝ ազգի մը ինչպէս անհատի մը համար . բայց իր թերութիւնները պրպտելու գործողութեան մէջ ուշանալն ու անկից ախորժիլը վտանգաւոր հիւանդութիւն մըն է : Եւ երբէք այնքան անիրաւ եղած պիտի չըլլայինք մի՛ միայն մեր թերութիւնները փնտրուելով , որքան այս վայրկեանիս ուր , ուշադիր եւ անկեղծ նայուածքի մը համար , հայ ցեղը , իր ամբողջութեանը մէջ , կը ներկայացնէ տեսիլ մը յուսատու եւ հիացման արժանի : Ժողէսն է որ իրաւունք ունի : Յաւը մեզ թօթվեց , մեզ մաքրեց ու ներքին ուժ մը փոխանցեց մեզի . կը բաւէ որ ազնիւ ձայները բարձրանան , գեղեցիկ օրինակները ի լոյս հանուին եւ մասնանիչ

ըլլուին ամենուն , ժողովուրդը , որ արդէն բընազգարար սկսած է ինքնանորոգումը , պիտի կարենայ գիտակցօրէն յառաջանալ լուսաւոր ու ամուր Զգումը մը մէջէն :

Հարուածին անմիջապէս յաջորդող ապշութիւնը հազիւ փարատած , ահա ամբողջ ազգին մէջ՝ ամէն կողմէ՝ կը յառնէ միահաղայն ոգեւորութիւն մը , բունն ու խանդոտ ինչպէս երբէք չէր տեսնուած : Եթա՛ հանրային ցաւի մը ազդեցութեան տակ՝ զարթումն է մեծ եղբայրակցութեան զգացման մը՝ ամէն տեղի , ամէն տեսակ Հայոց մէջ , որոնք առաջ անտարբեր , գրեթէ անձանօթ էին իրարու : Կովկասի Հայերը իրենց տաղանդը , իրենց գրամը կը շառլեն իրենց թրքահայ դժբաղդ աղգակիցներուն համար : Օտարութեան մէջ ցրուած Հայերը թմբութենէն կը սթափին , կը յիշեն , կը շարժին , կ'ուզեն օգտակար ըլլալ . նոյն իսկ Ռումանիոյ , Բոլոնիոյ մէջ , ուր Հայութիւնը , տեղական տարրին հետ նոյնացած , գրեթէ ջնջուած կը համարուէր , յուզիչ ձայներ կը բարձրանան , դէպի Մայր-Հնտանիքը բազուկներ կ'երկնան : Պուլկարիոյ , Եգիպտոսի Հայերը գրական , դպրոցական , ազգային կեանքի ջանքեր կը ցուցնեն : Ամերիկա , հո՞ծ ու կենդանի գաղթականութեան մը մէջ , գործունէութեան տենդ մը կը փրփրի , թերթ , թատրոն , լսարան , ամբողջ կեանք մը կը հաստատուի , եւ տաք իղձը՝ Ամբողջութեան կորովը աւելցնելու : Աշխատութեան փափաքը կը շեշտուի . ցեղին միտքը առաւել քան երբէք փայլուն ապացոյցներ կուտայ իր կենսականութեան . հո՞ւ Բարիզ , գիտութեան եւ գեղարուեստի մէջ , մերիններէն ոմանք կ'ունենան հոյակապ յաջողութիւններ , մարդկային մտաւորականութեան մէջ մեր ազգին տեղ մը կը բանան : Ժրաջան ուսանողութիւն մը , հակառակ ամէն զրկանքներու , բարձր արդիւնքներ կուտայ , հզօրապէս պատրաստուած սերունդ մը կը յուսացնէ վաղուան համար : Եւ հո՛ն իսկ , խեղճ սգաւոր երկրին մէջ , հազիւ հրդեհը անցած , դեռ մոխիրը չցնւած , կը տեսնենք անսահման ճիգ մը ինքնապահպանութեան , տենդազին ձգտում մը զարգացման , բարձրացման :

Չարքաշութեան ու տոկունութեան հրաշալիքով մը , բոլոր գաւառներուն մէջ , տաքնապներուն ամենէն զարհուրելիին գիմանալէ յետոյ , հայ ժողովուրդը , սուգերով ու վէրքերով բեռնաւոր , իր ստացուածքէն ու յաճախ տունէն զրկուած , կը յաջողի նորէն՝ իր ճկունութեամբ , յամառ կամքով , հոգեկան արութեան անսպառ

բղիստամուղը, վերականգնել՝ քար առ քար՝ քանդուած շէնքը : Այս գործին շատ տեղ մեծապէս նպաստած են եւրոպական բարեգործ ընկերութիւններ եւ օտար երկրի Հայոցմէ ուղղուած գրամական օգնութիւններ . բայց նոյն իսկ Եւրոպացիք, որ ականատես եղած են ընդի ժողովրդին ջանքերուն , սքանչացմամբ կը պատմեն այն ոգեւորութիւնը , այն խանդաղատանքը , այն կորովը զոր անի ցոյց կուտայ իր խախտած գոյութիւնը իր ուրոյն ուժերովն իսկ վերակազմելու մէջ : Այսօր , բացի մէկ քանի տեղերէ (Վան , Բաղէշ , Ջէյթուն) ուր պայքարը սաստիկ եղաւ , ուր ցեղերու գրգռուած ընդհարումը դեռ չէ դադարած , եւ ուր թշուառութիւնը դեռ խորին է , գրեթէ բոլոր հայկական գաւառներուն մէջ կեանքը վերսկսած է , ամենաստոյգ տեղեկութեանց համեմատ . Հայր նորէն ձեռք առած է արհեստները , վաճառականութիւնը , երկրագործութիւնը , կը շարունակէ երկրին արիւնն ու ջիւղը կազմել : Գերման վաճառականութեան տարածումը Փոքր Ասիոյ մէջ՝ որ կատարուելու վրայ է , երկաթուղիներու ցանցի մը հաստատման գրոյցը որ կը պտըտի , մեր այս անտեսական վերանորոգման ամենամեծ ու վերջնական ամբապնդում մը պիտի տան , եւ պիտի բերեն թերեւ՝ քաղաքակրթութեան ուժերուն անդիմադրելի եւ բնական տիրապետումով՝ խաղաղութիւնն ու հիմնական ապահովութիւնը ամբողջ երկրին մէջ :

Այս անտեսական վերանորոգման հետ , կը տեսնուի կրթական շարժում մը , տարօրինապէս լայնածաւալ եւ զօրաւոր . օտարներու բացած դպրոցներուն ու որբանոցներուն հետ մրցելու համար , մերինները ցոյց կուտան աներեւակայելի եռանդ ու անձնուիրութիւն . դպրոցները կը բազմապատկուին , կրթական գրութիւնը կը վերակազմուի , եւ , կարեւոր մանրամասնութիւն , աշակերտներու թիւը աւելի ստուար է հիմա քան կոտորածներէն առաջ : Կը բաւէ աչքէ անցընել Պոլսոյ թերթերուն գաւառական թղթակցութիւնները . երբէք այդքան հոգ ու խանդավառութիւն չէր տեսնուած կրթական գործին նկատմամբ . որոշ գաղափար մը տալու համար , կ'օրինակեմ մասնաւոր նամակի մը սա մէկ քանի տողերը . « Եղեսիոյ դպրոցը՝ որ ջարդէն առաջ հազիւ հարիւրի մօտ աշակերտ ունէր , այսօր չորս հարիւր յիսունէն անուր ունի . Խարբերդ , Խուլավանքի անդուգական որբանոցին հաստատուելէն ետքը , այս օրերս պիտի բացուի Մէզիրէի մէջ՝ առաջնակարգ վարժարան մը ,

մրցելու համար բողոքականներուն Եփրատ-Քուլէճին հետ . եւ ջանք կայ այնտեղ՝ բոլոր վարժարաններուն մէջ միութեան կապ մը հաստատել եւ ընդհանուր ծրարող մը վարել զանոնք : » Եւ անա ինչ որ կը գրէր Կաթողիկ Հայոց Պատրիարք Ազարեան՝ Հայր Շարմբեանի ուղղուած 4 փետրվար թուականով նամակի մը մէջ . « Լուսաւորչականները որ այնքան ծանրապէս վնասուեցան , ըմբռնեցին որ այս յօշոտուած ազգին ապագան ապահովելու համար , պէտք էր առաւել քան երբէք ուժգին կառչիլ դպրոցական գործին : Անհաւատալի փութաջանութեամբ կազմակերպեցին իրենց յատուկ յանձնաժողովը . եւ արդէն , քանի մը ամսէ ի վեր , ապշեցուցիչ կենսականութիւն մը ցոյց կուտան , հակառակ բազմապատիկ ու ծանր խոչընդոտներուն որոնք իրենց ճիւղերուն դիմացը կ'ելլեն : Իրենք այս ձեռնարկին իրագործմանը համար՝ կ'ընդունին գրամական ստուար օգնութիւններ , եւ մարդ իրօք զարմացած կը մնայ տեսնելով այն արգիւնքները զոր ձեռք կը ձգեն իրենց տքնութեանց յաջողմանը այնքան աննպաստ պայմաններու մէջ : Կարծես թէ խռովութեան այս վերջին տարիներուն մէջ իրենց կորսնցուցած ժամանակին տեղը լեցնել կուզեն , եւ դպրոցական գործին մէջ իրենց վերաշինութեան այս կրակոտ եռանդին վրայ կարելի չէ չսքանչանալ : »

Մերիններուն շոյալած այս ջանքին ու խանդակաթ խնամքին քով , օտարները կը շարունակեն առաջ տանիլ իրենց գործունէութիւնը . եւ ես անոնցմէ եմ որ , հայրենական աւանդութեանց համար Հայուն յամառ ու անձնազոհ հաւատարմութեանը վրայ հիմնալով հանդերձ , այլ եւս երկիւղ չունին օտարներու մարդասիրութեամբ քողարկուած կրօնական որսորդութեան նպատակներէն . հոս ու հոն կաթողիկոսութեան կամ բողոքականութեան պզտիկ յաջողութիւնները այլ եւս ինձի անկարող կը թուին ո եւ է կերպով ազգային ճշմարիտ միութիւնը խաթարելու : Եւ այդ տեսակէտով ալ Աղէտքը մեզի բերաւ բարերար արդիւնք մը . հասարակաց վտանգին առջեւ , ընդհանուր զժրաջրութեան հանդէպ , կրօնական տարբերութիւններէ՝ յառաջ եկած գժտութիւնները , որոնք արդէն մեղմանալ սկըսած էին ազգութեան աշխարհական եւ ընդարձակ ըմբռնումի մը մեր մէջ ալ հաստատմամբ , բոլորովին ցրուեցան ու փճացան : Եւ այսպէս , վնաս տալէ հետո , օտարէն մեր կրթական գործին եկած նպաստը՝ մեծապէս օգտակար է , ո-

րովհետեւ բարձրագոյն քաղաքակրթութեանց ոգին կը բերէ մեր խոնարհ ու զեռ անգիտակից տարրին մէջ, եւ բուն իսկ մեր կրթական գործունէութիւնն ալ մրցումով կը մտրակէ եւ բարւոքման կը մղէ :

Խանդավառ ջանքերու այս միահամուռ բողբոջման մէջ, միակ տխուր բացառութիւնը, պէտք է խոստովանել, Պոլիսն է: Թուրքիոյ Հայոց մտաւորական կեդրոնը՝ պղտոր լոյս մը կ'արձակէ այս վայրկեանիս: Դէպքերէն առաջ, կենդանութիւնը ամենարարձր աստիճանի մը հասած էր այնտեղ. Կեդրոնական Վարժարանը եւ Հայրենիք լրագիրը, դաստիարակութեան երկու վարաններ կը կազմէին այնպէս հզօր ու մաքուր ինչպէս Թուրքիոյ Հայերը զեռ չէին ունեցած: Այսօր ատոնց ստուերը կայ միայն Տփղոյն գրականութիւն մը, յետամնաց դադարներու հակում, թող պաշտպանութիւն ժողովրդին իրաւունքներուն, զեղծումներ ազգային հաստատութեանց մէջ, ոճիրներ Հիւանդանոցին մէջ, ողորմելի վիճակ մը դպրոցներու, ահա Պոլսոյ հայութեան կացութիւնը. եւ չենք զարմանար. հարուածը շատ սաստիկ եղաւ Պոլիս, եւ այնտեղի հայութեան ամենէն ընտիր հատուածը ստուար մեծամասնութեամբ անջատուեցաւ ու ցրուեցաւ. մնացողները խարխափանքի մէջ են զեռ: Բայց հոն իսկ, արդէն կը տեսնենք ծագիլը կորովի փափաքներու, առողջ ձգտումներու. կրթական գործը կը խլրտայ, թերթերը կը բազմապատկուին, սպասելով որ բարձրին ու կինդանութեամբ տողորուին՝ նոր ու առողջ ուժերու երեւմամբ: Եւ անտարակուսելի է որ պատրաստուելու վրայ եղող սերունդը, աւելի խանդով եւ աւելի գիտակցութեամբ համակուած, պիտի բարձրացնէ Պոլսոյ հայութիւնը իր մտաւորական կեդրոնի դիրքին, պիտի վերականգնէ դպրոցը եւ գրականութիւնը, եւ պիտի վերսկսի դաւաններուն հայութեան բարոյական շարժումը արծարծելու եւ վարելու դերը՝ որ իրն է:

Այս ամբողջը յուսահատութիւն ներշնչելու բնութիւն չունի: Որբերու, այրիներու, սգաւորներու ազգի մը ծոցէն՝ քայքայումին երկրորդ օրն իսկ ժայթքող այս խանդավառութիւնը, կեանքի այս կամքը, եւ այս ինք իր վրայ հաւատքը, կազդուրիչ երեւոյթ մըն են, որ կրնանայ սփոփել մեզ այն թշուառութենէն որուն մէջ ինկաւ մեր ժողովուրդը եւ ուր զեռ կը թապըլակի: Ժողովուրդ մը ոչինչ կորսնցուցած է երբ վառ պահած է իր հոգին: Հոգեկան ուժին

յաւելումը ինքնին պիտի բերէ նիւթական վերականգնումը: Երիտասարդութիւնը պարտք ունի տեսնել եւ ըմբռնել այդ երեւոյթը, եւ փոխանակ անձնական վէճերով ատեն կորսնցնելու, ջանալ որ հաւատքն ու խանդը ժողովրդին մէջ շեշտելու եւ զօրացնելու կարենայ նպաստել: Նոր գարապուխ մը կը բացուի մեզի:

Միծաղելի եւ աղետարեր է ունենալ անհիմ թիթեւ լաւատեսութիւն մը. բայց շատ աւելի վտանգաւոր է ինքզինքը փոտեցնել կանխակալ ու ծայրայեղ յոռետեսութեամբ: Վնասակար է յաւակնոտ երազանքներով փքանալ, վնասակար է ինքզինքը տեսնել իրականութենէն աւելի մեծ. բայց մահացու է ինքզինքը աւելի յոռի նկատել քան իրականը: Մարդ պէտք է իր անձը ճանչնայ՝ ինչպէս որ է. եւ, որքան ալ խոնարհ ըլլայ դիրքով, պէտք է որ հաւատք ունենայ իր արժէքին, իր ուժին վրայ, եւ յոյս ու կամք՝ աւելի առաջ երթալու: Մենք պիտի ուզենք որ թերութիւնները միշտ ցուցուին մեր ժողովրդին, եւ սխալներն ու ոճիրները չարաչար գատափետուին. բայց պիտի ջանանք որ, անձնաւորութեանց վրայ դանդաղելու եւ կուսակցական ճահիճին մէջ ընկղմելու տեղ, մեր թերութեանց ու սխալներուն աղբիւրները, անոնց արմատական պատճառները երեւան հանուին անկողմնակալ ոգւով, որպէս զի ժողովուրդը, փոխանակ զուր գրգռումներով բզբտուելու, կարենայ յստակ տեսնել եւ ինքզինքը սրբագրել: Բայց մանաւանդ պիտի ձգտինք ի վեր հանել ինչ որ կայ առողջ ու վեհ՝ մեր ժողովրդին հոգւոյն մէջ, անցեալէն ու ներկայէն ի լոյս պիտի բերենք ապացոյցներն անոր կորովեւ ու ազնուութիւնը վկայող. եւ մեր ջանքը պիտի ըլլայ մարդկային քաղաքակրթութեան ամենէն բարձր գեղեցկութիւնները ծանօթացնել ու ընտելացնել անոր, որպէս զի աւելի՛ լոյս, աւելի՛ ազնուութիւն, աւելի՛ արութիւն յառաջ գայ հայ հոգւոյն մէջ:

Զարգացնել ինքնաճանաչութիւնը, ցուցնել թէ մեր բոլոր թերութիւնները կուզան գիտակցութեան չքոյութենէն, զգացնել թէ փրկութեան մեծագոյն լծակը բարոյական կրթութիւնն է՝ զոր լուրջ հիմքու վրայ հաստատուած Դպրոցը եւ անկեղծութեամբ, ուսումնասիրութեամբ ու խանդով շինուած Գրականութիւնը միայն կրնան տալ մեզի, հարստացնել հայ միտքը մաքուր, կենսալիր, գեղեցիկ տարրերով, աշխա-

տիլ մանաւանդ որ մեր գրականութիւնը, բարձրագոյն արտայայտութիւն ցեղին հոգոյն, հետզհետէ ճոխանայ, պայծառանայ, ձեւացնէ տաճար մը վեհութեան ու շնորհի, որ կարենայ պատուոյ տեղ մը ունենալ Մարդկային Ոստանին մէջ եւ որմով հպարտանան մեր վազուան սերունդները, ջանալ վերջապէս որ ամբողջ ազգը, հակառակ ամէն պատուարի եւ անջրպետի, ամուր կապերով եղբայրանայ եւ ներգաշնակուի մեծ ազնիւ գաղափարի մը շուրջը, այն է կամքը մարդկութեան մէջ գեղեցկութիւն ու կեանք ծուցանող տարր մը ըլլալու, — աճաւանդ ինչ որ կը նկատենք նուիրական պարտքը մեր այսօրուան մտաւորական դասին, եւ այդ պիտի ըլլայ գործը որուն ԱՆԱՀԻՏ պիտի ձգտի նըպաստել :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ



ՄԱՀՈՒԱՆ ԱՐՀԱՒԻՐՔԸ



Երիտասարդ մըն էր հայ հօրմէ եւ աւստրիացի մօրմէ ծնած. հայրը արդէն՝ արտաքոյ կարգի բնաւորութեամբ մարդ մը . իր ազգակիցները խնդրով կը խօսէին անոր վրայ . կոշտ ձեւեր ունէր, քմահաճոյ էր, բայց խիստ ուսեալ եւ գաղափարներով սաստիկ յառաջադէմ. եւ որովհետեւ հայկական բժախնդրութեանց կարեւորութիւն չէր տար, անոր համար զայն գրեթէ խենթի տեղ դրած էին :

Վիեննա ըրած մէկ ճամբորդութեանը ատեն՝ կիտը հետ ծանօթացած էր :

Շուտ մը սոսանց մէկուն իմաց տալու տուտանացած եւ դարձած էր Պոլիս :

Մարինա զգայուն Վիեննուհի մըն էր, որուն համար կեանքը երաժշտութեամբ եւ բանաստեղծութեամբ միայն հանդուրժելի կը դառնար :

Պոլսոյ գեղեցիկ շրջակայքը պտոյտի ելած ատենը բանաստեղծներուն տողերը յիշելով անոնց պատկերներուն նմանութիւնը կը փնտռէր թէ՛ արեւուն ճառագայթներուն եւ թէ՛ Վոսփորին կապոյտ ալիքներուն մէջ :

Պզտիկ Պետրոսը որ հօրը անհոգ եւ մօրը ըզգայնիկ բնաւորութեան խառնուրդը ժառանգած էր, ազատ դաստիարակութիւն մը ստացաւ :

Երբոր քսանըհինգ տարեկան էր, Վիեննայի համալսարանէն փիլիսոփայութեան շրջանաւարտ ելաւ, վկայականներով ու պատիւներով . եւ

այդ փառքէն ա՛լ կշտանալով՝ աւելին չփափաքեցաւ . թերի ձգեց ուսումնասիրութիւնները, ձանձրացած էր . սկսաւ սիրոյ մէջ փնտռել այն տարօրինակ յուզումները որոնց գոյութիւնը կ'երեւակայէր :

Գեղեցիկ ճապուկ հասակը, արեւելեան աչոււրները, ոլորուն պիխերը, բաւական էին մատաղ օրիորդներուն սիրտը գրաւելու :

Պէտք չունէր յոգնութեան. քիչ ատենէն աղկէ ալ ձանձրացաւ . անբացատրելի մաղձոտութիւն մը լեցուց հոգին, եւ մահուան գաղափարը անհուն անուշութեամբ կը ներկայանար մտքին :

Չէր ուզէր անձնասպան ըլլալ. ի՛նչ հարկ կար. սակայն մահուան ճգնաժամուն ցաւերը զինքը կը հրապուրէին եւ գրեթէ հաճոյք մը կը համարէր հողեվարքի մը մօտ գտնուիլը :

Այդ խօլութեան լիկութենէն ազատելու համար որոշեց ամուսնանալ, եւ սիրուն աղջկան մը հետ նշանուեցաւ . կը ջանար իր դաժան տխրութեան դաճնութիւնը անոր քաղցրութեամբը ամոքել. բայց ի զո՛ւր :

Երբ նշանածին հետ կը խօսէր, իրեն այնպէս կը թուէր թէ յանկարծ աղջիկը կմախք դարձած իրեն կը նայէր . ձեռքէն բռնէր՝ չոր ոսկորներու ազդեցութիւն մը կ'ընէր . եւ սոսկալի փափաք մը զինքը կը լափէր այդ նազելի արարածին մահը տեսնելու :

Մեռնէ՛ր ան իր գրկին մէջ եւ վերջին շունչը իր բերնին վրայ փչէր, եւ աչքովը տեսնէ՛ր, եւ սիրականին օրհասը զննէր, անոր չարչարանքը :

Եւ փափաքին հասաւ. նշանածը յանկարծակի մեռաւ . սակայն երիտասարդը այնպիսի սրտակեղեք վիշտ մը իմացաւ որ կարծեց ա՛լ բժշկուած ըլլալ այդ հրէշաւոր ախտէն . նորանոր հաճոյից անձնատուր եղաւ :

Թղթախաղութեան գիմեց. բայց թէ՛ վաստակը եւ թէ՛ կորուստը զինքը անտարբեր կը ձգէր . գիշերները անկողին կը մտնէր հանգիստ քնքով կը ննջէր :

Մահուան երազը նորէն զինքը տանջել սկսաւ . կ'ուզէր չմեռնիլ, բայց անէացման ամբողջ ցրտութիւնը իմանալ :

Ճամբորդեց : Գնաց Իտալիա, թափառեցաւ ասղին անդին, հասաւ Հռոմ երբ գարուն էր :

Արեւը պայծառ կը փայլէր հռոմէական ջինջ կապուտակ երկնքին վրայ . ամէն կողմ ծաղիկները կը փթթէին . գեղջուկ աղջիկները ծիծաղեալ գէմքով՝ գլուխնուն գրած սպիտակ ու քա-

ուսուցիչ թաշկինակները ծածանելով՝ մանուշակի փունջեր կը ներկայացնէին :

Ինքը Պետրոս կարծես համ կ'առնէր այդ օգտափութիւնէն, կը կատակէր աղջիկներուն հետ եւ ձեռքը անոնց ուսին վրայ դրած՝ գրեթէ զանոնք համբուրելու չափ մօտեցած՝ ծաղիկները կը հոտոտէր :

Բայց աւերակները, հնութեան դիակները նորէն նորէն անոր մէջը մահուան գաղափարները արթնցուցին, զարհուրելի մղձաւանջներն ալ սաստկացան :

Օր մը Հոռոմ կը լողար պայծառ ճառագայթներու ներքեւ . սպիտակ արծանները ու հոյակապ շէնքերը յստակ յստակ կ'երեւային փայլուն արեւուն մէջը :

Կառքերուն շառաչը՝ երբ կ'անցնէին նեղ փողոցներէ՝ քաղաքին միօրինակ դղրդիւն մը կուտար . ուսմիկ ժողովրդեան երգերը կը բարձրային անդուլ անդադար . աղբիւրներուն ջրերը վէտ ի վէտ ցայտելով թանկագին քարերու հատիկներու պէս կը ցնցղկէին եւ ծիածաններ կը յօրինէին . կճեայ սիւներ, կիսափուլ աւերակներ, խառնուած նորակերտ կամ միջնադարեան շէնքերուն՝ բոլորովին նորանշան երեւոյթ մը կ'ընծայէին յաւիտենական քաղաքին :

Վեհ էր Հոռոմ, սակայն Պետրոսի սրտին՝ միայն անցեալ աներեւութացած բան մը կը յիշեցնէր :

Այդ տեղերուն վրայ ուր հին հոռոմայեցի կանայք իրենց զարդերով ժուռ եկած էին նազելով, դեռ կ'երեւային հիմունքը վաղեմի կործանած պալատներու :

Աւերակ բանտերը, ջերմուկները, յաղթական կամարները, անբաւ կեանքի մը վրայ կը խօսէին, որ ա'լ յաւիտեան շիջած էր :

Կոլոսէոնը, ուր մարդիկ սրախողխող կ'ըլլային՝ բիւրաւոր բազմութեան ահագին վայելք, հաճոյք, արբեցութիւն պատճառելով՝ հողին պղտորեց :

« Եթէ կարենայի, կ'ըսէր, ես ալ նախնեաց պէս վայելել մահուան բոլոր արհաւիրքը, հիւանդագին ցանկութիւնս պիտի յագենար :

« Ի՛նչ սոսկալի պէտք մըն է աս որ ամբողջ դարեր մարդկութիւնը չարչարեց : »

Գաղափար մը ունեցաւ :

Ինչո՞ւ չփորձէր այդ սարսափը որ զինքը հանգիստ չէր թողուր, այդ պէտքը գոհացնել գետնադամբաններուն տակ. այն ի՛նչ սարսուռ պիտի զգար այն տեղ . ուզեց առանձին այցելել զայն :

Պետրոս Վիեննացի բարեկամ քահանայէ մը յանձնարարական պիր ունէր Ս. Սգնէսի ժողովրդագրութիւն համար, ուրեմն դիւրութիւն կար այդ խորհուրդը իրականացնելու : Իբր թէ՛ մեծ զուարճութեան մը երթար, նոյն իսկ ցորեկը ակորժակով ճաշեց . շատոնց էր այդչափ մտքի հանդարտութիւն զգացած չէր, երբ քահանային ներկայացուց իր խնդիրքը՝ մեծապէս թախանձելով որ զայն կատարէ :

Յօժարեցաւ ան, բայց խստիւ ապապրեց շիտակ իր առաջ բացուած մէկ երկու սենեակներէն չչեղիլ :

« Մենք անդամ, ըսաւ, ատոր ծայրը չենք գիտեր . այս թոյլտուութիւնս այնչափ մեծ բան է որ յուսամ գոնէ ի փոխարէն իմ պատուէրս զգուշութեամբ պիտի կատարէք : »

Պետրոսի սիրտը սաստիկ կը տրոփէր երբ երկաթէ դրան բացուիլը լսեց :

Խոնաւ օդ մը նկուղին քարեղէն սեւցած սանդուխներէն վեր կը բուրէր . պահ մը բարձրացած մութ գոլորշիքէն ձեռքը բռնած ճրագին լոյսը սկսաւ ծածանիլ :

« Ուշադրութիւն, կրկնեց քահանան մէկ քանի լուցիկ դնելով անոր ձեռքը, ճրագը չմարի՛, բարի՛ ճանապարհորդութիւն, եւ մի՛ ուշանաք : »

Պետրոս սանդուխներէն վար իջաւ ու նեղ անցքի մը մէջ մտաւ . այդտեղ պատերը խոշոր քարերով հիւսուած էին եւ երկու հողի դժուարութեամբ պիտի կարենային անցնիլ . դամբանները հոտ՝ պատին մէջ տեղաւորուած էին . դարանին մէջ շինուած խոռոչներ էին ատոնք ուր կմախքները իրենց բնական երկայնութեամբ պառկած էին :

Մեռելական լուծեան մէջ դէպի վեր կը նային սպիտակ գանկերը . Մոմին ցուքը սողալով այդ դարաններուն վրայ ահուելի զոզոջութիւն մը կը սփռէր հոտ : Աչքը ուր որ դարձնէր խորին մթութեան մէջ մեռելոց ոսկորները կը տեսնէր, բայց դեռ հանդարտ քայլերով առաջ կ'երթար :

Սրտին բաբախումը դադրած էր :

Բառորդի մը չափ քալեց, հետզհետէ սենեակէ սենեակ փոխադրուելով, բայց իր փնտռած նորանշան զգացողութիւնները չէր գտներ :

Նստաւ :

Յանկարծ սրտին մէջ խռովութիւն մը սկսաւ : Մեռելներուն ցաւերը երեւակայեց, անոնց անծանօթ չարչարանքները . եւ մէկէն ի մէկ այնպէս թիւեցաւ իրեն որ այդ կմախքները կը կենդանանային :

Հազիւ կրնար ճրագը ձեռքին մէջ բռնել. ա՛յն-  
չափ կը սարսուար :

Ամբողջ մարմինը քրտինքէ թրջած, ծնկու-  
ները իրարու կը սեղմէր :

Հոս երկնցած կմախքները կենդանութիւն  
կ'առնէին՝ չէ թէ մարմնով ոսկորներովը միայն :

Ահա կը կանգնէին :

Անոնց փոս աչուրներէն փոսփոր կը բխէր եւ  
զլուխին բարձր բռնած՝ դարանին մէջ նստած՝  
կը ծիծաղէին ամէնքն ալ դեռու ծիծաղով :

Երկու կարգ աղուաներն իրար կը զարնուէին  
դողէ բռնուածի պէս :

Արիւնը երակներուն մէջ սառեցաւ, եւ ցուրտ  
խայթումներ թշերը խոցոտեցին :

Ուզեց ոտքի ելլել եւ հտ դառնալ, բայց ի  
զուր :

Սրունքները չէին շարժեր. կարծես արմատա-  
ցած էին սեւ խոնաւ հողին մէջը :

Կմախքները միշտ իրեն կը նայէին, փոսփորոտ  
ակնակապիճներով :

Ճերմակ աղուաներն սոսկալի կափկափիւն  
մը կը հանէին եւ անոնց միօրինակ խնդալը կը  
հնչէր :

Եւ յետոյ իբր թէ աշխարհէ դուրս ելած ըլ-  
լար, ինքզինքը օդային բան մը կարծեց :

Մեռելները զանի կը շրջապատէին, երթալով  
կը մօտենային, անա կը մօտենային եւ շունչեր-  
նին ծոծրակն ի վար կ'իջնար :

Անոնց չոր թաթերը գլխուն մագերը բռնեցին  
ու վեր քաշեցին, քաշեցին, կարծես զինքն ալ  
կ'ուզէին իրենց դարաններուն մէջ ամփոփել :

Ձարհուրելի ազազակ մը արձակեց ու մարած  
գետին ինկաւ :

Ժողովրդապետը եկաւ զանի ազատել. տես-  
նելով որ օտարականը կ'ուշանար, մոտառան-  
ջութեան մէջ ընկեր էր, վար իջեր եւ գտեր էր  
երիտասարդը՝ այդտեղ նուազեալ :

Երբ երկրորդ առաւօտուն իր մահճին մէջ ար-  
թընցաւ, իրեն այնպէս կ'երեւար որ անձը եր-  
կուքի բաժնուած, կէսը ողջ էր եւ միւս կէսը  
կմախք դարձած :

Հայելին նայած ատենը՝ միշտ երկու զլուխ  
կը տեսնէր, մին իրը եւ միւսը մեռելի մը որ կը  
ծիծաղէր աղուաները իրար զարնելով :

Երբ ձեռքը երկնցնէր, կարծես նոյնպէս ուրիշ  
ձեռք մը անոր քովը կ'երեւար. մարմինը կը-  
մախքի մը հետ միացած համարեցաւ :


Կմախքին հետ կը ճաչէր, կմախքին հետ կը  
քնանար :

Պետրոսի խելքը բոլորովին խանգարած չէր :

Գիտակից էր երազներուն զառանցութեանը :  
Բայց անհնարին կ'ըլլար ինքզինքը ազատել  
ատկէ :

Ոչ ոքի ուզեց խոստովանիլ զայն :

Բարից ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ



Ա.

Ե Ր Գ

Սիրո՛ւն գարուն, կանա՛չ գարուն,  
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.  
Դու մեզ բերի՛ր լաց ու արիւն —  
էլ ես ուրախ երգ չունեմ :

Երգում էի ջերմ կարօտով,  
Գովքըդ անում ամէն օր,  
Երբ մեր երկրում քո քաղցը հոտով  
Միշտ լցուած էր սար ու ձոր :

Երգում էի քնարս լարած՝  
Մեր կեանքի լոյս օրերում,  
Երգում էի բըլբուլ գառած՝  
Քանի վարդ կար հայ երկրում . . .


Ա՛խ, ի՞նչ սրտով երգեմ հիմիկ,  
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.  
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ,  
էլ ես ուրախ երգ չունեմ :

Մեր սուն ու տեղն — հող, աւերակ,  
Մեր լոյս-օրերն խաւարել .  
Մեր յոյսերը սեւ մոխրի տակ,  
Մեր զարդերը ծով դառել . . .

Ամպուլթուլսպ է եկել, պատել  
Խեղճ եղբորս սեւ կեանքին .  
Անվերջ լալուց արցունքն հատել,  
էլ վերջ չըկա՛յ տանջանքին . . .

Սիրո՛ւն գարուն, կանա՛չ գարուն,  
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.  
Դու մեզ բերի՛ր լաց ու արիւն —  
էլ ես ուրախ երգ չունեմ :

10 Մայիս 1897



Բ.

ԴԱՐՄԱՎԵՐՁԻ ԲԱՐՔԵՐԻՑ

«Մա՛հ Ջօլային . . . Թքի Ջօլայի վերայ . . .»

(Լուսագրեցից)

Տխո՛ւր մտքեր են ինձ յուզում այսօր —  
Այս ի՛նչ սրտամաշ դժուար ժամանակ  
Մեզ վիճակուել է ապրել — եւ անգոր՝  
Տեսնել չարութեան լկաի յաղթանակ . . .

Խիղճ , պատիւ , օրէնք՝ ոտքի տակ տուած,  
Մարդիկ ծաղրում են ազատ զգացմունք .  
Եւ ազգասէրի կեղծ դիմակ հագած՝  
Կոկորդիլոսի թափում արտասունք :

Եւ կոյր ամբոխի զայրոյթն ու յուզում  
Կորո՛ւստ է սպանում մտքին , տաղանդին .  
Որպէս պղտոր ծով , լափել է ուզում  
Դալար ափ դիմող արի՛ լողորդին :

Ձինամուլութեան ոգին աւերիչ  
Յանուն ազգային առաջդիմութեան ,  
Մարդասպան սրբով փշրում է գլբիչ .  
Անպարտին ճնշում երկաթէ շղթան . . .

Օ՛ , մեր լուսաւոր , գովա՛ծ դարավերջ ,  
Ո՛ւր է քո բաշխած լոյսը աշխարհին .  
Կեղծի՛ք , չարութի՛ւն , հալածա՛նք անվերջ —  
Ահա՛ քո աւանդն յետագայ դարին . . .

25 Մարտ 1898

Գ.

Պ Օ Յ Է Տ

(ՊՈՒՇԿԻՆ)

Քանի Ապոզոն չէ՛ կոչել երգչին  
Դէպի սրբազան ոգեւորութիւն ,  
Ունայն աշխարհի հոգերի միջին  
Թաղուած է պոյէտն անխանգ անաւրն .  
Չէ՛ հնչում նորա քրնարն ոգելից ,  
Ցուրտ թմբութիւն է հոգին ճաշակում .  
Եւ , գուցէ , չնչին շատ էակներից  
Ամենից չնչին նա՛ է աշխարհում :  
Բայց հէնց համում է արթուն , յուշազգաց

Երգչի ականջին բարբառն երկնային .  
Որպէս մի արծիւ քրնից սթափուած՝  
Ցնցվում է խկոյն պոյէտի հոգին :

Եւ նա , անհաղորդ՝ ծափին ու գովքին ,  
Տխրում , տրտմում է զուարճ աշխարհում .  
Ամբոխի պաշտած եւ ոչ մի կուռքին  
Երբէք պոյէտը գլուխ չէ խոնարհում .  
Եւ կարծես կեանքի խորթ , դաժան զուակ ,  
Երգով , յոյզերով կուրծքը ալեկոծ ,  
Փախչում է նա միշտ գէպի լայնարձակ  
Դաշտեր , անապատ , թաւ անտառի ծոց :

(Թարգմ. ռուս.)

25 Հոկտ. 1898

Ա.Ղ.Ե.ԲՍԱՆԴԻՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Մոսկուտ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր գրականութիւնը մենք իսկ չենք ճանչնար ամբողջապէս եւ ինչպէս որ պէտք է : Մեր նախնիքներուն ձգած ձեռագիրներէն հրատարակուած են միմիայն պատմական եւ կրօնական գործերը , այն պարզ պատճառով որ հրատարակողները վանականներ եղած են ընդհանրապէս : Նոյն իսկ այդ պատմական եւ կրօնական գործերը փակ կը մնան հայ ժողովրդին կամ տարտամօրէն ծանօթ են անոր , որովհետեւ անոնք իրենց գրաբար բնագրովը գոյութիւն ունին լոկ , եւ ժողովրդին մեծամասնութիւնը գրաբար չի գիտեր եւ չի կրնար գիտնալ :

Խորենացին , Փարպեցին , Եղիշէն , Լաստիվերտացին , Բիւզանդացին , Նարեկացին , Շնորհալին , Լամբրոնացին խորհրդաւոր ստուերի մը մէջէն երեւցած են միշտ մեր ժողովրդին , եւ գրաբար գիտցող փոքրաթիւ հայեր միայն մօտէն ճանչցած եւ վայելած են անոնց գործերը : Ստուար զանգուածը որ ազգը կը կազմէ՝ անոնց վրայ տեղեկութիւն ունի ազգային պատմութեանց կամ հատուածական ուսումնասիրութեանց մէջ անոնցմէ յիշուած կտորուանքներէն : Կենսական պէտք մը լրացուած կ'ըլլար եթէ հայ մտքին այդ վաղեմի մշակներուն արտադրութիւնները արդի հայութեան ներկայացուէին՝ այսօրուան հայերէնին վերածուած :

Ռուսահայերը այս պէտքը առաջին զգացողները եղած են . իրենց բազմարդիւն Հիւսիսափայլին մէջ , Նաղարեան եւ Նալբանդեան քանի քանի անգամ յայտնած են հին մատենագրու-

Թեան կարեւոր գործերը աշխարհաբարի վերածելու փափաքը . եւ արդէն փափաքն իրականացուցած ալ են, մէկը թարգմանելով Լամբրոնացոյն Տարսոնի ճառը, միւսը՝ Փարպեցոյն նամակն առ Վահան Մամիկոնեան . անկից ի վեր Տ. Խորէն Ստեփանէ այդ ճամբուն մէջ ամենէն կարեւոր քայլն առած է՝ թարգմանելով Խորենացոյն պատմութիւնը: Արեւմտեան Հայոց մէջ, դեռ ոչինչ փորձուած է այդ ուղղութեամբ. եւ սակայն ի՞նչ շահեկան աշխատութիւն մը պիտի ըլլար հին մեծաշուք լեզուին այդ անդին էջերը մեր արդի ճկուն ու գողտրիկ լեզուին վերածել եւ տալ ամեն կողմ ցրուած ժողովրդին որպէս զի ամէն մէկ հայ անհատի կարելի ըլլար ազգային հին կեանքն ու հին միտքը մտերմապէս ճանչնալ: Ինչո՞ւ ամէն հայ չունենայ Եղիշէ մը, Փաւստոս մը, Խորենացի մը իր ձեռքին տակ, իր բարձին մօտ, իրեն մատչելի, իրեն ընտանի լեզուով: Յուսալով որ Միսիթարեան Հայերը, որոնք ամենէն աւելի հեղինակութիւն ունին եւ միջոց՝ այդ այնքան դժուարին որքան սիրուն գործը կատարելու, ուշադրութիւն կը դարձնեն այս կարեւոր պահանջին, մենք պիտի ջանանք Անահիթին մէջ մեր նախկին մատենագիրներէն գեղեցիկ հատուածներու թարգմանութիւններ հրատարակել մերթ ընդ մերթ, ինչպէս արդէն փորձած ենք Պոլիս՝ Ծաղիկ հանդէսին մէջ՝ Նարեկացոյն մէկ քանի ազօթքներուն թարգմանութեամբ, որ շատ սիրալիւր ընդունելութիւն գտաւ հասարակութենէն: Կը կարծենք որ այս ձեռնարկը կընայ հիմնական ազդեցութիւն ունենալ մեր արդի գրականութեան վրայ, անոր աւելի մօտէն փոխանցելով մեր տոհմային վաղեմի ոգին ու ոճը, բուն հայ գոյնն ու ճաշակը:

Միայն գրաբար ընազրով հրատարակուած ու կիսովին ծանօթ՝ պատմական եւ կրօնական գործերը հանրածանօթ դարձնելու գործէն զատ, կայ ուրիշ գործ մը, նոյնչափ եւ թերեւս աւելի կարեւոր. այն է երեւան հանել ինչ որ կայ զուտ գրական, եւ աշխարհական, ազատ ոգով գրական՝ մեր հին մատենագրութեան մնացորդներուն մէջ . ընդհանրապէս մեր նոր սերունդները անտարբեր մնացած են մեր նախկին գրականութեանը, այն տարածուած կարծիքին վրայ հիմնուելով թէ այդ գրականութիւնը միմիայն կրօնական եւ ժամանակագրական է եւ գեղեցկագիտական ո եւ է հրապոյր չունի. այդ նոր սերունդները ամբողջապէս սնած են օտար գրականութիւններով, եւ ատոր համար է որ արդի հայ

մատենագրութիւնը, արեւմտեան Հայոց մէջ մանաւանդ՝ մեծ մասամբ ոգւով ու ձեւով ծայրայեղօրէն օտար եւ նմանողական է, եւ չունի տոհմային գրոշմը, տեղային ու ցեղական համուհոտը՝ որ ճշմարիտ կենդանի գրականութեանց հիմը կը կազմէ:

Այդ միօրինակութեան մեղադրութիւնը անիրաւ է եւ սխալ: Անշուշտ ոչ բազմաթիւ, բայց կան հինէն մնացած ձեռագիրներուն մէջ՝ զուտ գրական շահեկանութիւն ունեցող, աշխարհական զգացումներ թարգմանող կտորներ. այսպէս՝ անհամար երգեր սիրոյ, խնջոյքի, մահուան . նկարագրութիւններ քաղաքներու, երկիրներու. դիւցազնական կամ պատմական քերթուածներ, երգիծանքներ եւլն . ասոնց մեծ մասը գրուած են խառնակ գրաբարով մը կամ գրեթէ բոլորովին ռամկական հայերէնով մը: Մեր նոր հայերէնին ու մեր նոր գրականութեան արմատներն են անոնք, եւ արդի հայ գրողներու համար զանոնք ճանչնալն եւ ուսումնասիրելը մատենագրական դաստիարակութեան էական մէկ տարրը պէտք է կազմէ:

Հայ բանաստեղծութեան այդ հատակտորներէն հանդէսներու կամ լրագիրներու մէջ հրատարակուած են երբեմն կցկուտը էջեր . բայց դեռ, բացի Բնար Հայկականին կամ Հ. Ա. Տէվկանցի Հայերգին պէս մասնական հաւաքումներէ, մեր ազգային բանաստեղծութեան ամբողջական եւ կանոնաւոր հրատարակութիւն մը չէ երեւցած: Պիտի ջանանք այդ պակասն ալ մասամբ լրացնել՝ Անահիթի մէջ երբեմն երեւան բերելով մեր ժողովրդին հոգւոյն այդ ուղղակի եւ կենդանի բացատրութենէն հատուածներ:

Այս անգամ կը սկսինք աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակել սիրուն արձակ քերթուածի մը, որուն հեղինակն է Երեւանցի Զաքարիա Մարգար Խոճենց անուն բանաստեղծ մը եւ որուն տիտղոսն է իր գրաբար ձեւով « Բարառական դիմառնութիւն վարդոյն եւ սոխակին »: Այս գործը զերծ չէ կրօնական ոգիէն. աստուածաբանական թաքուն հիմի մը վրայ հաստատուած է. սիրոյ պատկերներով՝ Հոգւոյն եւ Աստուծոյ միտքի քական տարփանքը կը ձրգտի այլաբանել (ինչպէս հեղինակն իսկ կը բացատրէ իր « Զեկուցմունք » ին մէջ). բայց պատմութիւնը արեւելքի ամենէն սիրական, ամենէն անուշ աւանդութիւններէն մէկուն վրայ կ'որոշուի, այն է գաղափարական տարփանքը Վարդին ու Սոխակին, զոր մանաւանդ պարսիկ բանաստեղծները այնքան քնքուշ գորովանքով եր-

գած են : Մեր քերթողը պարսկական զրոյցը առած , ճոխացուցած , զայն զմայլելի կերպով մարդկայնացուցած , անկից ամբողջ վիպասանութիւն մը հանած է որ իր միամիտ բայց ըզգայուն ոճովն ու գերազանցօրէն արեւելեան ոգւովը մեծապէս շահեկան է : Բիչ անգամ՝ մարտիրոս ու գիւցազն սիրոյն հոգեբանութիւնը այսքան փափուկ դժերով արտայայտուած է . եւ միատիքական խորքը՝ անուշ ու հեռուոր հրապոյր մը կ'աւելցնէ քերթուածին հեշտալիր պատկերին , ինչպէս վերածնութեան առաջին շրջանի Իտալացի քերթողներուն մէջ՝ որոնք զեղեցկութեան սէրն ու Աստուծոյ սէրն իրարու կը հիւսէին : Դժբաղդաբար որոշ չի գիտցուիր թէ ո՞ր դարուն ապրած է այս Մարգարը , ի՞նչ կեանք ունեցած եւ ուրիշ ի՞նչ գործեր արտադրած է : Հաւանական կը թուի որ ժ.Ձ. ժ.Ի. դարերուն ապրած ըլլայ , եւ յայտնի է որ , Երեւանցի ըլլալով , պարսկագէտ եղած է , եւ ծանօթ՝ պարսկական բանաստեղծութեան , որուն ազդեցութիւնը կը զգացուի այս քերթուածին մէջ : Վարդ եւ Սոխակին գրաբար ընագիրը արդէն սպուած է Ս. Բեթերսպուրիի մէջ , բայց այսօր սպառած եւ անգտանելի (1) . երկրորդ սուրբութիւն մը՝ աշխարհաբար թարգմանութեանը հետ միացած՝ գործ մըն է Չերմապէս յանձնարարելի :

Ա. 2.

### ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒԽԿ

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Արեւելքի կողմերը , Ասիոյ մասին մէջ , երկայն ատենէ ի վեր Նոր-Օր կամ Գարնանամուտ մեծ արքային ազգական՝ Թաղաւոր մը կար շատ քաղցրաբարոյ , առատաձեռն ու բարերար , Գարուն-Թաղաւոր անունով :

Ասի ունէր աղջիկ մը օժտուած սքանչելի գեղեցկութեամբ , որուն նմանը երկրիս վրայ տեսնուած չէր . կարծես թէ թագուհին էր բոլոր ծաղիկներուն , եւ անունը կ'ըսուէր Վարդ-

(1) «Վարդ եւ Սոխակ»-ին իտալերէն թարգմանութիւնը հրատարակած են Վենետիկի Միսիթարեանները 1879ին , եւ Ֆրանսերէն թարգմանութիւն մը , Յէլե անեաշակ , հայագետ ԼըՎայեան տը Ֆլորիվալի ձեռքով լոյս տեսած է 1833ին :

Մնթառամ : Հայրը զայն շատ կը սիրէր , եւ կը խորհէր միշտ թարմ ու զուարճ պահել զայն , ինչպէս որ կը վայլէր անոր չքնաղ գեղեցկութեանն ու դշխոյական բարձր աստիճանին :

Ուստի կառոյց քաղաք մը Վարդարան անունով , հիանալի յօրինուածութեամբ ու վայելուչ տեսքով , որուն հաւասարը արեւուն տակ տեղ մը գոյութիւն չունէր : Եւ որպէս զի այլասեռ օտարականներէն ո՛չ մէկը մուտք գտնէ հոն , ամբողջ քաղաքը պարսպեց սպիտակ յասպիս քարով . եւ միայն մէկ դուռ մը ձգեց ձորի մը մէջ՝ գեանի հաւասար , յորդանոս գետի մը վրայ որ քաղաքէն զուրս կ'ելլէր . այնպէս որ եթէ մէկուն հարկ ըլլար զուրս ելլել կամ ներս մըտնել , պարտաւորուած էր սուղակի պէս ընկղմելով լողալ ու անցնիլ . հոն ալ կանգնեց Բարձրուղէ-Նոճի անուն հաւատարիմ բարապետ մը՝ մշտադալար սաղարթներով զարդարուած , առանց որուն միջնորդութեան ո՛չ մէկը կրնար քաղաքը մտնել :

Յետոյ անոր մէջ բազմաթիւ գունդեր կարգեց սիզաւէտ մարզերու , տասնապետներով , հարկւրապետներով եւ սպարապետներով , գեղեցիկ կարգաւորութեամբ շարադասուած՝ ինչպէս նորարողը թոյսեր , ծառեր ու տունկեր : Անոնց հետ մէկտեղ , ծաղկափթիթ երկինքանց զարդերով պճնուած շատ մը գործակալներ եւ գեղափայլ օրիորդներ եւ նաժիշտներ պատրաստեց զանազան պաշտօններու համար , որպէս զի ամէն հարկաւոր սպասաւորութիւն մատուցանեն մեծ դշխոյին :

Եւ երբ ամէն պարագաներով պատրաստուեցաւ Վարդարան քաղաքը , Գարուն թաղաւորը իր Վարդ-Մնթառամ մանկուհի դշխոյ զուարթ արքայական աթոռը բազմեցուց , հրամայելով զօրքերուն ու զօրապետներուն , գործակալներուն եւ օրիորդներուն որ հպատակին անոր եւ ծառայեն մեծ հնազանդութեամբ :

Դշխոյին պալատին դուռը կեցուց՝ իբրեւ յատուկ պահապան՝ Փուշ-Դաշունակիր անունով զինակիր մը , չարագործներուն դէմ զգուշութեամբ հսկելու համար , որպէս զի աղէտք մը չպատահի անոր :

Բ.

Վարդը , ղեռաբողջով մանկութեան հասակէն թաղաւորական աթոռը բազմած , ինքզինքը տուաւ խրախճանական հրճուալի զբօսանքներուն՝ իր օրիորդներուն հետ ուրախութեան խընջոյքներ ընելով միշտ :

Առտու մը կանուխ , իր փառաւոր մեղուչե-  
րանց պատմութեանը հազնելով , եւ գարնան ցօղի  
նման մարգարտաշար եւ ամենայն օղերը դնե-  
լով ու քայլերը գլխուն եւ լանջքին , հրամայեց  
Սրտաղովիչ-Աղբիւր նաթշտին որ իր ամենավճիտ  
հայելին մատուցանէ . անոր մէջ իր դէմքին գե-  
ղեցկութիւնը դիտելով , ապշեցաւ մնաց , ու ըս-  
քանչացմամբ գոչեց « Ա՛խ , ի՞նչ անբաղդա-  
տելի գեղեցկութիւն եւ ի՞նչպիսի վայելչա-  
կան տեսք է որ Արարիչն ինծի շնորհեր է . ար-  
գեօք իմ նմանս կը գտնուի՞ երկրիս վրայ , թէ  
ես եմ միայն տէր այս չքնաղութեան . չէ՛ , չեմ  
հաւատար որ ինծի պէս չքնաղ ու գեղեցիկ ու-  
րիչ մըն ալ գտնուի . » եւ այս ըսելով այնչափ  
մեծամտեցաւ որ ա՛լ չկարենալով համբերել , իր  
Զեփիւռ սուրհանդակը կանչեց եւ հրամայեց ա-  
նոր շուտով երթալ եւ աշխարհիս մէկ ծայրէն  
միւսը պտըտիլ եւ նրբագին հետազօտութեամբ  
որոնել երկրիս ամէն մէկ խորչն ու անկիւնը ,  
տեսնել թէ իր գեղեցկութեանը բաղդատուելիք  
մէկը կը գտնուի՞ եւ հաւաստի լուր մը բերել ի-  
րեն : Սուրհանդակը հնազանդելով շուեց ամենայն  
արագութեամբ եւ սլացաւ արեւելքէն արեւ-  
մուտք , հիւսիսէն հարաւ , բոլոր քաղաքներն ու  
քնակութիւնները , դաշտերն ու լեռները , երկրիս  
ամէն մէկ խորչն ու անկիւնը , ծովն ու ցամա-  
քը , Չուրիս վրայ եւ օղին մէջ . եւ ուրտեղէն  
որ անցնէր , մանրագին նայուածքով կ'որոնէր .  
եւ անոր նման ոչ մէկը գտնելով , դարձաւ իր  
տիրուհւոյն քով , անոր հաշիւ տալու :

Գ.

Անտառի մը մօտէն անցած միջոցին , Զեփիւռը  
լսեց երաժիշտ մը , որ չափազանց քաղցրանը-  
ւաղ ձայնով սիրոյ երգեր եղանակելով , անտա-  
ռին արձագանգները կը հնչեցնէր . քիչ մը ականջ  
դնելով , այնպէս սաստիկ յափշտակուած զմայ-  
լեցաւ որ իր սրբնթաց ոտքերը՝ թուլցած՝ քայլ  
մը առաջ չկրցան երթալ :

Հարկադրուեցաւ անտառը մտնել եւ տեսնել  
թէ ո՛վ է այդ երաժիշտը . եւ տակաւ առ տա-  
կաւ յառաջանալով , տեսաւ անկիւն մը տխեղծ,  
ողորմելի , նիհար եւ անզօր ուղքամերկ մէկը ,  
որ ոչ աջ եւ ոչ ձախ կը նայէր , այլ անդադար  
աստանդական ոստոստելով սիրոյ երգեր կ'եղա-  
նակէր : Քանի մը ժամ մտիկ ընելէն ետքը ,  
մօտեցաւ անոր եւ յարգանքով բարեւելով զայն՝  
ըսաւ . « Ո՛վ սիրահար երիտասարդ , կ'աղաչեմ ,  
ըսէ՛ ինծի , ո՛վ ես դուն եւ ո՞րտեղէն ես , եւ

ի՞նչ է քու անունդ , եւ որո՞ւն այսքան սիրա-  
հարուած ես որ այդպէս ըղձեռանց սրտով եղա-  
նակիդ ձայնովն անտառը կը հնչեցնես , եւ ին-  
չո՞ւ այսպէս տխեղծ ու ողորմելի ես դարձեր .  
կը խնդրեմ , մի՛ ծածկեր ինձմէ սրտիդ կիրքը ,  
վասն զի իմ սիրտս կը վկայէ որ դուն ազնուա-  
կան արիւնէ սերած մէկն ես եւ քու խղճալի  
տեսքը զիս կը տխրեցնէ ու քեզի ցաւակից  
կ'ընէ : »

Երաժիշտը պատասխանեց . « Ո՛վ գթասիրտ  
ու բարեբարոյ մարդ , որովհետեւ ողորմելի թա-  
փառական պանդխտի մը ցաւակից ըլլալով՝ անոր  
որպիսութիւնը հարցուցիր , քեզի պիտի ըսեմ  
ո՛վ ըլլալս եւ պիտի յայտնեմ սրտիս գաղտնիքը :  
Ես մեծ թագաւորի մը զաւակ եմ , ազատու-  
թեան մէջ ծնած . եւ անունս է Սոխակ Սիրա-  
հար : Ծնողքս զիս պարկեշտութեան եւ ազա-  
տութեան մէջ մեծցուցին . բայց հիմա դերի եմ ,  
սիրոյ անխզելի շղթաներովը կապուած : Վասն  
զի երբ չափահաս եղայ , սիրտս հզօր սիրոյն  
բորբոքեալ հնոցը ինկաւ , եւ սիրահարուեցայ  
երեւակայական գեղեցկութեան մը զոր չեմ տե-  
սած ու չեմ ձանձնար , որուն ոչ անունը դիտեմ  
ոչ ալ ինչպիսի մէկն ըլլալը . բայց միայն անոր  
գաղափարական սէրն ու երեւակայութիւնը սիր-  
տըս կ'այրէ ու կը առչորէ , այնպէս որ ա՛լ չկր-  
նալով համբերել , թողուցի ծնողքս ու ընտանի-  
քըս , տունս ու ժառանգութիւնս , եւ լեռ ու  
դաշտ ինկած՝ կը փնտռեմ իմ սիրոյս առարկան .  
եւ որովհետեւ չկրցայ զայն գտնել ու ձանձնալ ,  
աշխարհէ քաշուած՝ այս անմարդաբնակ անտա-  
ռը կը բնակիմ , անօթի , ծարաւ ու մերկ , եւ  
ամէն հաճոյքէ հրաժարած , հոս կ'ապրիմ առանց  
ոչ մէկ միսիթարութեան . ուրիշ բան չեմ մտա-  
ծեր , բայց միայն գիշեր ցերեկ սիրոյ երգեր եւ  
դանակելով օրերս կ'անցընեմ , յոյս ունենալով  
որ օր մը իմ բաղձալիս տեսնելու եւ սրտի ան-  
դորրութիւնը գտնելու բարեբաղդութեանը պիտի  
հասնիմ : Ահա քեզի ըսի իմ ամբողջ որպիսու-  
թիւնս . կը խնդրեմ ուրեմն որ դուն ալ ինծի քու  
ո՛վ ըլլալդ յայտնես եւ թէ ի՞նչ պաշտօնի մէջ  
կը գտնուիս եւ թէ ի՞նչ պատճառով այս անա-  
պատացեալ անտառին մէջ կը ձամբորդես ու  
կ'անցնիս : »

Սուրհանդակը պատասխանեց . « Անունս Զե-  
փիւռ է եւ սուրհանդակն եմ Գարուն թագաւոր-  
ին աղջկան՝ Վարդ-Անթառամ կոչուած մեծ  
դշխոյին , որ Վարդարան վայելուչ քաղաքը կը  
բնակի : Այս թագուհին բոլոր արարածներուն  
ամենէն չքնաղն ըլլալով՝ ուզեց զիսնալ թէ բո-

վանդակ աշխարհիս մէջ իրեն նման գեղեցիկ մը կը գտնուի՞, հրամայեց ինծի տիեզերքին չորս ծայրը երթալ ու երկրիս ամէն մէկ խորշն ու անկիւնը պտըտիլ, եւ նրբանկատ քննութեամբ սրտնել թէ անոր բաղդատուելիք ուրիշ մըն ալ կա՞յ. այս հրամանին համեմատ աշխարհիս մէկ ծայրէն միւսը պտըտեցայ, բայց անոր նմանը չգտայ, եւ հիմայ կը գտնամ իրեն հաշիւ տալու : »

Սուրհանդակին խօսքերը լսելով, Սոխակն խկոյն յորդեռանդ սիրով ճոխացաւ եւ կարծես ինքիրմէ զուրս ելլելով՝ ա՛լ աւելի պերճաձայն սկսաւ եղանակել եւ երգել. եւ որպէս թէ վաղեմի սիրահարն ըլլար Վարդին, անոր անունովը երգեր յորինելով մեծ հրճուանքով գետինը կը թաւալէր, նորէն ոտքի կ'ելլէր, եւ քաղցրաձայն բարբառով անտառը կը հնչեցնէր :

Այս տեսնելով, Զեփիւռը զարմացաւ եւ ըսաւ. « Ուրեմն զուն առաջուց լսա՞ծ էիր Վարդին անունը եւ կամ տեսա՞ծ էիր զայն, որ այդքան վառեցար անոր սիրովը : »

Սոխակն ըսաւ. « Ո՛չ անունը լսած էի, ո՛չ ալ զինքը տեսած էի. բայց քու խօսքերէդ այնպիսի անուշահոտ բուրմունքներ քիմքս լեցունեցան որ իսկոյն սիրտս վկայեց թէ ան է իմ սիրելիս որուն սիրովը այսքան ատենէ ի վեր կ'այրիմ ու կը մրկիմ : »

Զեփիւռն ըսաւ. « Շատ դիւրաւ ինքզինքդ կը համոզես. բայց ան դեռ քեզ չի ճանչնար եւ զուն չես կրնար անոր ընտելանալ դիւրութեամբ : »

Սոխակը ըսաւ. « Սէրը զիս շուտով կը ծանօթացնէ. եւ եթէ չընտելանամ, ինծի համար բաւական է սրտի համակրութեան սէրն ունենալ եւ անոր անունը յիշելու մխիթարութիւնը : »

Զեփիւռն ըսաւ. « Ի՞նչ օգուտ կունենաս մինակ քուկին սիրովդ ու համակրութեամբդ, եթէ ան քու սիրոյդ եւ համակրութեանդ ծանօթ չըլլայ : »

Սոխակն ըսաւ. « Միթէ զու չե՞ս գիտեր սիրոյ զօրութիւնը. վասն զի եթէ անոր քով ինծի համար համակրութիւն գոյութիւն չունենար, այնպէս սէրս չէր բորբոքեր՝ միմիայն անոր անունը լսելով, առանց զինքը տեսնելու. ճշմարիտ սիրողին վրայ սիրոյ ներդրածութիւնը ա՛յնքան ազդու է որ համակիր սիրելին մազնիսի պէս իրեն քաշելով ինքզինքը կը ծանօթացնէ եւ սիրել կուտայ անոր : »

Զեփիւռն ըսաւ. « Նորէն կ'ըսեմ որ զուն ամէն բանի ելքը դէպի բարին կը յուսաս. անիկա

աստիճանով քննէ շատ բարձր է, եւ քեզի համար դժուար է անոր քաղաքը մտնել : »

Սոխակն ըսաւ. « Սէրը ամէն բանի կարող է. բարձր կը խոնարհեցնէ, հեռաւորը կը մօտեցնէ եւ անկարելին կարելի կ'ընէ : »

Զեփիւռն ըսաւ. « Շատ նեղ եւ անձուկ է ճամբան, եւ զուն անզօր ըլլալով թերեւս չկարենաս տոկալ : »

Սոխակն ըսաւ. « Մնոր ճամբուն վրայ մուտնիլը ինծի կեանք կը համարիմ : »

Զեփիւռն ըսաւ. « Շատ խիստ պահապաններով շրջապատուած է ան, այնպէս որ նոյն իսկ եթէ հոն հասնիս, անոնցմէ անհնարին տանջանքներ պիտի կրես : »

Սոխակն ըսաւ. « Դուն չե՞ս գիտեր որ կատարեալ սէրը վախը մէկդի կը նետէ. ուստի ոչ մէկ տանջանք ու վիշտ կրնայ զիս բաժնել անոր սէրէն : »

Սուրհանդակը, անոր հաստատամտութիւնը տեսնելով, ըսաւ. « Կը տեսնեմ որ զուն կա՛մ ունայն սիրով ցնորած ես եւ կա՛մ պարծենկոտին մէկն ես, որ այդքան բարձր կը ձգտի. իսկ եթէ հաւատարիմ սիրահար ես, թող Տէրը սրտիդ համեմատ տայ քեզի : » Այս լսելով թողուց ու գնաց :

Քաղաքը հասնելով եւ դշխոյին ներկայանալով, հաւատեց անոր թէ բովանդակ աշխարհի մէջ ո՛չ մէկ տեղ մը իրեն բաղդատուելիք գեղեցիկութիւն մը կը գտնուէր. պատմեց նաեւ ամէն ինչ որ տեսած եւ լսած էր, եւ մանաւանդ ինչ որ խօսած էր սոխակին հետ՝ մի ըստ միոջէ հաղորդեց. Վարդը շատ ուրախ եղաւ իր սրտին մէջ, բայց բան մը չըսելով՝ նորէն իր օրիորդներուն հետ ինքզինքը հրճուանքի եւ զբօսանքի տուաւ :

Դ.

Սուրհանդակին մեկնելէն ետքը՝ ողորմելի սոխակը՝ սիրոյ բորբոքեալ հնոցին մէջ ա՛լ աւելի իյնալով եւ ա՛լ չկրնալով դիմանալ, որոշեց ճամբայ ելլել, Վարդարան քաղաքը երթալ, յուսալով որ հնարքով մը ներս կը մտնէր եւ իր քաղցրանուագ ձայնոյն ամենաչքնաղ թագուււոյն կը ծանօթանար :

Շատ մը ճիգերէ եւ տառապանքներէ յետոյ, հաղիւ հազ հասաւ մարդագետին դաշտ մը խիստ հրճուալի. եւ հեռուէն տեսնելով գեղաչէն պարիսպը քաղաքին, անձառելի ուրախութեամբ լեցուած՝ մօտեցաւ որ դրան մուտքը գտնէ :

բայց տեսաւ որ ո՛չ թուշունն իր թեւով, ո՛չ օձը սողալով կրնային ներս թափանցել . այլ միայն յորդանոս գետէ մը՝ որ քաղաքէն կ'ելլէր եւ արգասաբեր դաշտը կ'ոռոգէր՝ պէտք էր ընկըղմելով լողալ ու միւս կողմն անցնիլ: Կանգ առնելով քիչ մը մտմտաց, բայց վերջապէս վրստանելով ջերմեռանդ սիրոյն որ ամէն բանի կը յաղթէ՝ ոչինչ համարեց հեղձամուղձ ըլլալն ու մեռնիլը, գետին սրընթաց հոսանքին մէջ նետուեցաւ, եւ մեծ նեղութեամբ լողալով պարբային միւս կողմն անցաւ, ուր կիսամեռ եւ չընչասպառ ինկաւ փոռուեցաւ դոնապանին սաղարթաւոր ծաղկափթիթի գէտերուն մէջտեղը, որոնք թէեւ իսկոյն կրնային զայն կաշկանդել եւ բանտ նետել, սակայն ըստ որում օրէնք չէր Նոճի դոնապանէն հրաման չառած եկամուտ նժգեհի մը ձեռք դպցնել, գացին անոր իմացուցին անձանօթ մէկու մը ներս մտած ըլլալը:

Նոճի դոնապանը եկաւ, ոտքի հանեց զայն եւ հարցուփորձ ընելով ուղեց փտնալ թէ ո՛վ է եւ ո՛ր կից կուգայ եւ ինչ ո՛ւ եկեր է վարդարան սրբացեալ քաղաքը:

Երբոր Սոխակը իր ու հօրը, տոհմին ու քաղաքին անունը տուաւ, իսկոյն Նոճին յիշեց որ իր նախկին տիրոջ տղան էր ան, որուն հօրը տունն ալ երկայն ատեն բարապետութեան պաշտօն վարած էր, եւ շատ անգամ զայն ուսերուն վրայ աննելով պարտացուցած էր: Ձեռքովը բռնեց զայն եւ յարգանքով տարաւ հանգչեցուց իր բարձր սենեակին մէջ, սրտազնդեց զայն որ մէկէ մը կասկած չունենայ եւ ամէն պարագայի մէջ իր պաշտպանութիւնը խոստացաւ:

Դոնապանին այս անակնկալ յուսադրական խօսքերուն վրայ, Սոխակին սիրտը մեծապէս բերկրեցաւ. եւ օթարանը գտած ըլլալով, սիրոյ խոկմանն անձնատուր եղաւ. բայց քունը աչքէն կտրեցաւ եւ նինջն արտեւանունքէն. եւ ամբողջ գիշերը մեծ տափնապի մէջ էր: Եւ ա՛լ չկրնալով տոկալ, առտուն կանուխ մութնուլուսուն արթննալով, իր բարձրաւանդակ տեղէն՝ սովորութեանը համեմատ՝ սկսաւ այնքան քաղցրանուագ ձայնով սիրոյ երգեր գեղգեղել որ քաղաքին բոլոր ունկնդիրները հիացմամբ կը զմայլէին բայց չէին գիտեր թէ ո՛վ էր երգողը եւ ո՛ր կից կուգար եղանակը, վասն զի բարապետն ու իր գէտերը ո՛չ մէկուն բան մը յայտնած էին:

ՉԱՐԲԱՐԻՍ ՄԱՐԳԱՐ ԽՕՃԷՆՑ  
(Շարունակելի) ԵՐԵՒԱՆՑԻ

ՀԱՅՈՒՆ ՋԻՂԵՐԸ

Ս.

Մարդիկ, քաղաքակրթութեան զգլխիչ հոսանքին մէջ բռնուած, կը վազեն խենդերու պէս՝ փախչող երջանկութեան մը ետեւէն. ու այս յիմար ընթացքին մէջ շատեր ճամբան կը մնան. ուրիշներ կը կորսնցնեն իրենց հոգիին ու մարմնոյն համերաշխութիւնը: Այն ատեն ջիղերը կը պրկուին, ուղեղը կը յոգնի, եւ ատոնցմէ կը ծնին ջղային տկարութիւնները: Այսպէս՝ մարդիկ ամէն երկրի մէջ, քիչ շատ ջղային են: Կան սակայն ազգեր որոնք մասնաւոր պատճառներով, ուրիշներէ աւելի տրամադիր են ջղային խանդարմանց: Ռուսիացիք, Ամերիկացիք ու գլխաւորաբար Հրեաները ջղային ազգեր են:

Հայերն ալ ջղային ազգերուն մէջ իրենց տեղը ունին: Հակառակ զանազան երկիրներու մէջ բնակելուն, հակառակ Ռուսիոյ, Պարսկաստանի ու Տաճկաստանի տարբեր քաղաքակրթութեանց, Հայերը ջղային են, ու ջղային են եղած ոչ միայն այս վերջին դժբաղդ դարերուն մէջ, այլ իրենց անկախութեան օրերուն ալ:

Հայաստան զաշտ մը եղած է պատերազմներու, ճամբայ մը Ասիոյ աշխարհակալ ցեղերուն, Ասորեստանցուց, Մարաց, Պարսից, Արաբացուց աւայլն, որոնք յաջորդաբար անոր հարստութենէն ու գեղեցկութենէն զրգոուած, եկած տիրապետած են: Շատ քիչ ազգեր Հայոց չափ տանջուած են: Շատ քիչ երկիր Հայաստանի չափ արիւն ծծած է: Հայոց կեանքը պերութեան ու ազատութեան շարք մը, անկումի ու վերակենդանութեան շղթայ մը եղած է: Հայը իր ազատութիւնը պահելու համար երբէք չէ ընկրկած կատաղի պայքարներ մղելէ՝ անազին բարբարոս ուժերու դէմ: Մէկ սահմանապաշտ թշնամին դեռ նոր վռնտած, միւս կողմ վազած է նոր ու աւելի զօրաւոր ուժերու դէմ կռուելու համար: Ու այսպէս, առանց հանգստի, առանց դադարի, զէնքը վար չէ ձգած: Այս մըշտատեւ ու տաժանելի պայքարը տխրեցուցած է Հայը, դառնացուցած՝ հոգին, յոգնեցուցած՝ ջիղերը: Ամէն մեծ ցնցումէ յետոյ՝ թուլացում յառաջ կուգայ, կիներու հոգին կ'ամպոտի, ջիղերը կը սմբին: Մայրերը արհաւիրքներու մէջ կը ծնին, զիչերներով անքուն, օրերով սգաւոր,

սգաւոր հոգիով ու մտքով, սեւերու եւ ար-  
ցունքներու մէջ՝ կը ծնին. ու յետոյ, տարիներ  
լով, գերութեան մէջ, մեղամաղձոտ միջավայրի  
մը մէջ կը մեծցնեն իրենց որբերը:

Բոլոր այդ տագնապները, սուգերն ու ար-  
ցունքներն են պատճառ մեր ջիղերուն տկարաց-  
մանը: Քաղաքական կեանքի վերջնական ջըն-  
ջումէն յետոյ, Հայը, գերութեան մէջ, օտարին  
լուծին տակ, սրտին ցաւէն, հոգիին վրդո-  
վումներէն հալեցուցած, մաշեցուցած է իր ջի-  
ղերը: Այդ պայմաններուն մէջ անասուններն  
անգամ կ'այլասերին, կը փոխուին, կը տկարա-  
նան: «Մառայութիւնը, գերութիւնը, տարբեր  
ու նոր անդառութիւնը ու կլիման, կ'ըսէ Պիւֆ-  
ֆօն, կը բաւեն անասունները փոխելու, տկա-  
րացնելու»: Անպատին թագաւոր առիծը եր-  
կաթէ վանդակին մէջ թռչուն մը կ'ըլլայ: Լեռ-  
ներու անզուսպ զինուորը առանց զէնքի, գե-  
րութեան տակ ջղային մը կ'ըլլայ:

Հալածեալ ազգերը ջլախտացեալներ են:  
Մենք՝ դարերէ ի վեր հալածանքի ենթարկուած,  
կեանքի կռիւր մղելով մենէ շատ աւելի զօրաւոր  
տարրերու դէմ, յոգնեցուցած ենք ու միշտ կը  
յոգնեցնենք մեր ջղային դրութիւնը: Հրեաները  
մենէ աւելի հալածուած, ամէն երկրէ վտարեալ,  
թափառական՝ աշխարհի վրայ, հաց ու ապահո-  
վութիւն փնտռելով, եղած են ցեղերուն էջն  
ջլախտացեալը: Ամէն քաղաքներու մէջ ուր  
կ'ապրին, համեմատաբար իրենց թիւին, հա-  
պին քանակութեամբ ջլախտաւորներ ունին ու  
անհատուով խենդեր: Այլասերումն է ասիկա  
ցեղին, տկարացումը անզգալաբար անոր ջղա-  
յին դրութեան:

Մենք, քաղաքական ու կրօնական տեսակէ-  
տով անոնցմէ նուազ հալածուած աշխարհի մէջ,  
բայց անուշի վէրքերով ծածկուած մեր երկրին  
մէջ իսկ, սոսկալի ջարդերով խոցոտուած, կը  
տանջուինք մեր ջիղերով: Դիտուած է որ ար-  
մէն մեծ կոտորածէ, ամէն հանրային դժբաղ-  
դութենէ յետոյ, ջլախտաւորներուն թիւը կ'ա-  
ւելնայ: Բարիզի պաշարումէն յետոյ բժիշկները  
դիտեցին թէ մայրերը ջղային զարմանալի տկա-  
րութեան մը մէջ կը գտնուէին: Պաշարումի ա-  
տեն յղացուած զաւակները ջլախտացեալներ  
եղան գրեթէ ընդհանուր մեծամասնութեամբ:  
Կը Կրան տիւ Սօլ (1) նշանաւոր ջլախտաբոյժը  
որ ուսումնասիրեց այս կէտերը, կ'եզրակացնէ  
թէ մտաւորական տխուր ու յուզեալ ձգտումները

ոչ միայն կ'աղղեն անձին ընդհանուր ջղային  
դրութեան վրայ, այլ անկից ծնած զաւակնե-  
րուն վրայ ալ:

Ամէն ուղեղի անկիւն կը քննայ յիմարու-  
թիւնը, խնդրը զայն չարթնցնել է.» կ'ըսէ  
Մօրօ տը Թուր:

Ամէն մարմնոյ մէջ ջիղերը քաշուած կը մնան  
անկիւն մը. ոտքի կ'ելլեն՝ երբոր գրգռուին ար-  
տաքին պատճառներով: Սովորական հանդարտ  
կեանք մը խորունկ քունի մէջ կը ձգէ թմրած  
խենդութիւնը՝ ուղեղին մէկ ծածուկ անկիւնը,  
ու քաշուած ջիղերը՝ իրենց խցիկին խորը.  
բայց հանրային աղէտքներ, մեծ յուզումներ  
տակնուվրայ կ'ընեն սովորական կեանքին հան-  
դարտութիւնը, կ'արթննան անոնք եւ խենդու-  
թիւնը երեւան կ'ելլէ:

Էսքրիօլ, Կիսլէն, Բարչաբ, Մօրել բարոյա-  
կան պատճառներով արթնցած խենդութեանց  
միայն կը հաւատային: Այսօր գիտենք թէ ուրիշ  
աւելի կարեւոր պատճառներ ալ պէտք են որ-  
պէս զի խենդութիւնը ծագի. բայց ջիղերուն  
տկարացման համար՝ ամէն մարդ համակարծիք  
է. բարոյական յուզումները կը բաւեն արդէն  
քիչ շատ տրամադիր անձ մը կատարեալ ջղա-  
յին մը ընելու: Բիւնել նշանակած էր ջլախտա-  
ւորներու շատնայը Ֆրանսական մեծ յեղափո-  
խութեան Արհաւիրքի օրերէն յետոյ, որովհե-  
տեւ ուղեղին ու ջիղերուն վրայ եղած զօրաւոր  
ազդեցութիւնները անոնց կանոնաւոր գործունէ-  
ութեան արգելք կ'ըլլան:

Հայոց պարբերաբար կրած յուզումները, ար-  
մէն օր վախի ու մաքառման մէջ ապրելնին  
պէտք եղածէն աւելի են զանոնք դասական  
ջլախտաւորներ ընելու համար:

\* \* \*

Ազգային պատճառներուն քով՝ Հայերուն  
ջիղերուն տկարութեան ընտանեկան ու անհա-  
տական պատճառներ կան: Ամբողջ հայութիւնը  
չէ որ կը հալածուի այսօր. Ռուսիոյ, Պարս-  
կաստանի, Եւրոպայի մէջ ալ Հայեր կան, ո-  
րոնք ջարդերու վախին մէջ չեն ապրիր. բայց  
ամէն երկրի մէջ ալ, Եւրոպայի կամ Ամերիկա-  
յի, Ասիոյ կամ Ափրիկէի մէջ, Հայերը ջղերու  
խանգարումներ ունին: Որովհետեւ ուրիշ պատ-  
ճառներ ալ կան ջղային ըլլալու, ժառանգակա-  
նութիւնը, քաղաքակրթութիւնը, եւն:

Ժառանգականութիւնը գրեթէ բոլոր ջղային  
դրութեան վրայ միահեծան կը տիրապետէ:

(1) Le Grand du Saule. — Les enfants du siège, Paris.

կան թէեւ ոչ-ժառանգական ջղայիններ, բայց անոնց թիւը բազմապատմամբ առաջիններուն՝ պղզտիկ է. այսպէս՝ Հայուն գժբազգութիւնները, հալածանքները ջղային մայրեր կը պատրաստեն, որոնք իրենց կարգին ջղային զաւակներ պիտի ունենան: Մօրել (1) առաջին անգամ գիտական կերպով բացատրեց ծնողքներու եւ զաւակներու մէջ եղած ժառանգական յարաբերութիւնները, նկարագրեց թէ ինչպէս սերունդէ սերունդ կ'աւելնան ջղային թերութիւնները, եթէ նոր պատճառներ չի գան կասեցնել այլասերումը Սկիզբները ջղային պարզ անհանգստութիւններ միայն կը գտնուին պապուն քով. յետոյ զաւակներուն, թոռներուն քով ջղային հիւանդութիւնները կ'աւելնան, կը փոխուին. սերունդին տկարանալովը՝ անոնք ալ կը զօրանան. պապուն ջղոտ վիճակը, թոռանը քով վերնոտութեան կամ ապուշութեան կը հասնի: Մօրէլէ յետոյ ուրիշներ, որոնց մէջ կը յիշեմ վարպետս, Ֆրանսայի մեծագոյն ջլախտաբույժը, Մանեան (2), ընտանիքներու արտաբանական պատմութիւնն ընելով, միշտ նոյն եզրակացութեան հասան, եւ այսօր ընդունուած ճշմարտութիւն մըն է թէ ջղային հիւանդութիւնները ժառանգական են. ամէն ջլախտաւորի հօրը մօրը քով պէտք է փնտռել իր արտին գլխաւոր պատճառը:

Ու հիմա, ազգային ու ժառանգական պատճառներէ յետոյ, որոնց մէնք ուղղակի պատասխանատու չենք, անցնինք անհատական պատճառներուն:

Շատեր զիտած են թէ ողջ առողջ ծնողքներու զաւակներ իրենց պղտիկութեանը ծանր հիւանդութիւններ ունենալով՝ ապագային ջղայիններ կ'ըլլան: Թիֆօն՝ օրինակի համար՝ պղտիկ տղոց քով ուղեղի ու ջիղերու հիւանդութիւններ կը ձգէ, (Ֆրից(3), Ռօժէ եւ Տամասքինս(4), Լանտուզի(5):) Կաթնոտիս քուրաուորումը ալքոլաւոր քմակութիւններով՝ կը բաւէ յաճախ այլասերելու պղտիկը, անոր ջղային դրութիւնը

խանգարելու, ինչպէս զիտած են վերնուա (1), Շարբանթիէ (2), Թուլուզ (3):

Մարդ իր չափահասութեան ուրիշ պրեկոնուներու ալ պէտք է դիմարդէ: Առողջ ծնողքը, առանց ջղային որ եւ է պակասութեան, իրեն կեանք տուին. հոգին մաքուր է, մարմինը առողջ, ջիղերը ուժով: Բայց ալքոլը (օղին, գինին) հոն իր քոյն է. եւ քանի՛ խմէ, հոգին կ'ապականի, մարմինը կը տկարանայ, ջիղերը կը թուլան: Ալքոլամոլը կը վնասէ ոչ միայն իրեն՝ ուղղակի կերպով, այլ նաեւ ու գլխաւորաբար՝ իր զաւակներուն. այն խեղճերը կը տուժեն իրենց հօրը ամօթը, անոր զարնուրելի մոլութիւնը: Ալքոլ խմողը ոչ միայն իր զաւակներուն, այլ թոռներուն անգամ կրնայ վնասել, կրնայ իրմէ երկու սերունդ հետո տխուր ու ճազած արարածներու ջլախտաւորութեան պատճառը ըլլալ:

Ապացուցուած է աս՝ ամէն երկրի ու ամէն ժամանակի բժիշկներու կողմէ:

Ծնողքներու սովորական ալքոլամոլութենէն դուրս, ընդհանրապէս չիմոզներ ալ կրնան անգիտակցաբար տխեղժ արարածներու կեանք տալ: Գինովութեան օր մը միայն՝ մայր մը արգասաւորելը կը բաւէ հին ալքոլամոլի գաւկին նմանող ապուշ զաւակ մը ունենալու համար:

Ալքոլը իր բոլոր գոյներուն տակ, իր բոլոր ձեւերուն մէջ սարսափելի կոտորածներ կ'ընէ: Մենք, Հայերս, արդէն ջղային ազգ մը, փոխանակ զգուշանալու ալքոլէն որ մեր թուլցած ջիղերը աւելի կը տկարացնէ, անոր մէջ կը փնտռենք մեր հոգիին ցաւերուն մոռացումը: Մենք, Հայերս, տխրած մեր հալածանքներէն, մտահոգ մեր գժբազգութեանց շարքին զիմացը, ուժ ու քիչ մը զուարթութիւն կը փնտռենք ոճրագործ օղիին մէջ: Ու ան՝ փոխանակ փարատելու հոգիին ցաւերը, ուժ տալու սրտին, ջղային կ'ընէ մեզ, ջղային կ'ընէ մեր զաւակները, ջղային՝ մեր թոռները:

Ալքոլէն զատ ուրիշ թոյներ կան, որոնց վերայ ընդհանրապէս չենք խօսիր: Սուրճը որու համար կ'ըսեն թէ արորժակը կը դիւրացնէ ու գրողին, խորհողին միտքը կը մտրակէ, սուրճը թոյն մըն է եթէ ոչ ալքոլին չափ հօր, գոնէ անոր պէս վնասակար: Սուրճին ջղային դրու-

(1) Morel. — Traité des dégénérescences de l'espèce humaine. Paris, 1857. — Traité des maladies mentales, Paris, 1660.  
 (2) Magnan. — Soc. Médico-psycho. de Paris, 1886. — Leçons cliniques sur les maladies mentales, 1893. — Les dégénérés (Biblio. Charcot-Debove, collaboration avec Legrain).  
 (3) Fritz. — Symptômes dans la fièvre typhoïde, 1863.  
 (4) Roger et Damaschino. — Gaz. Médic. de Paris, 1874.  
 (5) Landouzy. — Des paralysies dans les maladies aiguës, 1880.

(1) Vernoy. — Convulsions par alcool. chez un nouveau-né, (Lyon médic. 1872.)  
 (2) Charpentier. — Bulletin de la Soc. protect. de l'enf. 1873.  
 (3) Toulouse. — Convuls. inf. par l'alcool. de la nourrice, (Gaz. des hôpitaux, 1891.)

Թեան համար թոյն մը ըլլալը այս վերջի տարիներուն մէջ բացատրուեցաւ: Ժիլ տը լա Թուրէթ ջլախտաւորներ տեսաւ որոնց տկարութեան միակ պատճառ սուրճը գտաւ: Պատճառը հեռացնելով հիւանդութիւնը աղէկցաւ: Ո՛վ գիտէ քանի ջլախտաւորներ առանց գիտնալու սրճամուկ են:

Հայը մտածող, անհանգարտ, փնտռող է: Ամէն բանի մէջ միտք կը յողնեցնէ, սիրտ կը հատցնէ: Ատիկա ալ պատճառ մըն է իր ջիղերու տկարութեան: Մտաւորական յոգնութիւնները, ուղեղին չափազանց աշխատութիւնը ջրղային տկարութեանց կարեւոր պատճառներ են: Ու Հայը, գաւառին մէջ, Պալսոյ կամ Եւրոպայի մէջ, միտքը չափազանց կը յողնեցնէ: Հոն՝ իր երկրին լեռներուն ու ձորերուն մէջ՝ ինքզինքը պաշտպանելու միջոցներուն վրայ կը խորհի. նոյն ատեն՝ ապրելու դժուարութիւնները, քաղաքակրթութեան խիստ պահանջները մտաւորական անաղին աշխատութեանց պէտքը զգացնել կուտան Հայուն որ պէտք է կուուի մէկ կողմէն տեղական ուժերուն դէմ՝ իր ազգութիւնը, իր կրօնքը, իր լեզուն պահպանելու, միւս կողմէն պէտք է ճգնի եւրոպական տարրին հետ մրցիլ: Ասոնք ցեանքին պայքարներն են ամէն երկիրներու համար, բայց Տաճկաստանի մէջ ուր անիշխանութիւնը կը տիրէ, ուր բոլոր տարրերը Հայուն դէմ են, կուիւր շատ աւելի տաք է: Հոն՝ Հայը Տաճիկէն, Եւրոպացիէն աւելի միտք կը յողնեցնէ՝ հասնելու, յաջողելու, ապրելու համար:

Հոս՝ Եւրոպայի մէջ, պայքարը նմանապէս խիստ է: Մեզի մրցակից ունինք դարերէ ի վեր կրթուած մշակուած ազգեր. անոնց մէջ, անոնց քով կ'ուզենք յաջողիլ, ու չափազանց կը յողնեցնենք մտքերնիս:

Բայց ընդհանրապէս ամբողջութեան մէջէն՝ մտաւորական ծանր յոգնութիւն ունեցողները, գժուար եւ երկայն քննութեանց հետապնդող երիտասարդներն են: Ասոնք են գլխաւորաբար որ կը տանջուին իրենց ջիղերէն: Կեանքին մէջ հասնելու փափաքը, բան մը ընելու պէտքը ուժ կուտան կամքին, աշխատութեան խրախոյս կուտան, ուշադրութիւնը կը ձգտի, միտքը կը յողնի, եւ ուշ կամ կանուխ, աշխատութեան ծանրութեան համեմատ, ջիղերը կը տկարանան՝ եթէ անձը հարկաւոր ուժը չունի գլխապրելու եւ այդ պայքարէն յաղթական ելլելու:

\* \* \*

Բայց այս մտաւորական յոգնութիւնը միայն Հայուն համար չէ: Քաղաքակրթութեան պահանջն է, անոր արգիւնքը. քաղաքակրթութեան՝ որ դարերէ ի վեր յեղաշրջեց ամբողջ մարդկութեան ապրելու, խորհելու, զգալու եղանակը:

Մենք, տասնըիններորդ դարու վերջին քառորդին ապրող մարդերս, տարբեր ուղեղ մը ունինք բաղդատմամբ քարի դարու բնակիչներուն: Մեր ուղեղին մէջ հիմակուան բաղադրեալ կեանքը, հազար գաղափարներ կը ծնցնէ. մշակուած ուղեղն է, դարերէ ի վեր կրթուած ուղեղը. հոն, մէկ ժամուան մէջ, անհասանում գաղափարներ իրարու կը յաջորդեն: Նոյնը չէ եղած քարի դարուն մէջ ապրողներուն: Նոյն իսկ այսօր, կարմրամորթները՝ բոլորովին վայրենի, թէեւ մեզի ժամանակակից, բայց աւելի մօտ են իրենց ուղեղով քարի դարուն մարդոց քան մեզի: Անոնց մտաւորական շրջանակը սահմանափակուած է կեանքին ուղղակի պէտքերը զոհացնող պարզ գաղափարներու մէջ: Ժամերով, օրերով կը մնան անոնք առանց խորհրդածելու: Դարեր կը բաժնեն մեզ իրարմէ: Անոնց ուղեղին մէջ, հողիին ցաւերը տեղ չունին դեռ: Զարմանալի չէ ուրեմն որ ջիղերնին հանդարտ ըլլայ: Բայց այն երկիրներուն մէջ, ուր Եւրոպացիք քաղաքակրթութիւնը մտցուցին, իրենց հետ սանելով միանգամայն մարդկութեան թոյնը, ալքօլը, հոն՝ տարիներ ետքը, կէս վայրենի, կէս կրթուած մարդիկ, ունեցան իրենք ալ ջղային խանդարումներ: Անոնց ուղեղին մէջ, պարզ գաղափարներուն քով, ծնան ու անցան նոր ու խճողեալ գաղափարներ. ու հիմա, Ափրիկէի այն մասերուն մէջ, ուր եւրոպական գաղթականութիւններ կան, ջղային հիւանդութիւնները կարծուածէն աւելի զոհեր կ'ընեն:

Ու այսօր, գաղափարներու եւ պէտքերու բազմապատկուելը, նոր եւ ուժով հարուած մը կուտայ ուղեղին. միւս կողմէ, քաղաքակրթութեան պահանջներուն համեմատ, կրթութիւնը, ուսմունքը կը կրկնապատկեն ուղեղին ճիգերը:

Այս պայմաններու մէջ է որ, Հայը, Ասիացի կամ Եւրոպացի, պէտք է յողնի, խորհի: Ինչ որ, գլխաւորաբար, կ'ազդէ ու կը տկարացնէ միտքը, կանոնաւոր պայմաններու մէջ աշխատելը չէ, այլ գաւառացի, Պոլսեցի կամ Եւրոպա ապրող հայուն պէս՝ նեղութեան ու անձկութեան մէջ միտքը յողնեցնելն է: Հոս ալ,

միւս ազգերու վրայ, Հայը աւելի կը տուժէ :

Այս խոշոր պատճառներէն զատ, ասոնց քով, ուրիշներ կան, երկրորդական թէպէտ, բայց կարեւոր նմանապէս : Հայը զգայուն է, սիրող սիրտ մը ունի, ինչպէս առ հասարակ՝ արեւելքի զաւակները . եւ այս ալ մեծ դեր կը խաղայ իր ջղային դրութեան վրայ : Սիրային հատուկները շատ անգամ պատճառ կ'ըլլան ջիղերուն տկարացման :

Մեծ վիշտերը, հոգիին ցաւերը, հարստութեան փճացումը, պատճառներ են, ուղղակի կամ անուղղակի կերպով, ուղեղին յոգնութեան ու ջիղերու տկարութեան :

Կան տակաւին հազար ուրիշ անհատական պատճառներ, եւ կամ մէկ քանիներու միացումով ամբողջութիւն կազմողներ, որոնք ամէնքն ալ ձգտելով ուշադրութիւնը, միշտ նոյն արդիւնքին կը հասցնեն ջիղերուն վիճակը : Այս պատճառները նոյն են ամենուն համար, եւրոպացիին ու հայուն համար . բայց հայը իր ցեղական մասնաւոր տրամադրութիւններով, աւելի հակամէտ է ջղային տկարութեանց :

\* \* \*

Այսպէս, մեր ջիղերուն տկարացման գլխաւոր պատճառները ժողովրդականութեան, քաղաքակրթութեան ու գլխաւորաբար մեր ազգային դժբաղդութեանց մէջ պէտք է փնտռենք : Մեզի դէմ եղած հալածանքները, դարերէ ի վեր կրած գերութիւննիս տկարացուցին մեր ջիղերը՝ վերջին ջարդերը, ո՛վ գիտէ քանի տխուր արարածներու բանականութիւնը խանգարեցին, եւ ո՛րչափ սարսափահար մայրեր ծնան նիհար զաւակներ, ապաքայ ջլախտաւորներ : Մեր զբժարողութիւնը միայն ջարդերուն մէջ չէ . մեռնողներուն վրայ կ'աղօթենք . մնացողներուն վրայ պէտք է ցաւինք, անոնց վրայ մտածենք : Ամբողջ ազգը՝ յուզումներու մասնուած՝ օրերով տանջուեցաւ, ցնցուեցաւ, լացաւ : Պէտք է խորհինք այդ ցնցումներուն յառաջ բերած տխուր հետեւանքներուն վրայ, եւ դիմադրութեան միջոցները փնտռենք :

Բայց կրնամ ըսել թէ նոյն իսկ այդ ցաւերուն եւ արցունքներուն մէջ պէտք է փնտռենք մեր միսթարութիւնը : Այդ արցունքները զիս չեն տխրեցներ, որովհետեւ, կը կարծեմ թէ անոնց կը պարտինք մեր անպարտելիութիւնը : Մեր ջիղերուն կը պարտինք, մեր ահռելի դժբաղդութեանց հակառակ՝ ողջ մնալնիս :

Եւ այսպէս ազգային հալածանքը, որ անհատներու մէջ ջղային տկարութիւններ կը ծնցնէ, ընդհանուրին կուտայ ջղային գրգռութիւն մը, կռուելու, գործելու, նպատակի մը հասնելու կամքը :

Մեր ջիղերուն շնորհիւ, հակառակ վերջին անաւոր կոտորածներուն, նոր ուժով, նոր եռանդով գործի կը սկսինք : Ջարդերուն հետեւեալ օրն իսկ, Պոլսոյ մէջ նոր ժողովքներ կը կազմուէին, ուսումնական, քաղաքական . դեռ փողոցներու դիակները չվերցուած՝ գաւառներուն մէջ ու Պոլիս, ամէն սեղ, դպրոցները կը վերաբացուէին. տակաւին Բիւրսոյ իր դասակը չմաքած՝ Հայ խմբագիրը գրիչը կը տաշէր : Հայեր մեռած էին, բայց Հայը կ'ապրէր : Ո՛չ պարբերական ջարդերը, ո՛չ կանոնաւոր հալածանքները կրցան ու պիտի կրնան յաղթել հալածուած ազգին : Հակառակ մեր ջիղերուն տկարութեան, որուն գոյութեան կատարելապէս գիտակից ենք, մեր կամքը զօրաւոր է, այն կարծր կամքն է որ տարիներ ետքն ալ, հաստատաբար ու յամառ, կը հասնի նպատակին : Խառնուրդ մը կայ հոս ջիղերու տկարութեան ու կամքի զօրութեան . խառնուրդ մը որ, եթէ մօտէն չգիտուի, հակասութեան մը կը նմանի : Եւ սակայն, ճշմարտութիւնն է, ուր հակասութիւն չի կայ : Ամէն հալածուած մարդ կամ կենդանի, յուզումներու մատնուած՝ ջղային վիճակի մը մէջ կը գտնուի, բայց կեանքին պայքարը, պանդանման լնաղըը, անհաւատալի ուժ մը, զարհուրելի կարողութիւն մը կուտան մարդուն, որ վազան կը դառնայ, անասունին՝ որ առիւծ կը դառնայ : Միշտ վտանգի մէջ եղողը, միշտ հալածուածի ենթակայ եղողը կամքի նոր ուժ մը կ'ունենայ, դիմադրելու, գործելու եռանդ մը :

Երջանիկ ազգերը, անոնք որ իրենց մեծութեամբ աշխարհքը լեցուցին, իրենց հարստութեամբ ու ճոխութեամբ տիեզերքը զմայլեցուցին, իրենց գիտութեամբ ազգերը հմայեցին, Հոովմայեցիք, Աթենացիք, Արաբները, մեռած, այլասերած ազգեր են հիմա : Երջանկութեան ու հանգստութեան մէջ մարդուս կամքը կը մեղկանայ, սիրտը կը տկարանայ . հարուստի զաւակները ընդհանրապէս անկարողներ կ'ըլլան : Դժբաղդութիւնը կը զօրացնէ կամքը, աղքատութիւնը կը զօրացնէ հոգին :

Ատով է որ անա կ'ապրինք տակաւին այսօր, պահելով մեր ազգութիւնը, մեր լեզուն, մեր կրօնքը : Հակառակ մեր ծանր յուզումներուն, մեր ջղային տկարութեանց՝ գործելու կամքը

ունինք, աշխատելու փափաքը: Ու այս է որ կը պահէ մեզի: Հայերը, մեծամասնութեամբ կամք ունին. ու կամքը ջիղերուն կը յաղթէ. ու կամքը պէտք է յաղթէ ջիղերուն:

Բարից

ՏՐ. ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ԳԻՇԵՐ

Շաղիթեին դունէն ներս մեղմով սահեցաւ վերջապէս կառքը, ընդարձակ պարտէզի մը մէջ որ արևով ողողուած էր ամբողջ: Հիւանդանոցին մուտքէն մինչև պարտէզին անկիւնը ուր կ'առաջնորդուէի՝ ահագին հեռաւորութիւն մը կ'ընկար ինծի որ վերջ չունէր Հանդարտ քայլերով ձին կը դառնար գէպի աջ, կը դառնար գէպի ձախ, հետեւելով անհամար ուղղութիւններու որոնց լաբիւրինթոսին մէջ՝ կառքի անկողնէն՝ հիւանդ դուխս չէր բաւեր ձշգել որոշակի գտնուած կէտս:

Յորձած, մաշած՝ ջերմէն ու տկարութենէս, փափաք մը ունէի միայն, հանգչիլ: Հանգչիլ ո՛ր եւ է տեղ, ո՛ր եւ է կերպով, համակուիլ լուծեամբ, ապաստանիլ հանդարտութեան մէջ, հեռու շարժումներէ, աղմուկէ, մարդէ. մոռնալ դրսի կեանքը, դրսի աշխարհքը որուն վրայ կը գոցուէր արդէն հիւանդանոցին երկաթէ դուռը, բաժնեկով զիս՝ ա՛լ բոլորովին՝ քաղաքին մարդկութենէն, այնպիսի երկար խուլ աղմուկով մը որ վերջին մնաս բարովի մը տիուր աղղեցութիւնը գործեց վրաս:

— Ա՛լ հասանք, ըսաւ հնչուն ձայնով մը ինծի ընկերացող հիւանդապահ կինը որ կանացի սրամտութեամբը հետեւած էր գաղափարներուս ու զգացմունքներուս ընթացքին:

Քառորդ ժամ վերջը՝ տեղաւորուած էի անկողնիս մէջ որուն թուովը պիտի անուանուէի 7, կորսնցնելով այլ եւս իմ յատուկ անունս ու անձնաւորութիւնս:

Հոն ուր փոխադրուած էի՝ երկայն սրահ մըն էր, ձեպ ձերմակ, պատերը, անկողինները, մարդիկը: Երկու կողմէն անվերջ շարք մը հիւանդներու, հեւացող, տքացող. ումանք քնչարժ քնացած, մարածի պէս, ումանք գուարթ, ուրախ, կատակող: Ոչ մէկուն ցաւը, վիճակին սաստկութիւնը չէր վրդովեր ուրիշ մը անհոգ ուրախութիւնը: Ամէն մէկը իր մէջ կղզիացած,

ինքն իրմով միայն զբաղող: Այդ խաղաղ ու ցաւազին միջնորդին մէջ խառնուած էր անշուշտ, ահագին քանակութեամբ, անտարբերութեան, եսականութեան թոյնը: Տանջուիլ հիւանդ, տկար, մեռնիլ, բնական պարզ երեւոյթներ էին դարձած ասոնց աչքերուն:

— Միջին հաշուով, կ'ըսէր վերակացու կինը որ անկողնիս վերմակները կը շտկէր, երկու հոգի կը մեռնի օրը այս սրահին մէջ. ու պէտք է դիտել թէ հոս մահերու թիւը շատ չափաւոր է բաղդատմամբ ուրիշ սրահներու: Տեսէք ձեր քովի ծերուկ դրացին, Յը, այս քանի մը օրուան կեանքը կը պարտի իրեն տրուած խնամքներուն, հրաշքով է որ կ'ապրի:

Չարմանալի մարդ մը, շատախօս, զուարթ, խնդացող: Բժշկին այցելութենէն վերջը մինչև երիկուն գաւազանին վրայ կրթնած, նապաստակի պէս սրահին մէջ կը վազվուտէր քանի մը օր առաջ: Հիմա բոլորովին կոտորած է, անխօս, անշարժ, ո՛չ կ'ուտէ, ո՛չ կը խմէ. գրեթէ դիակ մը: Ստամոքսին մէջ վէրք մը ունի որ կը լափէ, կը լմնցնէ զինքը: Այսօր վաղը զինքը կը կորսնցնենք անշուշտ:

Մերուկը անվրդով՝ առանց շարժելու գլուխը բարձէն՝ ակնարկ մը ուղղեց մեր կողմը տիուր, անհուն իր մարած, ապակիացած աչքերէն:

— Ի՛ր նախորդը, շարունակեց կինը բարձերս յարդարելով, ձիշդ իրեն պէս էր, զուարճալի: Առաւօտ մը, չպիտի մոռնամ բնաւ, ամբողջ գիշերը նեղուած՝ հոգեվարքի մը ձիչերէն, եկաւ բարկացած զիս տեսնելու, եւ — Տիկի՛ն, ըսաւ, հինգ ամիս է հոս եմ, ոչ մէկուն անհանդատութիւն չտուի, հակառակ կրած նեղութիւններուս: Բայց, հիմայ որ կը տեսնեմ այս ամենուն կամայականատարութիւնը, իրենց պոռալները, կանչները, այն աստիճանի մանաւանդ վրդովուած եմ այս գիշերուան քաշած անհանդատութենէս որ կը խոստանամ ձեզի երկարել իմ հոգեվարքի վիճակս, երբ ժամանակը գայ, միմիայն ուրիշներու հանգիստը խանգարելու հաճոյքին համար:

— Չարմանալին հոն է որ այդ խայտառակը իր խօսքը պահեց. այո՛, երեք օր երեք գիշեր ահագին աղմուկ հանեց: Ա՛լ հանդուրժել կարելի չէր: — Լո՛ւէ՛, լո՛ւէ՛, կը պոռային ամէն կողմէ, լո՛ւէ՛: Նեղեց մեզ ամենքս աւելի քան ինչ որ խոստացած էր: Մեռաւ առաւօտ մը վերջապէս եւ ազատեցանք:

Ու կինը հեռացաւ կրկնելով, « խայտառակ մարդ, խայտառակ: »

Ազնիւ կին մըն էր սակայն , որուն կը հպատակէին հիւանդները կատարեալ հլուժեամբ , դպրոցական տղաքներու պէս : Իր ձերմակ հագուստներովը կը վազվուտէր ամէն կողմ , մաքրելով , կարգադրելով ամէն բան , բժշկին գալուն՝ պէտք եղած պատրաստութիւնները անկատար չձգելու համար : Օրուան մեծ մասը սեղանին առջեւ նստած , հանգիստ , ասեղնագործութիւններ կ'ընէր , հեռուէն խօսելով իր հիւանդներուն հետ :

— Է՛, Յ4, կրակ պիտի ձգես անկողնիդ մէջ. ու պիտես որ եթէ այս անգամ բռնուիս , ա՛լ ազատում չկայ . դուրս կը նետեն քեզ անխնայ :

— Դո՛ւն , 19 , իրաւցնէ նեղացուցիչ մարդ մըն ես եղեր , կարծես թէ քեզմէ զատ ուրիշ հիւանդ չկայ հոս : Լալը ի՞նչ պիտի ըլլայ : Չե՞ս կրնար քիչ մը ինքզինքդ բռնել , քաջանալ : Տե՛ս , օրինակ ա՛ն Յէն որ բնաւ ո՛չ ողբ ունի , ո՛չ գանգատ :

Յ4ը անկողնին գամուած ցաւագար մըն էր որ իրեն եղած ամէն սպառնալիքներուն հակառակ չէր կրնար հրաժարիլ ծխելէ : « Լաւագոյն է որ մենսիմ , կ'ըսէր , քան չծխել » : Ու անկողնին մէջ գլուխը պահած՝ կը ծխէր ամբողջ օրը , ու բերնէն ելած ծուխը աներեւութացնելու համար մէկ ձեռքով անդադար կը շարժէր վերմակները :

19ը խեղճ գործաւոր մըն էր , երիտասարդ , նոր ամուսնացած : Տխուր դէմք մը որ ոչ մէկուն հետ բարեկամութիւն չէր հաստատած : Ապաքինելու եւ ապրելու տենչը յայտնի կը կարդացուէր ձակտին վրայ : Կուլար ստէպ անվերջ « ա՛հ » երով , երազելով իր կնիկը որուն հետ ամէն հինգշաբթի եւ կիրակի օրերը , այցելութեանց ժամերուն՝ կը խօսակցէր անձկանօք , ցած ձայնով , ձեռքերնին իրարու խառնուած , եւ աչքերովը խմելով կնոջը թարմ եւ ուժեղ հրապոյրները : Քանի մը շաբաթէ ի վեր բժշկին հրամանովը արգիլէր էին այս այցելութիւնները որոնք վնասակար դատուած էին . հիւսա կը հիւծուէր , կը հալէր օրէ օր , հեռու կնոջմէն , հոգին ու սիրտը վիրաւորուած :

Եր միշտ նոյն վիճակին մէջ անխօս կը տառապէր , ինքն իր վրայ գալարուած , կտորուած , գլուխը կուրծքին մէջ , առանց շարժմունքի : Պզտիկ շունչ մը միայն կ'ելլէր բերնէն , անկանոն , խուլ ու խուլորտ :

Իրիկուան երբ կանթեղը վառեցաւ , մակնեցաւ վերակացու կինը , որուն յաջորդեց գիշերուան հսկող մը , տեսակ մը սրիկայ , գրեթէ լիբը իր կատակարանութիւններովը :

Կէս գիշերին տակաւին անքուն կը հսկէի աչքերս յառած գիշերապահին վրայ , որ թեւերը ծալած՝ գրքի մը վրայ ծոած , կը սպասէր առտուան լոյսին :

Սոսկալի գիշեր մը , այս առաջին գիշերս , հիւանդանոցի մը անկունը՝ մութ , տխուր , ամբողջ սրահը լեցուած հիւանդի խորհալներովը :

Ձիզերս ձգտուած՝ կը դիտէի ամէն կողմ ուշադիր , պատրաստ արձանագրելու ուղեղիս մէջ այն անսովոր բաները որոնք անտարակոյս տեղի պիտի ունենային չորս դիւս : Միտքս կը թռէր հեռուն գիմացի պատին բարձրերը , բաց պատուհաններէն , կը պտրտկէր ամբողջ քաղքին մէջ , անոնց մօտ որոնք՝ այդ վայրկենին դրաղած ո՛վ գիտէ ինչպէս , չէին մտածեր ինծի անշուշտ : Կիրք մը կը տարնապէր դիւս , պէտք մը շնչելու ազատ , թոքալիբ , պէտք մը փախչելու այդ բաց պատուհաններէն որոնց մէջէն ափի չափ անուշ կապոյտ մը կը տեսնուէր երկնքէն՝ զարդարուած աստղերով :

Յանկարծ գիշերապահը գլուխը դարձուց իմ կողմն : Դիտեց դիւս , աջ կողմի դրացիս , յետոյ ձախինը : Ձայն մը , շշուկ մը պակասած էր մեր կողմէն , եւ ատի արթնցուցած էր զինքը իր կէս մրափէն : Բայց որո՞ւնը : Ելաւ ուրեմն տեղէն զգուշութեամբ , առանց աղմուկի , ոտքին ծայրերուն վրայ քալելով , ու մօտեցաւ ճին : Մտիկ ըրաւ վայրկեան մը . քաշեց անոր գլուխը մէկ կողմ , հրեց մարմինը անդին , ու բարկացած , կատողած , կրակ դարձած , երկու ձեռքերը կուշտերուն , սկսաւ տեղացնել ողորմելի , տակաւին տաք այդ դիակին վրայ կարդ մը յիշոցներ որոնք կը թափէին բերնէն իրարու ետեւէ աներեւակայելի առատութեամբ մը :

— Ազտո՛տ , անպիտան , կ'ըսէր , չէի՞ր կըրնար քանի մը ժամ աւելի ապրիլ , կամ քանի մը ժամ պակաս : Աստուած վկայ , կարծես թէ ամէնքն ալ խօսք մէկ են ըրած , իրիկուան ժամը 8 զարկածին պէս , ճիշդ այն վայրկեանին ուր կը սկսիմ պաշտօնս , օր չ'ըլլար որ մէկը երկուքը չստակին : Չարմանալի է բազա , օր մը չեղաւ որ հանդարտ անցընեմ գիշերս : Երէկ՝ երկու , առջի գիշեր՝ երեք . . .

Ու զառնայով կրկին դէպի դիակը ,

— Ի՛նչ , կը վախնայիր որ կարդ կը փախչի՞ :

Ու կը շարունակէր , կը շարունակէր անհատնում , իր ցամառնքը դարձնելով ամէնուն վրայ որոնք հոն քնդնէն խանգարուած , անձայն կը դիտէին անխուսափելի վախճանը որուն վիճակուած էին , կծկտած ամէն մէկը մկան պէս , անկողնին մէջ , վերմակներուն տակ :

Դիակը կը մնար սակայն հիմա արտառոց դիրքի մը մէջ, թեւերը տարածուած, սրունքները տակն ու վրայ, գլուխը մէկ կողմ ու մարմինը անդին, մարմին մը նիհար, խորուած, աւերուած :

Վայրկեանի մը մէջ վերցուցին դիակը վերջապէս, ծրարի մը պէս փաթթելով սաւանի մը մէջ, ու տարին սրահին ամփիթատրոնը, թարմ նիւթ ուսանողներուն առաւօտեան աշխատութեանցը :

Սկսանք շնչել . թոյն մըն էր որ պակասած էր մեր ծծած օդէն : Մահճակալը հոն կը մնար սակայն պարապ, ու այդ պարապէն կը բղխէր ցուրտ ու տխուր տպաւորութիւն մը որ ամենուս վրայ կ'ազդէր զիշերուան թանձր լուծիտան մէջ :

Առտուան դէմ էր երբ շարժուեցանք մեր խոր քունէն տխուր ձայներով : Տեսակ մը հաշիւներ էին ասանք որ կը բարձրանային սրահին հեռաւոր մէկ անկիւնէն :

Խեղճ 19ը խենդեցած էր : Գամուած իր անկողնին մէջ՝ « Մայրի՛կ, մայրի՛կ » կը պոռար լալով, ու տակաւին արցունքները այտերուն վրայ՝ կը խնդար անազին քահքահներով :

Սիրտս թունտ ելած այս անուշի տեսարանէն, ձգեցի անկողինս, մօտեցայ իրեն՝ տեսնելու համար աւելի մօտէն այս ողորմելի կացութիւնը որուն կը հրէր զիս գազանի ուժ մը իմ մէջս : Յանկարծ ցցուեցաւ իր անկողնին մէջ զիտելով զիս խոշոր աչքերով որոնք կը պոռթկային զըլխէն դուրս : « Մա՛հը, մա՛հը » կ'ըսէր զիս ցուցընելով պրկուած մատներովը, ու կը շարունակէր իր ողբերը :

Գանգատներ կը լսուէին ամէն կողմէ, — « Պէտք է լռեցնել այդ խեւը » կ'ըսէին :

Անհնար ըլլալով հանդարտեցնել սովորական միջոցներով հիւանդին այլայլած ջիղերը, մօրփին ներսուծեցին, ինչ որ վերջ տուաւ անոր անանուն տանջանքներուն :

Ես դարձայ անկողինս նետուեցայ, հալածուած անոր զարնուրելի աչուրներէն : Ու պաղ լուծիտանը մէջ որ հիմա սրահին վրայ կը տարածուէր՝ անոր ազաղակը կը լսէի՝ « Մա՛հը . . . մա՛հը . . . »

Սյգ միջոցին, պատուհանները ձերմկնալ սկըսեր էին արդէն : Առտու եղեր էր :

Պարսեղոնա 16 Սեպտ. 98 ՄԵՆԻԿ

### ԻՆՉՈՒՄՆ ԷՐ ՈՅԺԸ

Դերվիշի պատմաճնեցից



Հետու Հնդաստանում կար մի թագաւոր, որ շատ էր սիրում մեծ շէնքեր կանգնել, պալատ ու մզկիթ, պարաէզ, մատրասա, աշտարակ ու բուրգ . . . Ո՛չ միայն սիրում էր կառուցանել, այլ եւ գնալ զիտել գործաւորների աշխատութիւնը եւ քաջալերել, նուէրներ ցրուել, ժամերով կանգնել եւ գործը գննել :

Մի օր էլ, երբ վեղիրների հետ մի կողմը կանգնած, զիտում էր թէ ինչպէս գործաւորները քար էին շալակում ու կքուած, քրտնաթոր վերեւ բարձրանում, նկատեց որ նրանցից մէկը առանց օգնութեան, խոշոր քարերը մննակ շալակում, ուրախ ու զուարթ, երգը բերանին, հա՛ բարձրանում էր, անգաղար կրում :

Հուժկու չէր այդ աշխատաւորը եւ ոչ լայնալանջ . բայց մինչ միւսները տնքում էին ծանրութիւնների տակ, մինչ հուժկուները հաղիւ շարժում էին եւ տխուր ու մռայլ, դանդաղ քայլեր անում, նա արագութեամբ ու մեծ զիւրութեամբ քարն էր շալակում, զուարթ մի երգ հնչեցնում եւ ժպիտը դէմքին՝ դէպի վեր ելնում :

Թագաւորը զարմացաւ . ապշեցին նաեւ մեծ վեղիրները : Ո՛վ էր այդ մարդը, որ տանում էր ամհնածանր աշխատանքը՝ ժպիտն երեսին, զուարթ երգ բերնին եւ որ ո՛չ մի դանգատ ու հառաչ չէր հանում կրծքից : Ինչո՞ւմն էր նրա ոյժը, զուարթութիւնը, զիմացկունութիւնը : Ի՞նչն էր նրան ոյժ տուողը, այդ տկար մարմնին տոկուն դարձնող եւ շատ քաջերից, լայնալանջերից աւելի գործունեայ, աւելի աշխոյժ եւ կտրիճ անող :

— Պօսի՛ր, ո՛վ վեղիր, դարձաւ թագաւորն իր փոխանորդին, գուշակի՛ր տեսնենք . ինչո՞ւմն է այդ գործաւորի ոյժի, զուարթութեան եւ տոկունութեան խորին գազանիքը : Ինչի՞ց է որ միւս այդ բոլոր հուժկու մարդիկ տնքում են, հառաչում աւելի թեթեւ, մանր գործերից, իսկ դա, այդքա՛ն թուլակազմ, այդքա՛ն ողորմելի, սակայն միշտ զուարթ եւ միշտ արագաջան :

Մեծ վեղիրը լռեց, շատ խոր մտածեց եւ չը կարողացաւ ոչինչ պատասխանել : — Պօսեցէ՛ք եւ դուք, իմ խորհրդականք, դարձաւ թագաւորը միւս վեղիրներին, ձեզնից ով ասի այդ գազանիքը, կը լինի իմ սիրելին եւ իմ մտերիմը :



Բայց ո՞վ կարող էր ասել այն՝ ինչ որ միայն Աստուած գիտէր եւ ինքը , գործաւորը : — Տէր իմ , խօսեց մի վեզիր , հրամայիր նրան աւելի ծանր գործ տալ , տեսնենք նա նոյնպէ՛ս կ'երգէ՞ գործելիս եւ այդպէս ուրախ քարեր կը կրէ՞ : Գուցէ նա աւելի եւ շատ ուժով է , քան երեւում է :

Ու թագաւորը հրամայեց որ քարեղէն սիւնի մեծ պատուանդանը գործաւորը կանգնէ :

Սա մօտ եկաւ , նայեց խոշոր քարին , կանչեց Աստուծոյ մեծ , հզօր անունը , ժպտեց , կոացաւ եւ մի շարժումով գլորեց նրան սիւնի ստորոտը : Յետոյ սրբեց քրանաթոր դէմքը եւ միշտ երգը բերնին՝ բարձրացրեց եւ գրեց սիւնի տակ :

Բոլորը ապշել էին : Այնտեղ մի բան կար . մի գաղտնի ոյժ անշուշտ , որով օժտուում էր չնչին գործաւորը եւ որից , ըստ երեւոյթին , ոչ արքան ունէր եւ ոչ վեզիրները :

Մօտ կանչեց արքան քաջ գործաւորին , փող տուաւ , գովեց եւ ապա հարցրեց . — Ինչո՞ւմն է ոյժդ , գործաւոր կտորի՞ճ . — Չը գիտեմ , տէ՛ր արքայ , ժպտեց կտորի՞ճը , ես այսքան գիտեմ որ երջանիկ եմ , ո՛չ մի վիշտ չունեմ , գործում եմ ուրախ , ապրում եմ ուրախ :

Արքան այդ խօսքից ոչինչ չը հասկացաւ ու հրամայեց վեզիրներին՝ խորհրդի ժողովուել , մտածել , փնտոել եւ գործաւորի ոյժի գաղտնիքը որոնել : Եւ զրա համար հինգ օր ժամանակ տուաւ :

Մինչ խորհում էին ամբողջ տէրութեան այդ խելօք մարդիկ , վեզիրներից ալեւորը , որ լաւ լսել էր գործաւորի ասած խօսքերը , հրաման խնդրեց մի օր հեռանալ , եւ մինչեւ երեկոյ Հասանի (այդ էր գործաւորի անունը) գործը դիտելուց յետոյ , մօտեցաւ նրան , ապա ընկերացաւ եւ կամեցաւ հիւր լինել նորա տանը :

— Տէ՛ր իմ , ասաց Հասանը — ես մի աղքատ մարդ եմ . մի խրճիթ ունիմ . վայել է որ դու այնտեղ մտնես եւ իմ չոր , խեղճուկ ընթրիքին մասնակցես :

— Հոգ չէ , իմ որդի . ես ուզում եմ տեսնել խրճիթդ ու կինդ , զաւակդ ու կեանքդ , ուզում եմ ստուգել թէ իրա՞ւ վիշտ չունես եւ երջանիկ ես . իրա՞ւ միշտ էլ զուարթ ես , միշտ երգը բերնիդ :

Եւ ծերունի վեզիրին Հասանը տուն տարաւ :

Երբ ներս էին մտնում , զրան առաջ երեւաց մի չքնաղ երիտասարդ կին , որ սիրալիբ ժպտալ դէմքին , մի հրեշտակաման մանուկ էլ գրկին՝ ընդ առաջ եկաւ , գրկեց ամուսնուն , անկեղծ

սիրով համբուրեց նրան , գիրկը տուաւ մանուկը , յետոյ միշտ զուարթ ներս տարաւ նրանց , ընթրիքը բերեց եւ այնպէս խնամքով , այնպէս մեծ սիրով կերակրեց , գլուկեց ամուսնուն , որ ծերունի վեզիրը երբե՛ք իր կեանքում այդքան չէր յուզուել :

Եւ երբ ընթրեցին մեծ զուարճութեամբ , հայրը առաւ մանուկին , նրա հետ խաղաց , նրան զուարճացրեց . մանուկն իր անմեղ , զուարթ ծիծաղով խրճիթը լցրեց , վեզիրին դիւթեց , այնպէս որ վեզիրն ինքն էլ սկսեց զուարթանալ , մանուկի հետ խաղալ . իսկ կինը , այդ սիրով , պաշտով , չքնաղ ամուսինը , այնքա՛ն գորովով , այնքա՛ն ջերմ սիրով փայփայեց , զբաղեցրեց ամուսնուն , որ մեծ վեզիրը գոչեց զմայլած .

— Վկա՛յ է Աստուած , վկա՛յ՝ մարդարէն , որ այսքան պատուական ու սիրող կին երբե՛ք չեմ տեսել :

— Եւ այսքան՝ իր կինը պաշտող ամուսին էլ , աւելացրեց կինը՝ գլուխն իր ամուսնոյ կրծքի վրայ դրած : Ամուսինս ինձ սիրում է . մենք երջանիկ ենք , գոհ , անտրտունք . աշխարհի անիրաւութիւնները մեր դռնից չեն մտնում , վախենալով սիրուց , համերաշխութիւնից . ցաւերը խուսափում են , վշտերը հալածուում . մեր ըրժիշկը սէրն է , մեր փրկիչը՝ սէրը . . .

— Վկա՛յ է Աստուած , կի՛ն դու , խօսեց վեզիրը , վկա՛յ նրա մարդարէն , որ դու իրաւունք ունես . չը կայ մեծ բժիշկ , չը կայ մեծ քաջալերիչ՝ քան սէրը , անկեղծ ու վառ , մըշտատեւ սէրը , որ իր ժպտով հերոս է շինում , քարեր է փշրում , արգելքներ ջարդում եւ որի առաջ աշխարհն անզօր է , ցաւը մի թզուկ . . . Իրաւունք ունիս , կին դու . ես այժմ հասկացայ թէ մարդուդ ոյժը ինչո՞ւմն է : Ոյժը սիրոյ ծնունդ է . սէրն է միայն այն մեծ ոյժը , որ կարող է լեռներ շարժել , աշխարհը փոխել , բոլոր անիրաւութիւնները անզօր դարձնել եւ ամէն մի փուշ՝ վարդի փոխանակել . . .

Ասաց , հիացած ելաւ գնաց եւ ամէն բան պատմեց հզօր արքային :

Արքան զարմացաւ եւ չը հաւատաց : Չէր տեսել երբեք անկեղծ սէր , որովհետեւ երբե՛ք չէր սիրուել՝ այլ միշտ վախ ազդել . չէր իմանում նրա ոյժը , որովհետեւ նրան չէին սիրել , այլ միշտ չողոքորդել :

— Խելքդ կորցրել ես , տխմար ծերունի , դուչեց նա խսկոյն , մի՞թէ կարծում ես որ Հասանի ոյժն հէնց դրանումն է : Ո՞վ է աւելի սիր-

ուած՝ քան ես. չէ՞ որ այս բոլորը խոնարհվում են ակնարկիս առաջ . չէ՞ որ ես կանայք ունիմ եւ շատ որդիներ. մի՞թէ պիտի ասես թէ նրանք ոչ մէկը ինձ չեն սիրում . . .

Ծերունին խոնարհուեց. կեանքիցը վախեցաւ եւ խոհեմութեամբ՝ լուռ կացաւ :

— Գնա՛, գնա՛, արհամարհութեամբ հեռացրեց նրան արքան, դու երագող ես, դու ծերացել ես . . . եւ կը տեսնես որ սխալվում ես: Ահա ես կը հրամայեմ որ այդ կնոջն եւ որդուն հարեմս քաշեն . եւ կինը, եթէ ասածիդ չափ գեղեցիկ է, ինձ կը պահեմ, ու պիտի տեսնես որ զրանով ոչինչ չի պակասել Հասանի ոյժից: Ու հրամայեց :

Հինգ ձիաւորներ իսկոյն Հասանի տունը շրջապատեցին, դուռը կոտրեցին, ներս մտան գիշերով, ամէն բան տակն ու վրայ արին եւ Հասանի կնոջն ու որդուն հարեմ քաշ տուին :

Միւս օր առաւօտ արքան կանգնած էր նոյն չէնքի վրայ, երբ Հասանը տխուր եւ արտասուած թոր՝ գործելու եկաւ :

Ամէնքը ժողովուած՝ նրան էին դիտում: Կուցաւ Հասանը, ուզեց էլի մի մեծ քար շարժել իւր տեղից՝ եւ չը կարողացաւ: Փորձեց աւելի փոքրը — բայց թեւերը կարկամել էին, ծրնկները ծալուեցին, փոքր քարն անգամ տեղից շարժել չը յաջողուեց :

Ու բարձրացաւ նա, յուսահատաբար ձեռքերը ցած թողեց, յետոյ կձկուեց գետին եւ ազիւղորմ ու սրտապատառ՝ հառաչեց, ասաց

— Ա՛հ, էլ ոյժ չը մնաց . . .

Թիֆլիս

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ՅԱԻԻՆ ՏՈՒՆԸ



Հին ատենուան պատմութիւն



Ճաճանչաւոր առտու մը, ծաղիկներու մէջ, իրարու հանդիպեր էին: Մէկը լեռնէն կ'իջնէր, սարի պէս ուղղաբերձ, աչքերը վառ ինչպէս փայլակը բարձունքներուն: Միւսը հովտէն կուգար, վազող ջուրերուն պէս մազերը վճիտ, հասակը ճապուկ ինչպէս երկայն վարդենիները:

Չաւէն ժայթքած էր լեռներուն զոգէն: Ժայ-

ները որ երկնքին կը սպառնան՝ անոր խորխտ ըլլալ սորվեցուցած էին ու խիզախ: Մեծ անտառները՝ որոնք արեւուն կ'արգիլեն իրենց խորը թափանցել, վտանգին տարփանքը տուած էին անոր: Եւ սարսափը երբեք անոր մօտեցած չէր: Կատարներն ի վեր մագլցեց, վիրապներու ալքը խոյացեց էր, եւ բոլոր գաղանները դողահար փախեր էին անոր աղեղին առջեւէն: Ինքն իսկ Աղեղ մըն էր, խանդով հիւսուած, քաջութեամբ պրկուած, եւ լարուած դէպի խորին որսաստանը կեանքին:

Յիլլա ծլած էր մանկական առուններուն ափունքը, եղէգներուն զով նուագին մէջ: Արեւը անոր մարմինը փայփայեց, անոր մէջ ոսկի էր ցաներ: Ծաղիկներն իրենց ժպիտը, թռչուններն իրենց թեւերը անոր անձին հաղորդեր էին: Թափանցիկ կապուտակ կենցաղի մը մէջ անոր օրերը սահած հալած էին քնքաբար՝ ինչպէս ամառուան երկնքին մէջ բեհեղ ամպերը: Եւ ան եղեր էր կենդանի Քնարը, գեղձան լարերով, լոյսին մէջ բաբախուն:

Երբ դէմ առ դէմ ելան եւ երբ իրենց աչուրներն իրարու բաղխեցան, իրենց թուեցաւ որ արեւը կը բիւրապատկուէր, թէ բովանդակ աչխարն կ'երգէր գինովցած, եւ թէ երկինքն ի վար վարդ կը տեղար: Ստեղծագործ շունչը անցաւ իրենց վրայէն. եւ զգացին որ կը ծնէին: Իրենց սրտին մէջ աստղեր բացուեցան, իրենց մարմինը ցնծաց անմահական հոյզովը հինաւորաց անտառներուն, եւ իրենց երակներուն մէջէն տիեզերքին արիւնը հեւալով խայտաց: Ու երկու կեանքերը՝ դիցական տենդին մէջ՝ խառնուեցան: Եւ տարրերը, անոնց համբոյրին շուրջը բերկրանքով հնչեցին:

Ան ատենը, ճեմել ելան՝ ձեռք ձեռքի՝ գոյութեան մէկ ծայրէն մինչեւ միւսը: Յաղթական անցք մըն էր ան՝ հարսներգու տիեզերքին մէջէն որ անոնց չորս բոլորը կը խնդար: Անոնց ճամբուն վրայ, վտակները կը ճուային որ պատկերներն իրենց ջուրին մէջ կախեն, ծառերը հայրաբար գլուխնին կը ճօճէին, հորիզոնները կը ժպտէին սիրապատար աչքերու պէս, եւ հովը անոնց մազերուն մէջ հէքեաթներ կը սուլէր:

Չաւէն Յիլլային համար ծովերուն խորը մըխըրճեցաւ բուստ ու մարգրիտ քաղելու, յովաղներ խեղդեց անոնց աչուրներովն անոր մանեակ հիւսելու, եւ եթէ անտառ մը անոր ճամբան գոցէր, ձեռքովը ծառերը կը փրցնէր որ ան հանգարտ անցնի: Յիլլա, Չաւէնին համար ծաղիկներ կը ժողվէր մաղերուն խառնելու, սիրամարգ-

ներ կը փետտէր անոր պատմութեան հիւսելու , եւ երգեր կը մայէր որ հողին օրօրէ :

Ուրախութեամբ փաթթուած , կ'անցնէին : Ուղիները իրենց առջեւ կը բացուէին ինքնամատոյց գրկերու պէս : Իրենց բոպիկ ոտքերուն տակ երկրին սիրտը կը զգային գորովով արփուռ : Երկնքին հողին անոնց գլխուն վրայ կ'իջնէր , անոնց մարմինը պայծառութիւնով կը պարուրէր : Ու երբ իրենց աչուքներն իրարու մէջ ընկզմէին , կարծես երկիրն ու երկնքն էին իրարու զմայլած :

Իրենց երջանկութիւնը դաշնակեցին միջոցին մէջ թեւատարած աստեղազարդ նուազներով : Իրենց հպարտութիւնը սեւեռեցին ճամբուն ժայռերուն վրայ քանդակուած շնորհալի խորհրդանշաններով : Հողին վրայ իրենց ստուերը զիրենք հրճուեցուց ձեւերուն լիալիբ գեղեցկութեամբ : Երկայն թափառումներէն հանգչելու համար , ծովուն սպիտակ մուգնութեանը դիմացը կամ աւնու ըլլակներուն զմրուխտէ կողերն ի վար կանդ կ'առնէին բոյն մը յօրինելու իրենց երազին պատկերովը կերպաւորուած : Մերթ ալ , կը կենային , արշալոյսներուն քաղցրութեանը մէջ , մին միւսին արտայայտելու՝ բառերուն թանկագին մոզութեանը շնորհիւ՝ գողտրիկ ու ահեղ գաղտնիքն իրենց սիրոյն : Բայց երբեք իրար այնպէս չթափանցեցին ինչպէս երբ անշարժ , անբարբառ , իրարու կը նայէին :

Իրենք իրենցմով արբշիւ , պաշարուած ծիածանաւոր ամպով մը որ իրենց հողիէն կը գոլորչանար , զիրենք պրտան իսկ կարծեցին համաշխարհական գոյութեան , եւ համարեցան որ սիւեզերքը իրենց շուրջը կը թաւալէր : Իրենց ճակատը չխոնարհեցաւ եւ ոչ մէկ զօրութեան առջեւ , բայց ի միայն Արեւէն , զոր իրենց հայրը կը զգային , եւ զոր կ'օրհնէին , առաւօտներուն վեհաշուք ամփոփմանը պահուն , իրենց հողիին հօլաթեւ վերամբարձումովը : Եւ կը հաւտային որ երբ ծայրագոյն ափունքը հասնին երկրաւոր ուղեւորութեան , թեւեր պիտի բռնանին իրենց ուսերէն , եւ իրենց մարմինը պիտի սրովբէանայ , եւ յաւիտենական միջոցներուն մէջէն պիտի վերանան մինչեւ Արեւը , անոր ծոցին մէջ լուսեղէն օդածածան գոյութիւն մը սկսելու :

Շատ հեղ , ճամբան , դիակներու վրայ կոխած անցած էին , եւ չէին հասկցած : Երկայն վախտ մութրացկաններ մերթ դիմացին կ'ելլէին , աչուքներն մարած եւ ոսկրուած ձեռքերնին օղին մէջ բաց , բայց անոնք չէին տեսներ : Երբեմն ալ

խուլ ամբօխներ կ'երեւային դաշտերուն մէջ , հողին վրայ կ'քած , զեռալով գետնամած՝ մըրջնակոյտերու պէս , եւ իրենց մթին խլրտունէն դառն բզղիւն մը արձակելով , բայց անոնք կ'անցնէին անվրդով որպէս թէ միս միտակ ըլլային երկնքին տակ : Խուճաք խուճաք աղաւաններ ատեն ատեն անոնց գլխուն վրայէն կանչալով կը չըջըջէին , բայց անոնք չէին իմանար իրիկուան տօգոյն լուծութիւններուն մէջ՝ եթէ ականջ դնէին , պիտի լսէին հեծիւնը որ երկրին աղիքներէն կը բարձրանայ , ծառերուն մէջէն լացի պէս կ'անցնի , եղերական սարսուռ մը կուտայ ստուերին , ու թեւ կ'առնէ մինչեւ աստղերը որոնք արցունքի պէս կը զոզողան : Բայց անոնք ուրիշ բան չէին լսեր այլ միայն մրմունջն իրենց համբոյրին եւ գաղջնուաղը իրենց երկու մեծատրոփ սրտերուն : Ո՛չ գիշերներուն տիեզերական սուգը , ո՛չ ծերութիւնը որ աշնան դէմքին վրայ կը գեղնի եւ կը խորշովի , ո՛չ աստղերը որ անհունն ի վար կ'իջնան կը մեռնին , եւ ո՛չ հիւժուած մահիկը պաղ կէս-գիշերներուն՝ չէին երբեք բացած իրենց հոգւոյն առջեւ այն յեղակարծ պատառուածքը՝ որուն խորը Վախը կը սահի : — Գիշերին մէջէն արշալոյսը կը տեսնէին : Ու թեւաւոր , թեթեւ , անոնք միշտ դէպի Արեւը կ'ընթանային :

Բայց ահա իրիկուն մը որ կ'իջնէին բլուրներու ամենէն ծաղկաւէտէն , աղետաւոր Հանդիպումը ունեցան : Ամբողջ օրը , բարձունքին ազամանդէ լոյսին մէջ խաղացած էին : Երբէք ընտելուէր չէր եղած այնչափ ծիծաղկոտ որչափ այդ օրը : Կատարէն տեսեր էին քաղցր համապատկեր մը՝ վարը մինչեւ հեռուն տարածուած , կանանչ ու վարդ , արծաթափայլ գոլորչներու մէջ ծփուն : Մեծ թռչունները սրտնք այերթն մէջէն կը սահէին , պատուական ակունքի փաղփիւններ կը թափէին իրենց թեւերէն : Բոլոր ծաղիկները երկնքն ի վեր կ'երգէին : Եւ իրենք իսկ երբեք այնքան գեղեցիկ երեւցած չէին իրարու , երբեք զիրենք այդքան հզօր ու պայծառ զգացած չէին որքան այդ պահուն : Ծիլլա հողէն կը ցայտէր ինչպէս ձերմակ աղբիւր մը մարգրտակալակ՝ դէպի երկնքը սլացիկ : Զաւակն կը ցցուէր ինչպէս կանանչ թառոտեան կաղնի մը՝ դաշնակաւոր բոյներով թրթռագին : Իրենց հպարտութիւնը անեցաւ , երկնքին չափ լայնեցաւ : Եւ իրար զրկած ատեննին կարծեցին որ տիեզերքը կը սեղմէին իրենց թեւերուն մէջ : Իրենց թուեցաւ որ կեանքին կատարը հասած

էին : Աստուած զգացին զիրենք : Եւ սպասեցին թեւերուն որ զիրենք մինչեւ Արեւը պիտի բարձրացնէին : Բայց փամբրուն անիւն իր հողովումը երազեց, իրիկուան զալիւթիւնն օգին մէջ կախուեցաւ , ստուերները դուրս ելան իրենց թաքըստոցէն , եւ ահա Արեւը կը փայտէր : Զայն մը զիրենք վար կանչեց : Եւ իջան :

Լոյսը հոգի կուտար արիւնտտ հեւքով՝ երբ ստորոտն հասան բլրին : Եւ յանկարծ , կուծանի մը անկիւնը դառնալուն, անվախճան ձոր մը տեսան որ իրենց առջեւ կը բացուէր ու կ'երթար կորսուել մինչեւ անընդգրկելի խորութիւններ : Հազարաւոր ագռաւներ կը պտուտքէին , շատ ցած , ամենքը մէկանց պտուտով , գունատ ստուերին մէջ որ ծանրաբար կը մազուէր ճախճախուտ գետնէն՝ փտտած ծաղիկներու գարշահոտութիւն մը կը բարձրանար : Սեւ կարկամ ծառեր կը ցցուէին , եւ անոնց ետին՝ հեռուն՝ երկնքին արիւնը կամաց կամաց կը հասնէր :

Անձանօթ վրդովումով մը լեցուած , Զաւէն ու Յիլլա իրարու նայեցան , եւ հիւանդ վերջալոյսին մէջ զիրենք ճեպ ճերմակ տեսան , մեռած գէմքերու պէս : Այն ատեն , առաջին անգամ ըլլալով , սոսկումը ճանչցան : Ուղեցին փախչել : Բայց ձորը զիրենք կը քաշէր , զիրենք կը կապէր , զիրենք կը պաշարէր : զգացին որ ըստուերը իրենց մէջը կը թափանցէր , եւ այնպէս եկաւ իրենց որ հոգիներն կը մութնար : Սեւ ծառերը զլուխներն զանդազ երեքոյնելով երկայն հովի մը տակ՝ զիրենք ներս կը կանչէին , ներս գէպի խորը դժնէ ձորին :

Իրարու սեղմուած , յառաջացան անխօսուկ : Եւ ահա տեսան , ձորին բերանը , խոշոր մութ տուն մը որ՝ գետինը պառկած՝ անվերջ կ'երկըննար : Անոր պատերէն արիւն կը մզուէր , եւ անոր պատահանները սեւ ծակեր էին , փորուած աչքերու պէս :

Իրանը առջեւ , ոսկորներու վրայ , պառաւ մը կար նստած : Անոր մազերը ճերմակ էին , աչքերը սեւ էին . անոր բերանը կարմիր , ու լաթերը սեւ էին : Անհասնում սեւ գերձան մը մասներուն մէջ բռնած , կը մանէր անդադար , եւ մանած ատենը , մասներէն արիւն կը վազէր : Եւ կ'երգէր անուշ զանգաղ ձայնով մը .

Յաւին տունն է ասիկա .  
 Կեանքին սիրտն է ասիկա .  
 Արեւները կը մարին ,  
 Տերեւները կը թափին .  
 Ու բոլոր աչքերը պիտի գոցուին . . .

Մահը շինեց կեանքը ,  
 Որպէս զի խաղայ անով :  
 Եւ ինչ որ ես գիտեմ ,  
 Միմիայն ե'ս գիտեմ . . .

Մարտիրոս , Զաւէն ու Յիլլա ներս մտան զոնէն :

Տմոյն մթութեան մը մէջ , ողբեր կը գալարուէին : Մարած նշոյցները որ սեւ պատերուն խորին ճեղքերէն ներս կը սողոսկէին , երեւան կը բերէին մարդկային կերպարանքներ՝ կանաչորակ տղամի մը մէջ եռուզեռուն : Եւ տուն մը չէր ան , հապա տեսակ մը քարայր անչափելի տարածութիւններով : Գետինը կ'երկուէ՛լէր յիմար զիկզակներով , հոս վիհեր կը բանար սուտութեան , անդին կ'ուռննար գիշերի կոյտերով : Եւ ասիկա կ'երթար կ'ընդարձակուէր մինչեւ յաւիտեան , հետզհետէ աւելի թանձր մթութեան մը մէջ՝ ուր սակայն կը զգացուէր շարժիլը ա'լ աւելի մութ ձեւերու , արեւագոյն շրջմով հուրերու ցոլացումներովը : Աշխարհ մը ամբողջ , վարի աշխարհը , վերինին ներքեւ տարածուած , զայն իր վրայ կրելով , ինչպէս արմատները կը կրեն ծառը : Եւ անհամար էր ամբողջ էակներուն , որոնք կը տքային՝ աներեւոյթ զօրութեան մը տակ որ զանոնք ամէն կողմէ կը սեղմէր ու կը ճմլէր : Պաղ հով մը կ'անցնէր օդին մէջէն , պաղ հով մը անհուն թեւերով . եւ անոր անցքին վրայ խաւարը կը սարսուար : Զաւէն ու Յիլլա մահուան հոտը առին անոր մէջ : Ծածիծի վրայ ցոլացող երկու շուշանի պէս էին իրենք : Իրենց ճերմակութիւնը կը վիրաւորէր համայնատարած ստուերը : Եւ ամչցան իրենց ճաճանչումէն : Իրենց գեղեցիկութեանը մէջ կը մտէին : Կանգ առին քարացած : Բիւրաւոր աչքեր , արիւնով լեցուն , մութին մէջէն իրենց վրայ կը սեւեռուէին : Վիթխարի կոհակներով՝ ողբը կուգար իրենց գլխուն վրայէն կ'անցնէր . . . Այն ատեն , Արեւը յիշեցին , ու ճեւքերնին բարձրացուցած , զանի կանչեցին . « Եկու՛ր , կ'աղաղակէին , եւ կուր սպաննէ՛ այս խաւարը . . . » Բայց այդ յիշատակին , խաւարն աւելի թանձրացաւ . վերջին նշոյլը մեռաւ ճեղքերուն բերանը , ու յանկարծ իրենց վերեւ , սեւ գունտ մը տեսան , լուսին մը մթութեան , որ աղջամուղջ կը սփռէր : Եւ ահա քարայրը մեծցաւ , անհունցաւ , տիեզերք մը եղաւ : Աչքերուն կարմիր կրակները , շրջմովի բոցերը եւ փոսփորային փայլունը զոր ողբը կը հանէր օդին մէջէն անցնելուն , բոլոր այդ ցաւի լոյսերը՝ երեւան կը բերէին երկայն

հետաւորութիւնները խաւարի տիրապետութեանը : Ահա տեսան զիմացնին՝ ծով մը որ կը փրփրար սեւ ալիքներով : Վերը երկինք մը կը ծաւալէր սեւ աստղերով . եւ ողբը բերապատկը ունեցաւ . ալիքները՝ խորէն՝ կը կոծէին . աստղերը՝ վերէն՝ կ'եղերերգէին . միջոցին մէջ՝ ստուերը կը հեծկկտար . ու միլեոններով , միլեոններով էակներ՝ մրաձայն՝ կը կողկողէին . . .

— Ինչո՞ւ , գոչեց Չաւէն :

— Աւա՛ղ , մնչեց Յիլլա :

Ու մին բոռնցքը կը սեղմէր , մինչդեռ միւսը կուլար՝ դուխը հակած :

Եւ ահա զգացին նոր սարսուռ մը իրենց մէջ , սարսուռ մը անուշ ու անվախճան , աւելի անուշ քան իրենց բոլոր համբոյրները :

Իրենց երկու սրտերը որ իրարու կապուած էին՝ կը քահուէին , կը տարածուէին բոլոր աչքերուն վրայ որոնք կ'արիւնէին :

Եւ խորհեցան քանդել սեւ տունը :

Յիլլա միտքը բերաւ օձերը , որ իր աչքերէն թովուած , քար կտրեր էին :

Չաւէն յիշեց վազրեը զոր ձեռքովը բզբտեր էր :

— Դրանք քով , ըսաւ Չաւէն , ծեր կին մը տեսանք . անիկա կեանքը կը մանէր մասներուն մէջ . անիկա սարդն է այս սեւ ոստայնին :

Եւ վազեց դէպի գուռը , որ պառաւը սպաննէ :

Անիկա հոն էր միշտ , անշարժ : Եւ մասնեքը կը մանէին յաւերժական գերձանը : Եւ կ'երգէր անդադար .

Ինչ որ ես գիտեմ ,

Միմիայն ես գիտեմ . . .

— Ըսէ՛ ինձի գիտցածդ , պառաւ .

Ու Չաւէն անոր մազերէն բռնեց , եւ ուզեց անոր գլուխն իր գաստակին տակ ճզմել : Բայց պառաւը չչարժեցաւ : Եւ Չաւէն զգաց որ մատները այրեցան ուր որ անոր մազերուն դպեր էին : Ոսկորներուն մէջէն օձեր անցան : Իրեն թուեցաւ որ կը ծերանար : Մուկի պէս ցնդեցաւ իր աստուածութիւնը : Խեղճ զգաց ինքզինքը :

Ներս դարձաւ Յիլլան փնտռելու : Յոգնած , վհատած , անոր աչուրներուն կարօտը , անոր թեւին տակ քնանալու ծարաւն ունէր :

Սեւ բլրակի մը ծայրը կեցած , Յիլլա կ'երգէր : Անոր մարմնէն կապոյտ նշոյլներ կը թափէին . եւ խաւարը կ'անուշնար անոր շուրջը . եւ էակները խուժը խուժը անոր ոտքը կը դիմէին . եւ ողբը կը թուլնար անոնց բերնին մէջ :


— Յիլլա՛ , ըսաւ Չաւէն անոր մօտենալով . պառաւը անպարտելի է . անոր մազերը փախան ձեռքէս . եւ քիչ մնաց մեռնէի . . .

Յիլլա կ'երգէր՝ աչուրները գոց , Վեր առաւ կողերը , եւ Չաւէնին նայեցաւ : Կապոյտ նշոյլները կ'աճէին անոր շուրջը : Անոր բիբերը մեծցիր , արեւ էին դարձեր : Նայուածքը լայնցեր ծով էր դարձեր : Մազերուն մէջէն աստղեր կը ժպտէին : Երգը մարեցաւ շրթունքին վրայ : Ողբերը թմրեր էին Խաւարը անձայն էր : Յիլլա մատը բերնին տարաւ ու լուութիւնը պատկերեց , յետոյ թեւերը տարածեց գլխութեան ձեռով , եւ կուրծքը դէպ առաջ ընծայեց՝ զոնդութեան շարժումովը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ԳԵՂԵՑԿԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԵՐԸ



Քիչ մը դիտողութիւն մեզ դիւրաւ կը համոզէ թէ մեր առաջին տպաւորութիւնները գեղեցկագիտական վայելքներու աղբիւրներէն կը քահնք : Մանկութեան մէջ , ուր իրերուն ծանօթութիւնը դեռ չունենալով , անկարող ենք վնասակարը օգտակարէն զանազանելու , վառարանին մէջի կարմիր կրակը , կամ հրապուրեչ գոյներով զգեստի մը փայլուն կոծակները՝ շատ աւելի մեր ուշադրութիւնը կը գրաւեն քան թէ ուրիշ ո եւ է նոյն իսկ անհրաժեշտ կերպով կարեւորութիւն ունեցող առարկայ մը :

Այսպէս նաեւ հաստատուած իրողութիւն մըն է թէ նախնական մարդը , որուն գիտակցութեան զարգացման աստիճանը չի տարբերի մեր մանկութենէն , կլիմային անպատեհութեանց կամ զինքը չըջապատող վնասակար տարրերուն գէմ պաշտպանուելու միջոցներ փնտռելէ շատ առաջ իր մորթին վրայ զանազան պատկերներ կը գրծաւորէ կամ զայն կը ներկէ , գեանէն ժողոված փայլուն քարերով զարդեր , մանսակներ կը չինէ . վայրենի ժողովուրդները կը կատարին արդէն գեղարուեստական շրջան մը . մեծ մասամբ ունին իրենց երգերը , պարերը , երաժշտական գործիքները : Գեղեցկին սերմերը ոչ միայն տրդուն կամ նախնական մարդուն մէջ կը գտնենք , այլ նաեւ դեռ աւելի հեռուն , մինչեւ անասուններուն մէջ : Գունագեղ փետուրներով զարդարուած թռչունները , ինչպէս անուշ ձայնով եր-

գողները, իրենց սեռային յարաբերութեանց մէջ ամենէն աւելի յաղթանակ տանողներն են: Դիտուած է որ թռչուններու տեսակ մը կայ որ ծաղիկներով եւ գեղեցիկ փետուրներով անկիւն մը կը պատրաստէ իր հիւրընկալելիք էզը հրապուրելու համար: Դեռ շատ օրինակներ կարելի է յիշել որ կը բացատրեն գեղեցիկութեան կատարած պաշտօնը անասուններուն մէջ: Ո՞վ չի գիտեր երաժշտութեան ձիւրուն վրայ ըրած ազգեցութիւնը, ինչպէս սրինգը օձերուն վրայ: Այս ամենէն կ'երեւայ թէ ի՞նչպէս անասուններուն մէջ անգամ կան այնպիսիներ որ գեղեցիկութեան տարրերով իրենց ուրիշ պէտքերուն յագուրդին կը հասնին. եւ մասնաւորելով մեր խօսքը մարդկային ցեղին համար, կը հետեցընենք թէ գեղեցիկին պէտքը կանխած է մեր միւս պէտքերը եւ մեր զգացումները առաջին անգամ իրմէ ազդուելով կազմած են մեր առաջին տրպաւորութիւնները: Եւ քանի որ զգայարանքներու միջոցաւ կը շինուի մեր իմացականութիւնը, բանաւոր կը գտնենք, կատարելու համար մեր զարգացումը այն ուղղութեամբ ուր բնութիւնը մեզ կ'առաջնորդէ, մեր դաստիարակութեան մէջ նախ եւ առաջ ազդել մեր այն զգայարանքներուն վրայ որ մեզ առաջին անգամ արտաքին աշխարհի հետ հաղորդակցութեան մէջ կը գնեն: Արդ՝ գեղեցիկը կանխելով մեր միւս կարողութիւններուն զարգացումը, ինքը կը մնայ մեր դաստիարակութեան սանդղակին առաջին աստիճանը:

Իսկ գեղեցիկին դերը կը շարունակուի ու կը մնայ իր սեպհական զարգացումին հետ եւ կը դառնայ քաղաքակրթութեան ամենակարեւոր տարր մը, երբ անհատին գիտակցութիւնը կը սկսի հետզհետէ զարգանալ, երբ իր առաջին տպաւորութիւնները որ պարզ զգայութիւններ են նախ՝ զգացումներու եւ գաղափարներու փոխուելով, կը սկսի այդ տպաւորութիւններով բազկացութիւններ ընել, իր ուղեղին մէջ շինուած պատկերները իրարու քով բերել, անոնց առնչութիւնը տեսնել, իրարմէ հետեւութիւններ հանել, զանոնք ներգաշնակել երեւակայել: Այն ժամանակ կը ծնին գեղարուեստները, զգացումներու եւ գաղափարներու արտայայտութեան գերագոյն միջոցը:

Գեղեցկագիտական կարողութեանց այդ բարձրագոյն զարգացումը կ'ենթադրէ նաեւ մեր միւս կարողութեանց ալ հաւասար զարգացումը: Անհրաժեշտ է այդ պարագային արդէն զարգացած միջավայր մը, ուր տարիներու ընթացքին

մէջ կուտակուած ժառանգական ազդեցութիւններ, հաստատուած ընկերական ձեւեր, կեանքի ըմբռնման եղանակներ, ներքին եւ արտաքին բազմատեսակ ազդեցութիւններ, ծնունդ կուտան գեղարուեստներուն եւ կ'որոշեն գեղեցիկ ըմբռնումը: Բայց եւ այնպէս, ինչքան որ գեղարուեստները իրենց ծնունդ տուող միջավայրին արդիւնքն են, հաւասարապէս ընդունելու ալ է Կիւլեոյի հետ թէ անոնք ալ իրենց կարգին կ'ազդեն այն միջավայրին վրայ ուրիշ ծնունդ առած են նախ եւ կը բարեփոխեն զայն, ինչպէս կ'ազդեն նաեւ միեւնոյն միջավայրին հետ շփման մէջ եղող միջավայրներու վրայ: Այսպէս, եթէ այսինչ երկիրը Տանթէի մը կամ Շէյքսբիքի մը ծնունդ կուտայ, այն սերունդները որ պիտի ազդուին այդ բանաստեղծներով՝ կարելի չէ որ չտարբերին իրենց նախորդ սերունդներէն որոնց կրած ազդեցութիւններուն աղբիւրները տարբեր եղած են: Այսպէս ուրեմն, հանճարը կը դառնայ թէ՛ միջավայրի մը ծնունդը եւ թէ՛ միջավայրի մը ծնողը: Միեւնոյն ազդեցութիւնը կը տարածուի տարբեր միջավայրերու վրայ ալ. օրինակի համար հարաւային ժողովուրդներու արուեստները որ զիրենք արտադրող ժողովուրդներուն յատկանշական բարքերը, կլիմային եւ հողին ազդեցութիւնը, քաղաքական հաստատութեանց եւ ընկերական ըմբռնումներուն դրոշմը կը կրեն՝ կարելի չէ որ հիւսիսային ժողովուրդներու ծանօթանալէն ետեւ — որոնց զգալու եւ արտայայտելու եղանակները կը տարբերին իրենց իններէն — չազդուին ատոնցմէ եւ չներմուծեն այդ նոր ազդեցութիւնները ոչ միայն իրենց արուեստին, այլ նաեւ իրենց ամէն կարգի արտայայտութեանց մէջ:

Ընդունելով որ գեղեցիկին ըմբռնումը կը տարբերի ցեղէ մը ուրիշ ցեղ, ժամանակամիջոցէ մը ուրիշ ժամանակամիջոց, միջավայրի զանազանութեան պատճառովը, ակնհայտ է որ գեղեցիկութիւնը այն բացարձակութիւնը չէ զոր շատ մը իմաստասիրութիւններ գաւանած են: Այսօրուան գեղեցիկը կրնայ վաղը տգեղ երեւալ, եւ կամ արեւելցիին հաճելին կրնայ հիւսիսի ժողովուրդներուն անհաճոյ ըլլալ. այսպէս նաեւ՝ նոյն միջավայրին մէջ ապրող անհատէ մը տարբեր անհատի մը համար: Եւ ըմբռնման այս գանազանութիւնները օրըստօրէ շեշտուելու կը ձգտին ի շնորհս այն խառնուածքներու տարբերութեանց որով իւրաքանչիւր անհատ իր որոշ անհատականութիւնը կը զգենու: Սակայն այս ան-

հատականութեանց եւ ըմբռնումներու զանազանութիւնները, փոխանակ մեզի զիրար անհասկանալի դարձնելու, զիրար մէկզմէկէ հեռացնելու, զիրար աւելի թափանցելու, զիրար ըմբռնելու պէտք մը ստեղծելով, մերձեցումի կը մղէ մեզ, որով գեղեցիկ արտադրութիւնները համակրութեան եւ ընկերականութեան զլխաւոր տարր մը կը կազմեն :

Սակայն ինչքան որ միջավայրերու եւ խառնուածքներու տարբերութիւնները զանազանութիւն մը յառաջ կը բերեն գեղեցիկին ըմբռնման մէջ, իրողութիւն մըն ալ կայ որ տիրական է : Գեղեցիկը կը պարունակէ իր մէջ այնպիսի տարրեր որ ամէն տեղի եւ ժամանակներու մարդոց հասկանալի կը մնան, եւ կ'ըլլան այսպէս տիեզերական եւ կենդանի լեզու մը շատ այլազան պայմաններու մէջ յեղաշրջած էակներ իրարու միացնող : Այդ համադրութիւններն են որ մինչեւ մեր օրերը կ'ապրեցնեն հնդկական եւ յունական արուեստները . այդ կենդանի լեզուն է որ մեզ հասկանալի կ'ընէ Եգիպտոսի աւագներուն մէջէն հազարաւոր տարիներ ետքը յանկարծ ցցուող մարմարի կտոր մը Մեծ արուեստները կը ձգտին այս մշտատեւ տարրերը հաւաքելու : Այն արուեստները որ կ'ապրին մասնաւոր ժամանակի մը կեանքովը միայն, դատապարտուած են կորսուելու իրենց կարճատեւ շրջանին հետ : Վինչի, նկարչութեան վրայ գրած իր հատորին մէջ, իբրեւ իր գեղեցկագիտական ամենէն կարեւոր սկզբունքը կը կրկնէ՝ ջանալ ամէն դասի եւ ժամանակի մարդոցմէ հասկցուիլ, եւ իր այդ ըմբռնումովը ըրած արուեստին մէջ ինքը յաջողած է գերազանցօրէն գտնել եւ միացնել կենսականութեան այն տարրերը որ կ'ապրին ամբողջ մարդկութեան կեանքովը :

Գեղարուեստները, ունենալով իրենց համար ամէն բանէ աւելի երեւակայութեան ասպարէզը, կը յաջողին շատ անգամ ճշմարտութեան մը բեկորներէն ամբողջութիւն մը շինել . բանաստեղծ մտքի մը համար բաւական է միայն աչքի առջեւ ունենալ աւերակի կտոր մը, հետեւեցնելու համար ամբողջ շէնք մը, աշխարհ մը, մարդկութիւն մը իր հողիովը, իր ձգտումներովը : Էտկար Քինէի կարծիքով, Հոմերոս՝ կործանած քաղաքակրթութեան մը աւերակներէն կրցած է հետեւեցնել Տրոլան . երկրագործին արօրին հանդիպած երկրաբանական ժամանակամիջոցներու պատկանող մարդկային ոսկորէ մը, հետեւեցուցած է իր գիւցագներուն եւ կիսապտուածներուն աշխարհը : Ափերով կարելի է օրինակներ քա-

ղել, որոնք ցոյց կրնան տալ թէ ինչպէս երեւակայոտ միտք մը ճշմարտութեան նշոյլէ մը կը հասնի բովանդակ ճշմարտութեան մը : Բնագրին շնորհիւ՝ որ ամենէն աւելի արուեստագէտ հողիի մը մէջ սրուելու ասպարէզ կը գտնէ, բանաստեղծ մտքեր կը յաջողին հասնիլ այնպիսի ճշմարտութիւններու զոր գիտնականները իրենցմէ շատ ուշ, փորձառական միջոցներով կը յաջողին հաստատելու : Վերջի ատեններս գրականութեան եւ արուեստի մէջ ներկայացուած ոճրագործ բնագրներուն վրայ գրուած շատ հմտալից գրքի մը հեղինակը, Էնրիքօ Ֆէրրի(1) շատ յստակօրէն կը ցուցնէ թէ ինչպէս Շէքսպիր բընագրի զօրութեամբ լոկ՝ հրաշալի ճշգրութեամբ նկարած է ոճրագործ երեք տեսակ տիպարները, Համէթ, Մաքպէթ եւ Օթէլլօ, որոնց առաջինը կը համապատասխանէ խնդ ոճրագործին, երկրորդը ի ծնէ ոճրագործին եւ երրորդը կը քի ոճրագործին : Այս երեք տեսակ ոճրագործ տիպարներու գոյութիւնը այս դարուս մէջ միայն գիտական հետազոտութիւններով Լօմպրօզօ եւ ուրիշ ոճրագործական հոգեբանութեամբ գրաղող գիտուններ հասած են հաստատելու :

Որպէս զի կարելի ըլլար աւելի մանրամասնօրէն եւ որոշ կերպով բացատրել թէ գեղարուեստներուն զերը մինչեւ ո՛ւր կրցած է ընդարձակիլ, հարկ է զիրենք բաղկացնող իւրաքանչիւր ճիւղերն ալ, ըլլայ Գրականութիւնը, ճարտարապետութիւնը կամ Երաժշտութիւնը, առանձին կերպով քննել, փնտոել ամէն մէկուն ծագումը եւ զարգացման շրջանը, ինչ որ կարելի է փորձել առանձին ուսումնասիրութիւններով : Բաւական է միայն ի նկատի ունենալ հնութեան կամ ներկայ ժամանակներու մէջ զարգացման բարձր աստիճանի մը վրայ գտնուած այն ամէն մեծ ցեղերը որոնք գեղեցիկին այնքան կարեւոր տեղ մը տուած են : Ժողովրդի մը քաղաքակրթութեան աստիճանը հասկնալ կարենալու մեծագոյն ճշմարտաչափները իրենց գեղարուեստներն են : Եւ իրենց կարեւորութիւնը օրստօրէ հասկցուելուն եւ շեշտուելուն մէջ նոր սպացոյցն է որ Բարիզի պէս մտաւորական կեդրոնի մը մէջ, ուր գեղարուեստական մեծ եւ փոքր այնքան հաստատութիւններ կան, ուր աշխարհի ամէն անկիւնէն, ամէն կարգի արուեստագէտներ կուգան իրենց փայլը միացնել՝ բնիկ արուեստագէտներուն պերճ պայծառութեանը, քա-

(1) Enrico Ferri. — Les criminels dans l'art et la littérature.

նի մը շատ ծանօթ անձնաւորութեանց նախա-  
 ձեռնութեամբ՝ ժողովրդին մէջ գեղեցկին գաս-  
 տիարակութիւնը աւելի շատ տարածելու եւ  
 զայն մանաւանդ զիւրամատչելի ընծայելու հա-  
 մար նորանոր միջոցներ ձեռք առնուեցան. այս-  
 պէս անցեալ տարի, Պ. Քաղիւ Մենտէս յաջո-  
 զեցաւ Օտէօն թասրոնին մէջ ժողովրդական  
 աժանագին ցերեկոյթներ հաստատել, ուր Ֆը-  
 րանսայի մեծագոյն գերասանները, օտար եւ  
 ֆրանսացի գրագէտներէն ընտրելագոյն հատ-  
 ոււածներ կ'արտասանէին. Պ. Կիւսթավ ժէֆ-  
 ֆրուա, գեղեցիկ յօգուածներու շարքով մը, կըր-  
 ցաւ կառավարութիւնը համոզել որ մանաւոր-  
 րապէս գործաւոր դասակարգին մատչելի գիշեր-  
 ուան թանգարան մը հիմնուի ուր արուեստա-  
 գիտական ամէն տեսակ գործեր ցուցադրուին :

Այս ամենը անգամ մը եւս մեզի կը ցուցնեն  
 թէ որքան ուժով է մարդկութեան մէջ գեղեց-  
 կին պէտքը, եւ հակառակ դժբաղդարար այն  
 արմատացած սխալ գաղափարին որով գեղար-  
 ուեստներուն այնքան կարեւոր տեղ մը արուած  
 չէ մեր դաստիարակութեան մէջ, համոզուած  
 ենք որ մեր զգայնութեան վրայ ամենէն հզօր  
 կերպով ազդող եւ ամենէն աւելի մեր բարոյա-  
 կան դաստիարակութեան հիմերը ամրացնող  
 տարրը գեղեցկութիւնն է : Եւ մենք կը մտա-  
 ծենք որ անով սնած մտքերը շատ աւելի բն-  
 դունակ են հասկնալու եւ լաւագոյն կերպով  
 կատարելու մտքի եւ զգացումներու այն ճակա-  
 տագրական յեղաշրջութիւնը որ մեզ անխու-  
 սափելի կերպով կը մղէ ներդաշնակութեամբ լե-  
 ցուն ընկերական կեանքի մը :

Բարիք ՏԻԳՐԱՆ ԵՍՍՅԵԱՆ



Հ Ա Յ Գ Ի Ր Ք

Հետեւեալ քերթուածը առաջին կտորն է ամ-  
 բողջ շարքի մը զոր մեր աշխատակից Վահրամ  
 Սվաճեան յօրինած է իր ներշնչմանը նիւթ առ-  
 նելով հայ ժողովրդական հին ու նոր աւանդու-  
 թիւններ, եւ որ յաջորդաբար պիտի լոյս տեսնէ  
 Անահիթին մէջ Հայգիրք ընդհանուր տիտղոսով :

Կէս դար հազիւ կայ որ մեր բանասէրները  
 ուշադրութիւն դարձուցին ազգային հոգւոյն այդ  
 ընածին փթթումներուն . Սրուանձտեանցներ ,  
 Տէվկանցներ , Քամալեանցներ , Տուտուխեան-

ներ անոնցմէ բուռ բուռ հաւքած եւ հրատարա-  
 կած են լրագիրներու մէջ կամ գրքերով : Բայց  
 այդ հոյակապ ու հարուստ պաշարը մնացած էր  
 հում նիւթի ձեւով, ցեղագրական կամ զրուցա-  
 բանական ուսումնասիրութեանց միայն ծառա-  
 յած էր : Մենք քանի' անգամ փափաք յայտնած  
 էինք որ այդ մերագնեայ երեւակայութեան հա-  
 րազատ ծնունդները նոյն իսկ մեր արդի գրա-  
 կանութեան հիւսուածքը ձօնացնելու գործած-  
 ուին եւ նպաստեն անոր տպւու ինքնատիպ գոյ-  
 նը, հայ գոյնը՝ որմէ զուրկ է ընդհանրապէս :  
 Ո՛րքան զիւցագներգութիւններ, ողբերգութիւն-  
 ներ, վէպեր, հէքեաթներ, պաշտօններ ու շիւեր  
 կը քնանան այդ ժողովրդական գանձարանին  
 մէջ, սպասելով արուեստագէտ մասներուն ու-  
 ընք պիտի գան զանոնք հանել իրենց նախնա-  
 կան միամիտ մերկութենէն, զուրս ցատքեցնել  
 անոնց ներքին նշանակութիւնն ու խորհուրդը,  
 բարձրացնել զանոնք մինչեւ գիտակից ու յա-  
 լիտեանական բանաստեղծութիւնը : Եւ այդ ճամ-  
 բով միայն պիտի ունենանք մատենագրութիւն  
 մը որ մերն ըլլայ իրօք, որ իր ուրոյն երանգովը  
 ճանչցուի համաշխարհային արտագրութեանց  
 մէջ : Վահրամ Սվաճեան ամենէն յարմար անձն  
 էր մեր մէջէն՝ կատարելու համար այդ թանկա-  
 զին եւ գեղեցիկ գործը, զոր ուսահայոց մէջ  
 արդէն մասամբ փորձած են Աղայեանց, Քամալ-  
 եանց եւ ուրիշներ : Կանուխէն սերահարուած՝  
 մեր ժողովրդական աւանդութիւններուն, զրոյց-  
 ներուն եւ երգերուն, ուշադիր մեր հին պատ-  
 մութեան յատկանշական էջերուն, երկայն ու  
 մանրակրկիտ աշխատութեամբ մը կուտակած է  
 ընդարձակ մթերք մը նիւթեղէններու՝ անոնցմով  
 ազգային քերթութեան նորանշան ճարտարապե-  
 տութիւն մը կերտելու մտքով : Քաջ հայագէտ,  
 մօտէն ուսումնասիրած՝ հին հայերէնն ու մեր  
 նոր լեզուն իր բոլոր գաւարաբարբառներով,  
 խորապէս քննած՝ ժողովրդական երգերու շին-  
 ուածքն ու ձեւը, հէքեաթներուն ոգին ու ընդ-  
 հանուր գոյնը, Վահրամ Սվաճեան բազմաշան ու  
 կաթողին խնամքով պատրաստած է իր արտա-  
 յայտութեան եղանակը : Եւ ահա կը սկսի այսօր  
 երեւան հանել իր ջանքերուն արդիւնքը : Հեռ-  
 ըլկեաէ պիտի հրատարակենք իր քերթուած-  
 ները . եւ Անահիթի ծրագրին ամենէն կարեւոր  
 իրագործումներէն մէկն է այս բանաստեղծու-  
 թեանց հրատարակումը :

ՊՌՕՇ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՍՈՒՐԸ (1)

Լեռնաբերդին մէջ Լաթարայ, խորշ մը խոր,  
 Ծալապատիկ նըստած Պըռօջ թագաւոր  
 Հողագետնին վըրայ, կապերտ մը տակը  
 Կը հընհընայ — ամբոխով լի է բակը:  
 Կապերտը, գործ նածիչաներու որ տեղ տեղ  
 Հիւսեցին փունջ վարսի, խոշոր երփնագեղ  
 Կը զարդարեն թըռչնագիրներ ոսկեգիծ,  
 Ներբողելով սուրը քաջին պանծալից  
 Որով եղաւ տիեզերաց տիրական:  
 Կորիզըլուխ, մօրուքը մեծ ձեան նըման  
 Մինչև պորտին վըրայ կախած ծաւալած  
 Կը հընհընայ ան սըխըութեամբ անհալած:  
 Ալեւոր ծեր է ա՛լ, մօտ է օրահաս,  
 Կուգայ Անակ չար, կը սպաննայ պատուհաս:  
 Առջին մութ տեղը կը տեսնայ դեղին բիւր:  
 Դէմքը թըխպտ ամպ է կարծես մահատիւ,  
 Խորշումալից կասաղութեամբ պըղտորած  
 Կը փափաքի ոստնու՛ հրաման տալ զօրաց,  
 Առաջնորդել՝ նըթոյգ հեծած ամեհի:  
 Կըրկնակ ցոլմանց պէս հեռաւոր հրդեհի  
 Աչերը մերթ կը պըլպըլան կարմրանիչ —  
 Եւ անբարբառ ան կը նայի մըշտապիչ:  
 Յօնքերը թաւ սպիտակ՝ ցասմամբ կ'երերան.  
 Աւա՛ղ, չունի կորով — հասակ ծերական  
 Սանձանարեց զանի: Առջին կը նայի  
 Ու կը տեսնայ Նազուկայ լիճն ամայի  
 Որ սատափեայ ինկած կարծես է պատեան:

Մահը մօտ է: Ո՛վ մեծ վիշապ զօրութեան՝  
 Ինչո՞ւ գաշխարհ դու որսացիր, թա՛գաւոր:  
 Ինչո՞ւ երկրիս հըրամայեց բերանդ գոռ  
 Եթէ զանի պիտի կարկէ դոյզըն հող:  
 Ինչո՞ւ քու փառքը պատմեցին թըմբուկ փող  
 Ոսկի ծընծղայք՝ ուրախութեամբ տնօրէն  
 Եթէ անդոյ պիտի ըլլաս քիչ օրէն:  
 Ինչո՞ւ մարդկան վէս ճակատները խոժոռ  
 Նըւաճեցիր, գետին զարկիր կորակոր,  
 Փոշեթաթաւ, որ շընորհես փըրկութիւն.

(1) Ռուսիայ բանաստեղծ մը, Պ. Գէորգ Աստուածատրեան,  
 արդէն տարգմտած է Պըռօջ Թագաւորին այս աւանդութիւնը  
 («Աղբիւր» շարանամբերթ, 1887, Ծիւ 1): Մեր ռուսիայ ըն-  
 Թերցոյներուն համար Երեւոյ հետաքրքրական ըլլայ բազմատեղ  
 երկու բերնուածները, զրուած իրարմէ անկախաբար, մին ժօ-  
 ղովորական զրոյցի ձեւով միաժողովն փիպուած, միւսը բան-  
 դակուած ու յղուած հայ Լըբոնդ տը Լիլի մը ձեռքով:

Եթէ փառքդ ինկած կործան նաեւ դուն  
 Անձայն պիտի երկըրպագես օրհասին:  
 Ո՛վ մեծութիւն, ո՛վ քաջութիւն, ո՛վ բաղդ սին  
 Գերեզմանիդ անարգիչ քարը պիտի գայ  
 Պըղծել նըշխարըդ մընացօրդ, ո՛վ տըքայ:

Տեղ տեղ ջահեր կը բուրէին ուսնի հոտ,  
 Կը ցանէին արիւններանդ լոյս ազօտ  
 Որ կը սողար բակին վըրայ ծուփ ի ծուփ:  
 Կանգնած էին այնտեղ՝ նըւաստ եւ տըրուպ՝  
 Դըմնէտեսիլ ցեղապեաներ դեպ, գոռոզ,  
 Որ կը վարեն մարտիկ գուգազ բարբարոս:  
 Կանգնած էին բունը բըռնած նիղակին,  
 Աղեղներու վըրայ յեցած անագին  
 Գօշի ճապուկ եղջիւրներէ շէկ ու մեծ՝  
 Որ շեշտ կ'ընեն երկար աշտէ նետընկէց,  
 Եւ ունէին հալաւ մորթեայ բաճկոնակ,  
 Սեւ, մազ ի վեր. հըմայք, բըժժանք, պահպանակ  
 Կապած էին իրենց բազկին ու գըլխուն:  
 Մէջքէ կախած էին տապար շողշողուն:  
 Արցախ զանոնք, Ծոփք եւ Կորդուիք անատուտ  
 Կը յըղէին գազանակերպ եւ անգութ՝  
 Գաղաքներու վըրայ պատիժ պատուհաս.  
 Աղետաբեր մարդկան այստ ժանտ էր նըւազ:  
 Պըռօջի երկու կողմը շարուած ու բազմած  
 Ալեւորներ ակնածութեամբ ձեռնամած՝  
 Կը նայէին ակընկառոյց բերանին:  
 Պատուէր տըւաւ զարհուրելի ծերունին.  
 Վաղվաղեցին գալ զաւկըններն ալ հըսկայ  
 Անոր առջին տող կապեցին ոտընկայ:

Ո՛րն անոնցմէ պիտի ըլլար թագաւոր  
 Եւ ժառանգէր անպարտելի թուրը հօր:

Թուրը թաքուն էր կապերտին տակ պահած,  
 Թուրն՝ որ ամբողջ վերտեալ փաղանգ մը զօրաց  
 Ոստի նըման երկճիղ կ'ընէր կը ջոկէր:  
 Երբ ճախրելով արձակելով ցիր ցուրբեր  
 Ան ճօճ կուգար՝ կը նահանջէր թշնամին.  
 Կը խըղըտէր սարսափմամբ աչքն ու հողին.  
 Շատերն անգամ կը գլորէին դիտապաստ,  
 Կարծես կ'իջնար շանթընկէց դունտ երկնասաստ:  
 Երբ կը ծեծէր սպառաժ քար կարծրաքար  
 Կը փըշրէր գայն՝ երկիրը հոտ կ'որոտար:  
 Եւ երբ արագ կը շըրջըրջէր դէպի վեր՝  
 Ամպ չէր մընար երկնից վըրայ կը փախչէր:  
 Կ'ամբըանար թուրն ուղիղ Պըռօջ ու կ'երթար —  
 Կը դառնար զօրքն առջին փետուր հողմատար:  
 Ծօշան, զըրահ, տէգ, սաղաւարտ եւ վահան  
 Կը հալէին կը մաշէին ձեան նըման:

Կը հեծցընէր երախակալ ճակատին  
 Ու միջատեղն ան կը վազէր գոռ մարտին .  
 Հոռ ժուռ կուգար ամպրոպայոյզ , կը մռնչէր ,  
 Կը պըտուտքէր , ինչ որ գրանար կը ջընջէր .  
 Կը ղողանջէր աշխարհ՝ ողբով եւ կոծով :

Հարաւ իջաւ հիւսիսէ , մեծ ծովէ ծով ,  
 Նուաճեց ճըմլեց զով որ գըտաւ ասըստամբ :  
 Գիւղ եւ աւան ասպականեց հըրոսմամբ :  
 Երկրէ երկիր ան խոյացաւ սոսկալի ,  
 Ամենուրեք վիրագ եղաւ , սիրտ մոլի :  
 Լեռը փախան մարդիկ , փախան համբաւէն ,  
 Քարայրներու խորը գըտան ասպաւէն :  
 Կանայք արկլոր՝ գինդ զարդարանք նետեցին ,  
 Փախան գունատ , եւ վատողի գեղացին  
 Հիւլը նստած՝ բոլոր մարմնով կըզկըտած ,  
 Արդահասիւ խընդրեց , բայց ոչ ոք գըթաց :

Եւ կայթելով թագաւորին կանանին  
 Ասպատակաց հետ , կարմիր դափ ձեռուընին ,  
 Կը վազէին գիսաճապաղ , հուանի ,  
 Կը նայէին ըսպանութեանց ընտանի ,  
 Կը ցընծային արձակելով սուր կառաչ .  
 Խողխողեւոց անթաղ յաճախ անամաչ  
 Կըտրատելով մասունքը պիղծ խըթաբար՝  
 Կը խընդային . գորքն ալ ասպար առ ասպար  
 Կը բարախէր , կ'աղաղակէր , կը խուժէր :  
 Եւ բանակին վառ ծիրանի էր գիշեր :  
 Տոմարներու պէս քաղաքներն ընդարձակ  
 Կը կործէին . վարուժանի կարծես ձագ  
 Որ սալարած կը նըստոտին խորշկէն քար ,  
 Բերդերն էին լերանց վըրայ վեհափառ .  
 Ա՛նչպի անջան եւ անաշխատ կ'առնէին :  
 Կ'երեւային անոնց նետերն երկնային :  
 Կոտորածին արբեցութեամբ կատաղած  
 Կը խըլէին թշուառ հարսերն ամօթխած .  
 Կուսաններու՝ որ պըղծեցան լալազին  
 Կապած չապիկն իրենց երկայն նիզակին  
 Սըլաքաւոր ծայրը նըշան պանծալի  
 Կը տանէին — եւ էր երգով օղը լի :  
 Պատերազմի արօքն անցաւ ամէն տեղ ,  
 Եւ խարանեց բոց հողը չոր , բացաւ կեղ :  
 Ամենայն կողմ կը պաղպաջէր լիճ բոսոր :  
 Փախըստականն ալ ծակամուտ դետնասոր  
 Սափոր մը ջուր կ'առնուր միայն իրեն հետ :  
 Չըկար երկայն աշխարհաչու արահետ  
 Ուր չըլլային կահ եւ անօթ թափթըրիած :  
 Եւ մեծ հանդէս կ'ըլլար մինչեւ լուսաբաց :

Բէլիջանու վըրայ Պըռօջ հօթը բերդ՝

Եօթը կանգնեց անմատչելի դաստակերտ  
 Որմաքարին հետ հիւսելով չոր խալամ ,  
 Նաեւ ոսկոր , եւ խեղճ գերին ողջանդամ  
 Չոր չարաչար պատուհասել կը ցանկար :  
 Եւ աշխատցուց թագաւորներ ասիկար :  
 Անագորոյն զաւկըներէն ամէն մին  
 Տէր ամրոցի մը՝ կը ծաղըէր թշնամին :  
 Երբ գրոհ կուտար Պըռօջ՝ թըխպոտ անգղագունդ  
 Հետը կուգար եւ կը ստանար ճոխ սընունդ :  
 Գիշերասէր բորեան , գայլ չոր , չընապայ  
 Կը թասէին՝ արտորալով մանրաքայլ :  
 Շունը վըտիտ կ'ըսէր՝ Խընջոյք կայ առատ .  
 Ու կը լըզէր խոցի մ'արիւն ծանրակաթ :  
 Փառաւորեց հուրը դանի , պըլպըլաց :  
 Մեծ է Պըռօջ , գետինն ըսաւ արեամբ թաց :  
 Մե՛ծ է , եղաւ զէզն ալ սպիտակ խոստովան  
 Ուր մերկութիւնն անհուն կ'ելլէր երեւան  
 Ծանակալից ոսկորներու անհամար :  
 Մե՛ծ է , գոռաց կարմիր երկնից ալ կամար .  
 Մե՛ծ է , ըսաւ արեւն անգամ բոցակէզ՝  
 Շարաւահոս ծըծելով օդ եւ երէզ :  
 Թագաւորին գեղեցիկ ձին կապուտակ  
 Երբ կը սուրար եւ կը խայտար անոր տակ  
 Ու կը զոփէր սալասըմբակ քառասորոփ  
 Ծածանելով երասանակ ոսկեծոպ ,  
 Եւ հրմայեակ ծածանելով օրհնաւէտ  
 Աչամէջքին վըրայ ինկած վէտիվէտ ,  
 Չարհուրանաց քամի կ'երթար առջեւէն :  
 Ան կը թափէր՝ պասքած արեան ծարաւէն՝  
 Թաթուղներէն լսյս , պընչերէն ծուխ ու մուխ :  
 Կը բարձրանար փոշին իբրեւ մառախուղ :  
 Բոլոր աշխարհ հըլու առջին կուչ ինկած՝  
 Բերանսիվայր եւ անտըրտունչ հողամած՝  
 Սըմբակակոխ ըլլալ միայն կը սպասէր .  
 Դո՛ւ ողջ ըլլաս , ո՛վ թագաւոր — լոկ կ'ըսէր :

Պըռօջ հիմա կը խոճոճէր խիստ տըխուր .  
 “Վա՛յ եւ աւազ , աչերն ալ չեն տեսներ սուր :  
 Մահը կարող պիտի ըլլայ , ո՛վ պայման ,  
 Կորացընել վիզս աղեղի մը նըման :  
 Դու կը չընչես դեռ հազիւ հազ , ո՛վ Պըռօջ ,  
 Ու կը կապես դեռ ճակատիդ ասպարօջ :  
 Բայց երբ ցոլայ գայ ոսկի հիւրն երկնատան  
 Հետը պիտի երեսանաս անկենդան :  
 Եւ սուրբզ ի՞նչ պիտի ընես , սուրբզ ժանտ .  
 Որո՞ւն պարգեւ տաս՝ ժառանգորդ ծերութեանդ :  
 Թո՛ւր մահաբեր , ո՛վ աննըման ակոյցեան ,  
 Ո՛վ կողոպուտ մեծ փոթորկին պարտութեան ,  
 Արի առոյգ փորձ առաջին հասակիս ,  
 Երբ կը վարէր խիզախ անվախ հոգի զիս :

Տեսայ մըրրիկ գըլխուն վըրայ Վարադայ .  
 Ըսի՛ անա՛ կ'իջնայ , անա՛ բունն կուզայ ,  
 Եւ ես՝ որդի մարդկան՝ անպէ՛ն եւ աննետ  
 Պիտի երթամ կըռփամարտիլ անոր հետ :  
 Եւ վազեցի մագլըցեցի սարն ի վեր ,  
 Ծովի նըման մըչուչ բոլորս կ'երեւէր :  
 Կը հեծեծէր լեռը , մայրին դարաւոր  
 Դիւալից էր , կը մըրմըռար վիհը խոր :  
 Կ'երերային ապառաժ վէմ եւ խարակ ,  
 Կը գողային խուճապմանէն երկնառաք .  
 Ես կ'երթայի : Յաճախ փետուր մը թեւին  
 Երեսիս դէմ կը թօթափէր վեհ արծուին :  
 Ես կ'երթայի : Ամպերը գորչ կ'եւլէր եփ ,  
 Ու կը պայթէր , կը գըլորէր քարը սեպ :  
 Ելայ , ելայ , հասայ գըլխուն մօտ պըզտոր —  
 Ո՛վ տեսիլք . դուրս կը փողէին փապ ու սոր  
 Իրենց անլոյս խորութենէն քամի թուխ :  
 Կը շըչէին գալար այսեր երկրաբուխ .  
 Ապա միմեանց փարած , կանգնած , վերայած ,  
 Կը թըռչէին մինչեւ երկինք սեւամած :  
 Հեղձամըղձուկ կ'ըլլար բերանս շընչառու .  
 Փայլակներն ալ , շէկ փետուրներ ամպերու ,  
 Կը ցընդէին մըլթադնելով լոյսն աչաց :  
 Վեր նայեցայ . գլխիվայր թուր մը կախած  
 Կը փողփողէր այնտեղ պայծառ բոցաշատ :  
 Տեսայ զանի՛ կը կոփէին անընդհատ  
 Կայծակներու ծիրանի մուրճն ու կըռան .  
 Կը բարձրանար մըրրիկն անա , կ'երթար ան ,  
 Մօտ էր խըլիլ թուրը — թեթեւ , բազկօք բաց  
 Ես գըրկեցի զանի , եւ լեռն որոտաց :  
 Ծըռինդ կ'եւլէր . կարծես գիտակըս երկար  
 Կը քաշէին դէպի վեր , ես ոտնակառ  
 Կը խախտէի զանի . բոլոր զօրութեամբ  
 Նահանջեցի , ընկըրկեցայ , եւ մեծ ամպ  
 Քայքայեցաւ թառաղեցաւ լեռն ի վայր :  
 Շառաչաճայն շողաց երկինք ծայրէ ծայր  
 Ու ճեղքեցաւ կարծես . իջաւ բոց , հոտ էր  
 Առջիս ինկած թուրը — ծըծումը կը հոտէր :  
 Առի զայն : Ո՛հ , հիմայ հասու եմ , հիմայ ,  
 Որչափ անճահ հողածընի զէնք էր դա :

« Իմ սուրս գերեց երկիրս , ըրաւ հըպատակ ,  
 Ու տապալեց քաղաք , պարիսպ , ամբարտակ :  
 Որ տարածեմ միահեծան գաւազան ,  
 Ու հաստատեմ գահ անխախտու անսասան ,  
 Կործանեցի զայխարհ , ըրի աւերակ :  
 Ոստեայ տեղէ տեղ ես՝ իժի պէս արագ :  
 Մարմինս արիւն լըւաց , եւ ծուխ շընչեցի :  
 Ոչ ոք կարող եղաւ նայիլ ձիգ ինձի :  
 Խոնարհեցան բոլոր ազգերն իմ առջիս

Դրօշակներու նըման : Եւ կուռք ըրին զիս :  
 Վա՛յ եւ աւաղ . ի զուր էր այդ ամենայն ,  
 Խըժղըժութեան գործ էր դա , գո՛րծ էր ունայն .  
 Փողստեցի խօշօչեցի ես ի զուր .  
 Եւ վայրապար ձեռքըս ճօճեց անեղ սուր :  
 Իմ զաւկըներս չե՞ն սր կայնած են առջիս —  
 Կ'ատեն զիրար , ու կը սպասեն օրհասիս :  
 Ով յաջորդէ ինձի՛ անշուշտ անխընայ  
 Եղբայրատեաց սըրտնութեամբ մահ պիտի տայ .  
 Եւ ոճիրներ պիտի երթան նորանոր  
 Պիտի սաքրին սեւ աթոռին տակ անոր :  
 Ո՛վ ցաւ , չըկա՛յ ճար փըրկելու ճետս անգամ .  
 Սոսկում էի , արդ ինքս ինձմէ կը սոսկամ :  
 Բայց քաջութիւն , պատերազմունք անհամար ,  
 Այնչափ քաղաքք եւ տէրութիւնք արհամարհ  
 Ինչո՞ւ եղան , ի՞նչ շահ ատկէց , ի՞նչ օգուտ —  
 Տիեզերաց տէր՝ կանգնեցի գահ խախուտ ,  
 Որուն ոչ ոք պիտի ըլլայ ժառանգորդ :  
 Ի՞նչ ըրիր , սո՛ւր , ի՞նչ ըրիր , ո՛վ անաւորդ ,  
 Ա՛խ , նըզո՛վք քեզ — նըզո՛վք , նըզո՛վք յա-  
 լիտան ,  
 Որ զինեցիր բազուկս՝ ոսոխ մարդկութեան .  
 Ու կաթեցիր ծայրէդ միայն բոթ եւ ան ,  
 Դու ցանեցիր կործանում , սուգ , ցաւ եւ մահ : »

Գլուխ բարձրացուց Պըռօշ , տեսաւ ան անհաշտ ,  
 Պասքի նըման երբ կը հիւժէ խոտն երաշտ ,  
 Կը բորբոքէր ատելութիւն դառնաղէտ  
 Դէմքերն որդւոց — կը նայէին աչօք խէթ :

Բայց Նազուկայ ծովակը մեղմ եւ անոյշ  
 Փողփողելով վըճիտ լուսնին տակ քընքոյճ՝  
 Արծաթափայլ խայտաբըղէտ կ'երեւար :  
 Եւ մըրմըռայ . « Ահա գիշեր , մութ խաւար  
 Կը պաշարեն զիս . դու՛ որդիս անդրանիկ ,  
 Դընա՛ լըճին մօտը — թուրս ա՛ռ աւասիկ ,  
 Նետել այդտեղ : »

Սակայն որդին խորհեցաւ ,  
 « Ի՞նչ , զօրութեան սուրը հիմա ձեռքս անցաւ ,  
 Այսուհետեւ ա՛լ եղբայրներս ըստամբակ  
 Դիմակալել ինձի , խեռիլ չեն ատակ .  
 Կը ժառանգեմ ես միայն թագ եւ աթոռ :  
 Ինչո՞ւ անսամ կամացը հօրս թագաւոր : »

Չէնքը ծածկեց քարի մը տակ ու դարձաւ :  
 Խաչկապ բըռնած ձեռքերը լուռ կանգնեցաւ :

« Ի՞նչ եղաւ լիճը », հարցուց Պըռօշ :  
 « Հա՛յր , ոչինչ : »  
 « Ստեցի՛ր , պոռաց ան , ա՛խ , եզէք բընաջինջ ,

Դու եւ սերունդդ , անհրնազանդ որդի ժիտ .  
Թող խեղճութեանդ չափ ըլլայ չափը պատժիդ :  
Թող ըսպաննէ ըզքեզ խմ սուրս , ա՛յ չըւառ : »

Ու սոսկալով բարկութենէն հըրավառ ,  
Թուրը գընաց բերաւ որդին անգրանիկ :

Բայց ամենուն Պըռօզ գըննեց դէմքը ձիգ .  
« Դեռ մեռած չեմ , ազաղակեց խուլ ցասամար ,  
Վա՛յ ձեզ , ինձի դէմ ո՞վ կ'ելլէ ապըստամբ :  
Արի՛ , կըրտսեր որդիս , որդի սիրական ,  
Դիտեմ , քեզ չեմ իտար ի զուր հըրաման ,  
Թուրըս ա՛ռ տար , նետէ՛ լըճին մէջը խոր : »

Տըւաւ , յըզեց գանի Պըռօզ թագաւոր :

Յանկարծ ահա գիշերը պարզ մըթընցաւ .  
Երկինք երկիր դարձաւ կարծես սեւ անձաւ .  
Շըչիւն շաչիւն կ'ելլէր . հընչեց փոթորիկ ,  
Եւ ուրուակերպ ծաւալեցան գոլորշիք :  
Մերթ փայլակներ կը վազէին սըրավար  
Ձեռուըներու պէս , ամպ մը թաւ կ'երեւար  
Փորը ձեզքած եւ կը գոռար կը մոընչէր :  
Կը դըղըրդէր բերդը , հաղար շէկ աչեր  
Կը թըռէին խոր որ մոլոր եւ անդուլ :  
Եւ կ'որոտար ներքին թնդիւն ալք գանխուլ :  
Որդին բերդին բակը մըտաւ գունաթափ ,  
Կը խանգարէր դէմքն առնական խօլ խուճապ :  
« Կատարեցի հըրամանդ , հա՛յր » , ըսաւ ան :

« Եւ ի՞նչ եզաւ լիճը » , հարցուց մեծ արքան :

« Ես նետեցի սուրը — մըրիկ բոցապէս  
Սրացաւ լըճին վըրայ որ քուն կ'ըլլար հեզ ,  
Եւ բարձրացուց մեծ դընդողներ փըրփրացան :  
Ջըրէն ձըկներ անհամար դուրս ժայթքեցան :  
Կը շըրջըրջէր թաթառ ցըլոյ պէս խոցած .  
Եւ գող կ'անուր առջեւ անդունդ խորաբաց :  
Խըռովեցան տաղնապեցան սար ու ձոր ,  
Կարծես վախճանն էր աշխարհիս , թա՛գաւոր : »

« Մի՛ երկընչիք , ըսաւ Պըռօզ , մի՛ գողաք :  
Սուրը սպանիչ պիտի մընայ վընին տակ ,  
Թագաւորին սուրը — մարդկան թըշնամի ,  
Որ ամենայն վիզ սըղոցել կը կամի :  
Դաս մը քաջաց , որ կը լողան ջըրասոյց ,  
Պինգ գայն բըռնած տալ կը ջանան խորը խոյս :  
Դաս մ'ալ քաջաց՝ հեծած ամպի վըրայ թուխ՝  
Կը վազվազեն կը թափթըփեն բոց եւ մուխ :  
Բարախելով շառաչածայն հերձած թեւ

Կը ձգնի թուրն անուլ խըլել ամէն դեւ :  
Պայքարը բունն է եւ անդուլ կը սկըսի :  
Լըճին քաջաց պընչերէն ջուր կը հօսի ,  
Ոլոր ոլոր գալով ալիք կ'ամբառնան  
Ջոր երկնապող կը ցընցըղկեն եւ կ'ոռնան :  
Եւ հըրաշունչ կարմիր ջոլիւն ի վերուստ  
Կը խարչատէ գանոնք անահ անփախուստ :  
Կախարդեցի ծովակը . դուք , մարտ փըրփրոտ  
Երկայն ատեն պիտի լըսէք հընչել հոտ :  
Մի՛նչեւ այն օրն որ ծոցը մեղմ Նազուկայ  
Յամաք դառնայ , տակն երեւան ելլէ դայ :  
Թաթ մը գօրեղ պիտի քաշէ թուրս հատու —  
Այնուհետեւ վա՛յ քեզ , անմի՛տ աշխարհ դու ,  
Վա՛յ քեզ , մարդկան ազգ , վա՛յ քեզ , ո՞վ ժողովուրդ ,  
Որ զո՛հ ըլլալ միայն դիտես անխորհուրդ .  
Կը համբուրես ասպանդակներն իշխանին  
Որ ըզքեզ շառ նախճիրներու կը տանին :  
Դու կը վազես , դու կը շտապես , դու կ'երթաս ,  
Անոր համար հոգի կուտաս կեանք կուտաս :  
Կը շամբըչիս ուրախութեամբ ամբարիշտ  
Երբ կողոպուտ տանիս հաճես միտքը ոխտ :  
Անոր ճամբուն վըրայ կանգնած կը պարծիս  
Երբ կը տեսնես գալը գոռոզ բարձրավիզ :  
Կը տարածես հալաւ առջին թանկագին  
Ուր քարշ կուգայ երկվարին թաւ ագին :  
Մարախներու նըման էք դուք , ո՞վ մարդիկ ,  
Ջոր կը վարէ քամին . պատուէրն է հերիք  
Թագաւորի ամբարտաւան դայրոյթին  
Որ դուք փութաք զիրար սպաննել վերըստին ,  
Եւ իրարու հակառակորդ ոխերիմ  
Երթաք պըղծէք մեհեան անգամ եւ շիրիմ :  
Բայց երբ գայ Ան , որ կուրծք ունի պըղընձի ,  
Թէ կը շընչէք անգամ՝ պիտի նախանձի :  
Ձակատելով որ դուք ա՛յնչափ էք հըլու ,  
Պիտի մաշի ըղձամբ ըզձեզ ճմլելու :  
Վա՛յ ձեզ , չըներ , վա՛յ ձեզ , չունիք ազատուձ .  
Ի դուր պիտի բառնաք կական անպատուձ՝  
Ճարակ պիտի ըլլաք անոր խըթութեան :  
Եւ ինչ որ ես չըրի պիտի ընէ ան —  
Անմի պիտի ընէ ըզձեզ , ա՛յ վատեր : »

Այսպէս ըսաւ Պըռօզ — շողիք կը կաթէր  
Անոր գունատ անիծալից բերանէն՝  
Որ կը ցայտէր արհամարհանք , թոյն եւ քէն :  
Բայց ցրտագին մահը հասաւ՝ եւ լըռեց :  
Յորսայս ինկաւ ան՝ կապերտին վըրայ մեծ :

Բարիզ ՎԱՀՐՍՄ ՍՎԱՃԵԱՆ

ՅԵՂԻՆ ԶԱՅՆԸ

Միսիս \*\*\*ի յեա-միջօրէի-թէյին էր : Ընդար-  
ձակ սրահին մէջ հաւաքուած կանացի բազմու-  
թեան զուարթ ոգեւորութիւնը կը խնծդար ա-  
խորժական խժըղութիւն մը , որուն մէջ մերթ-  
ընդ մերթ մանկամարդ Անգլուհիներուն սրտաց  
ու մատղաշ ծիծաղին բոժոժումները կ'երկարա-  
ձողուէին :

Յունիսի արեւ մը գուրսը կը լուսերփնէր թե-  
թեւ մառախուղը որ ամառնամէջի այդ օրն իսկ՝  
կը փաթթէր , կը պարուրէր մօտակայ հորիզոն-  
ները , հաւատարիմ գուրգուրանքով մը : Արեւ-  
ունն ճառագայթները կուզային կը հալէին այդ  
փոշեղէն բակին մէջ որ , քիչ մը հեռուն , ամէն  
բան կը շրջապատէր խարտեաշ շամանդաղներու  
խտացումով մը :

Մինակութեան բուպէէ մը օգտուելով , կը դի-  
տէի , ապակեւոր պատշգամէն , պարտէզը որ  
աչքիս առջեւ կը փռէր իր անգլիական բարե-  
ձեւութիւնը : Կարմիր ու վարդապիտակ ճերմակ  
ժէրանիտներու փառփառ ու դիմացկուն գոյնե-  
րուն պոթիկումովը պոռոտ ածուներու մէջտեղ ,  
մարգագետին մը , յտակ ու պարզ , իր կակուղ ,  
յորդ ու թաւ կանանչութիւնը կը զեզուր , Հիւ-  
սիսի այն իւզոտ ու թաւշային կանանչը , ա'յն-  
քան ուժով ու հիւթեղ , ա'յնքան պատկերի ,  
ներկի կանանչ մը , որ ա'լ արհեստական կը  
թուի :

— Օ՛հ , ի՛նչ աղէկ հանգիպում , ըսաւ յան-  
կարծ քովս ի վեր տանտիրուհին որուն ետեւ  
բարձրահասակ մէկը կեցած էր , ձեղի կը ներ-  
կայացնեմ Տր. Ճէյմս Գլարքը որ վերջերս Հա-  
յաստանէն դարձաւ : Մնչուշտ շատ բաներ պիտի  
ունենաք իրարու ըսելիք :

Ներսիզիէս , դժգոհութիւն մը ունեցայ այս  
ներկայացումէն : Ո՛ւհ , հարկ պիտի ըլլար նորէն  
ողբալի հարցումներու տարափ մը կրել , ապուշ  
հետաքրքրութիւններ գոհացնել , վիրաւորիչ  
տարակոյսներ փարատել , արգահատանքներ  
կուլ տալ : Օ՛ անգլիացի պատաւ աղջիկներուն  
ժօռատ ու նուաստացնող կարեկցութիւնը՝ զոր  
միսիոնարներ անդադար կ'արժարծեն կեղծաւոր  
արցունքներով եւ զոր մեր գործիչներէն շատերն  
ալ մնուցած են տխմարօրէն , մեր ազգային զար-  
հուրելի տուամին մէջ ուրիշ բան չգտնելով ի տես  
գնելիք բայց եթէ լալկան ու ձեռնամաճ պա-  
ղատանքներու թոթովում մը : Օ՛ այն ամուլ ու

ըմբոստեցնող հետաքրքրութիւնը զոր ստիպ-  
ուած ես կրել , որ անողորմ դանակի մը պէս  
նորէն ու նորէն վէրքերուդ մէջ կը մխրճի , ցա-  
ւերուդ սրբութիւնը կը պղծէ , Տանջանքներու  
Միւզէի մը հանգիստեսին շահագրգռութեամբը՝  
դեռ չլսուած մանրամասնութիւն մը , անտիպ  
չարչարանք մը կ'ակնկալէ բերնէդ , տեսակ մը  
ախտաւոր ու մարդկային հաճոյք գտնելով՝ իր  
խաղաղ ապահովութեանը մէջ՝ ուրիշներուն  
տառապանքին ահաւորութեանը առջեւ :

Տոքթորը քայլ մը յառաջացաւ , ու ձեռքս  
սեղմելով անգլիացի ճէնթլմէնի մը յատուկ այն  
տաք , առնական եւ ուղղամիտ սեղմումովը ու-  
րուն մէջ ա'լ վերապահում չի կայ :

— Պարոն , ըսաւ , ուրախ եմ որ Հայու մը  
ձեռքը կը սեղմեմ եւ առիթ կ'ունենամ յայտնե-  
լու ձեր ցեղին համար ունեցած սքանչացումս :  
Երսուն-երսունըհինգ տարեկան առողջ մարդ  
մըն էր , իր երկայն ու պիրկ սրունքներուն վը-  
րայ ամրապինդ : Սկովտիացի մը , ապահովա-  
պէս , այն շատ մտացի , շատ խոհուն արտայայ-  
տութեամբ որ այդ թնդերոտ , կորովի ու յաղ-  
թական ցեղին բարձր նիւթականութիւնը կը  
մեղմէ ու կը կատարելագործէ : Իր խաժ ու բա-  
րի աչքերը՝ երկար ու հետապնդող նայուածքով ,  
իր թրթուուն շրթունքը՝ կենդանութեամբ լեցուն ,  
իր լայն ու գմբեթարդ ճակատը ներոյժ մտաւո-  
րականութիւն մը կը սփռէին ամբողջ զէմբին  
վրայ , սրբազրելով գործողութեան մարդուն  
յայտարար հակիրճ ու կտրուկ կերպերը եւ տի-  
րապետող ու ամուր շարժուածքը :

— Նախ ըսեմ ձեզի որ , սկսաւ — երբ ա-  
ռանձնացանք ապակեւոր պատշգամին մէկ ան-  
կիւնը՝ ուր մատաղ արմաւենիներ , պտերներ ու  
աարիտիսդրաններ , զեղին ու կապոյտ լայն թա-  
ղարներու մէջէ , իրենց զեղուն բուսականու-  
թիւնը կը սրսկէին բոլորչի , — ես միսիոնար մը  
չեմ , եւ եթէ Հայաստան գացի , այս ինչ կամ  
այն ինչ յարանուանութեան փառքին՝ նոր «դաշ-  
տեր» գտնելու նպատակով , երկնքին , անգլիացի  
նուիրատուներուն եւ սովամահ թշուառներու  
հոգիներուն միջեւ պարտի-պահանջէի ծիծաղելի  
ու անարդ հաշուեկշիւ մը բռնելու փափաքով  
չէր , ո՛չ ալ նպատակաւոր որբերու եւ այ-  
րիներու Զէ՛ : Զիս առաջին անգամ հոն քաշողը  
եղաւ հաւկնայր , ընթուկայր տարօրինակ պէտք  
մը :

Երբոր ջարդերուն առաջին լուրերը եկան  
Անգլիա , ես ալ , շատերու պէս , նախ , հեռաւոր

ուշադրութիւն մը նուիրեցի այդ եղելութեանց, որոնց վաւերականութեանն ալ, կը խոստովանիմ, շատ կը կասկածէի, մինչեւ այն օրը վերջապէս ուր, պաշտօնական տեղեկագիրներէն յետոյ, ա՛լ կարելի չէր տարակուսիլ աղէաքին ճշմարտութեանը ու ահագնութեանը: Երբ հետզհետէ հասան բոլոր մանրամասնութիւնները, երբ մութին մէջէն իրարու ետեւէ մէջտեղ բերուեցան դէպքերը, նորանշան բան մը անցաւ իմ մէջս: Հակառակ ամէն փաստերուն, չէի կրնար կոր հաւատալ այսպէս ամբողջ ցեղ մը բնաջինջ ընելու կարելիութեանը, այսպէս կազմակերպուած, սիւղէմադիք վայրագութեան մը, սահմուկած մնացած այն « ինչո՛ւ » ին առջեւ որ միտքս կը լլկէր յարստամ:

Ազատ մարդ մըն էի, անկախ, եւ որոշեցի անմիջապէս Հայաստան երթալ:

ԾԾի գարնան էր որ հասայ հոն: Առաջին երեք չորս շաբաթը վարած կեանքիս վրայ բան մը չի կրնար գաղափար տալ ձեզի: Արհաւիրքը իմ մէջս էր ու իմ շուրջս: Արեան մէջէ կը քալէի կարծես. հողը դեռ անով թաց էր, անձրևով թուրմ մարգագետնի մը պէս որ ոտքերուդ տակ կը ճլխտայ: Աչքս կարմիր կը տեսնէր: Մահուան ամէն ծամածոութիւնները, Յաւին բոլոր գաւարումները, Տանջանքին բոլոր զգայութիւնները տեսայ, այո՛, տեսայ, ա՛լ այնչափ անոնց ամենօրեայ միօրինակ պատմութիւնները լսեցի: Զախ-ջախուած գանկերու, ուղեղի լիպլիքներու, փխտացած արեան, յօշոտած անդամներու, պոռթկացող փորոտիքներու խառնամառնում մը աչքէս չէր հեռանար ամենուրեք:

Երբ այս անցեալէն հիւանդ՝ ներկայովը զբաղել ուզեցի, տեսայ որ ցաւելու, կրելու կարողութիւնս, զոր ա՛լ բթացած կը կարծէի, կը վերարձարձէր նոր սաստկութեամբ մը: Աւերակներու երկիր մըն էր բոլորաբար, ուր կիներ, տղաքներ ու ծերունիներ, խլեակներու պէս, կը թափառէին աննպատակ, ա՛լ բանի մը չսպասող, ա՛լ ամէն բանէ հրաժարած էակներու խորին տրտմութեամբ: Ա՛լ բան մը չի կար ընելիք այդ երկրին մէջ. Մահը լաւ տեսած էր գործը, քայքայումը կատարեալ էր. անոնց, որ դեռ կանգուն էին, ուրիշ դեր վերապահուած չէր թուեր բայց եթէ կարգաւ իրար թաղել, գերեզմանական լուծեան մէջտեղ որ հետզհետէ կ'իջնէր: Ուրիշ բան չէր թուեր մնալիք այդ ամբողջ երկրէն բայց եթէ անօրինակ մեռելատանի մը յիշատակը ընդհանուր մարդկութեան խղճին վրայ:

Կը պատրաստուէի Անգլիա դառնալ: Ընկերական անլուր խնդիր մը ուսումնասիրելու, գիտնականի հետաքրքրութիւն մը գոհացնելու եկած էի, ու տեսածէս դահանդեալ, լսածներէս խելացնոր, դատելու, խորհրդածելու, եզրակացնելու կարողութիւնս կորուսած, գէշ ու այրող ըմպելիք մը խմած մարդու մը պէս դանդաշելով, սիրտս պատառ պատառ ու ա՛լ մշանջնապէս կորսնցուցած կարեկցելու սուրբ հրճուանքը, մէ՛կ փափաք մը ունեցայ — հեռանալ այդ անէծքի երկրէն:

Պատրաստութիւններս տեսնելու վրայ էի երբոր յանկարծ արտակարգ երեւոյթ մը աչքիս զարկաւ: Բնութեան վերակենդանութեան հետ, տարօրինակ բան մը տեղի կ'ունենար կոր: Հոն ուր Մահը իր անճողոպրելի ու վերջնական թաթը դրած կը կարծէի, Կեանքի խլրտում մըն էր որ կը սկսէր տակաւ առ տակաւ, վախկոտ բայց յամառ: Նորէն անցայ այն տեղերէն զորոնք մըշտունջենական անշարժութեան դատապարտուած կը հաւատայի, ու տեսայ որ կենդանութիւնը գլուխ կը վերցնէր ու չորս դին կը նայէր:

Ա՛լ մնացի, հմայուած: Ասիկա նոյնչափ եւ աւելի արժանի էր հետազօտութեան որչափ առջինը:

Երկրագործը, զրացի Բիւրտէն արօր մը փոխ առած, հերկին վրայ էր պիսիկոր ու փութաջան, կօշկակարը իր խանութին մոխիրներուն ու փլատակներուն մէջէն հերիւն մը գտած ու փողոցի մը անկիւնը գործի սկսած էր, խանութպանը՝ իր շալակը մէկ քանի ծրար՝ կ'արտորար դէպի խնդրանքները, արհեստաւորը նորէն ծալապատիկ նստած էր կոտրած թէզիկեահի մը առջեւ որ սակայն կ'արտադրէր, ուսուցիչը տղաքներու խումբ մը ժողված խարխուլ ախոռի մը անկիւնը՝ կը կարդացնէր զանոնք, վաճառականը ոտքի վրայ ապսպրանք մը կը համարձակէր: Ըղճիմ, նիհար, արգահատելի գործեր անշուշտ, բայց ասիկա կեանքն էր որ ծայր կուտար, առաջին քայլերը դէպի շարժումը, դէպի ողբերութիւնը: Մարդկութեան սկզբնաւորութեան պէս բա՛ն մը: Զարթումն էր, վերածնունդը, ու ամենքն ալ քիչ քիչ անոր գինովութենէն կը բռնուէին: Ամենօրեայ ճիգն էր որ կը սկսէր, անդուլ, բանիմաց, ամբողջական ճիգը որ ընկերութիւնը կը շինէ, որ յառաջգիմութիւնը կը ստեղծէ: Դէմքերուն վրայ, այն թախծութեանը քով որ չի փարատիր, որ մորթին փակած է դարերէ ի վեր, հաւատքին լրջութիւնը կար նորէն, ու կամքին պրկումը: Աշխատանքին լրծ-

ուած էին, ազատարար ու մխիթարող վաստակին, ինչպէս մարդ փրկութեան խարսխին կը պլլուի: Ապրիլ կ'ուզէին կոր, ու պիտի ապրէին:

Ան ատեն էր միայն որ հասկցայ ջարդերուն վայրագ տրամաբանութիւնը: Ստորին, անընդունակ, ապիկար ցեղ մը, մրցեղու անկարող եւ ատկից զատ ուրիշ միջոց չունենալով, իր ուժէն օգտուած էր զինքը շրջապատող բարձրագոյն ցեղ մը ոչնչացնելու, անոր վաղքը կեցնելու, անոր կողուպուտովը քիչ մը ատեն եւս ապրելու համար, վերջնական անհետացումէն առաջ: Բնական բան մըն էր ասիկա, քաղաքակրթութեան յառաջագոյն վիճակ մը որ այդտեղ կը վերանորոգուէր, անձաւներու խորհրդին մէջ ապրող արիւնալի մարդկութեան կրկնութիւն մը:

Բայց այն մարդիկը, ըսի, ապրիլ կ'ուզէին կոր, ու պիտի ապրէին: Ասոր կամքը ունէին, հակառակ ամէն բանի, ընդդէմ ամէն բանի, ու ոչինչ կրնար կեցնել զիրենք: Տառապանքին մէջ նոր ուժ մը կը ստանային, անոր մէջ մուկ մը կը գտնէին. անկից կ'առնէին իրենց հիւթը, իրենց կիսականութիւնը, — ձիւնծաղիկին պէս որ ձիւնին տակ կը փթթեցնէ իր առողջ ու ազուր թերթերը:

Ու քիչ քիչ ես ալ բոնուեցայ, վարակուեցայ այն վերականգնումի, դարմանումի տենդէն որ այդ բոլոր մարդիկը կը թոթուէր: Ես ալ իմ պղտիկ բաժինս ունենալու էի ընդհանուր շարժումին մէջ դէպի վերստացումները, իրենց հետ, իրենց քով: Ու նոյն հետայն որոշեցի որբանոց մը հաստատել, կամ, աւելի ճիշդ, տուն մը, ուր քսանի չափ որբեր հաւաքէի եւ զանոնք բարոյապէս զինէի այն ծանր, անխնայ, ոգի ի բռին ոգորումին համար որ իրենց կը սպասէր այդ արութեան ու տոկունութեան հողին վրայ:

Պտրտած ամէն տեղերուս մէջ, Մալաթիան մասնաւորապէս իս յանկուցած էր իր աննման գեղեցկութեամբը, գետին եղերքը ուռձալիւր ծառերու տակ կորսուած տուներովը, ուր ժիր ու խելացի ժողովուրդ մը, աղէտքին մէջ ամէնէն աւելի սաստիկ հարուածուած, նորէն ոտքի կ'ելլէր հաստատ առաջադրութիւններով: Հոն հաստատուեցայ, ու շատ չանցած դտայ իմ ուղած տղաքս: Սովորական տիպարը ունէին ամենքն ալ, ամենքն ալ տժոյն, նիհար, սեւ ու խիտ մազերով, շատ կարծր, շատ նեղ բայց շատ յամառ ճակատով, տարօրինապէս մտացի ու կըրկտող սեւ աչքերով, որոնց շուրջը մրագոյն ծիրը

կայ միշտ, այն տարիքէն առաջ արթնցող զգացողութեան արտաւոր ծիրը, կը հասկնա՛ք, որ խելացի ցեղերու յատկանիչն է սակայն: Բարեբաղդութիւն ունեցայ գտնելու հայ կին մը, Փոքր-Ասիոյ մէկ ամերիկեան գոլէճին մէջ կըրթուած, որ իմ ծրագիրս հասկնալու եւ գործադրելու ընդունակ գտնուեցաւ: Բայց ես էի որ կը կարգացնէի տղաքը, իրենց խաղերուն ու մարզանքներուն կ'առաջնորդէի ժամերով, ու կը խօսէի իրենց երկարօրէն, ատենը թէ դուրսը, իրենց հայրենիքին վրայ, իրենց կոչումին վրայ, իրենց դերին վրայ: Ու գոհ էի դորձէս, իրենց մէջ արթնցող կայծին տաքութենէն:

Օր մը մօտակայ գիւղացիներ տղայ մը բերին ինծի, զոր ճամբուն եղերքը բռներ էին, միս մինակ քարի մը վրայ հանգչած ատենը: Հակառակ բոլոր բաղձանքիս, ստիպուած էի մերժել այդ կարգի բոլոր դիմումները, որովհետեւ տեղ չունէի. բայց երբ տղան մօտէն զննեցի, անմիջապէս վար դրի զինքը: Կորիւնի պէս բան մըն էր. գոուզ առատ մազեր ունէր, երկու կողմէն ուռուցիկ ճակատով, կրակի աչքերով: Ո՛ւրկից էր, ո՛ւր կ'երթար, չկրցաւ որոշ բան մը ըսել: Կը յիշէր միայն թէ հօտաղ մըն էր ինքը, օր մը Գիւրտեր լեռան վրայ իր նախիրը քշեր տարեր էին՝ իրեն մէկ քանի հարուած տալէ ետքը, գիւղը դառնալուն՝ արդէն մոխիր դարձած գետեր էր զայն, ու ա՛լ կենդանի էակ մը չկար հոն, ամենքն ալ սպաննուած կամ փախած: Ինքն ալ ճամբայ ելեր էր՝ իրենները գտնելու յուսով, ու անկից ի վեր կը թափառէր. ձմեռ մը եկեր էր, դարուն մը անցեր էր, ու ան այսպէս կ'երթար լեռնէ լեռ, գիւղերէ ու քաղաքներէ անցնելով, առանց կանգ առնելու: Ի՞նչպէս ապրեր էր. չէր գիտեր. ապրե՛ր էր: Ո՛ւրկից կուգար. ձեռքովը լայն շարժում մը կ'ընէր, դէպի հիւսիս, Տէրսիմի լեռնաշղթան:

Ա՛լ ամբողջ հոգածութիւնս իրեն նուիրեցի: Խեռ, անհանդարտ, ապստամբ տղայ մըն էր: Ութ-ինը տարեկան ըլլալու էր, բայց անհաւատալի ուժ մը ունէր, վայրի կատուի զիւրաթեութիւն մը: Երեք անգամ վարժուհիին ձեռքէն փախաւ, անոր երեսը ճանկոտելով ու շրջազգեստը բզկտելով: Երեք անգամուն ալ գիւղացիները գտան զինքը հեռուները ու նորէն ինծի բերին:

Քիչ քիչ սակայն կակուղցաւ, մարդոտեցաւ: Կերպարանափոխութիւնը սկսաւ այն օրէն երբ սկսանք իրեն կարգալ սորվեցնել: Հարաւային Ամերիկայի բամբաններուն մէջ, երբ վայրի ձիւ-

րու որտորը լաղզօն կը նետէ ու անասունը իրեն կը քաշէ, ձին կը վրնջէ, կ'աքացէ, կը ծառանայ, փախչելու երթալու կատաղութեամբ մը : Ան ատեն որտորը անոր ընդունքը կը բանայ, իր բերանը կը մօտեցնէ եւ իր շունչը կուտայ հոն բոլոր ուժովը : Ա՛լ անասունը իրն է, եւ իր ախրովը կը նետուի ան՝ հեզ ու հաւատարիմ, առանց սանձի . անոր շունչը ունի իր մէջ : — Ինչ որ մեր բոլոր քաղցր խօսքերը, անուշ վարմունքը չյաջողեցան ձեռք բերել, իրեն առջին դրուած այդ պղտիկ գիրքը կրցաւ ներդրածել Սագօին հոգւոյն մէջ . մեր շունչն էր որ իր մէջ անցած էր, ու ա՛լ մեզի կը կապէր զանի : Հիմա, ժամերով իր գրքին վրայ գլուխը հակած, կ'աշխատէր քակելու գրերուն իմաստը, սորվելու մոլեգին ցանկութեամբ մը : Հակառակ մեր բոլոր յորդորներուն, կը յամատէր կը մնար իր գրքին վրայ, առանց մասնակցելու միւս տղոց խաղերուն :

Բան մը չէր գիտեր, վայրի տունկի մը պէս մեծցած՝ ազատ բնութեան մէջտեղ : Մէկ քանի շաբաթ ետքը, սկսանք իրեն խօսիլ տիեզերքին վրայ, Աստուծոյ վրայ, Յիսուսի վրայ : Ան աչքերը մեզի պիչ, մտիկ կ'ընէր, հասկնալու տենչով մը որ իր դէմքը կը մթապնէր : Իրեն կ'ըսէի թէ Գերագոյն էակ մըն էր որ բնութեան բոլոր բարիքները ստեղծեր էր մեզի համար, թէ անոր երախտապարտ մնալու էինք, որովհետեւ միշտ կը հակէր մեր վրայ, ու աղօթելու էինք անոր, անոր ուղղելու էինք մեր մաղթանքները, որովհետեւ պիտի տար մեզի ինչ որ իրմէ խնդրէինք :

Իր կրկնապատկուած ուշադրութենէն կը հասկնայի թէ ամբողջ ցնցում մըն էր որ կը կատարուէր իր էութեանը մէջ :

— Ըսէ՛, Սագօ, դուն ալ բան մը ուզէ՛ : Աստուծոյ : Ի՞նչ կ'ուզես որ տայ քեզի :

Գլուխը ծոկոց ու պատասխան չտուաւ : Ի՞նչ կ'անցնէր իր մտքին ալքերուն մէջ : Եղունգնորով՝ ծունգին վրայ բացուած գիրքը կը քեղըրթէր, առանց ինձի նայելու : Վայրկեաններ անցան : Կը թողուի զինքը իր ներքին աշխատութեանը հետ : Յետոյ, մէկէն, նորէն գլուխը վեր առաւ, իր վառող աչքերը ինձի յառեց, ու ըսաւ .

— Կ'ՈՒՉԵՄ ՈՐ ԽԵԼՔ ՏԱՅ ԻՆՄԻ :

Օ՛, գիրկս առի զինքը, ու սեղմեցի զինքը թեւերուս մէջ, անկուշտ համբուրելով իր աչքերը որոնք հիմա թաց էին : Յեղին ձայնն էր որ կը խօսէր իր բերնովը : Անգիտակցաբար, բնականօրէն, կը խնդրէր այն գէնքը որ պիտի ապ-

րեցնէր զինքը ներկայ քաղաքակրթութեան մէջ, միտ'կ ուժը որ իրեն անհրաժեշտ էր : Արիւնին մէջ ունէր այդ պէտքը դէպի իմացականութիւնը, դէպի դիտութիւնը, դէպի յառաջդիմութիւնը, դէպի յաղթանակը : Ատո՛վ էր որ իր ցեղը տուէր էր, ու պիտի տուէր :

Չէ՛, այդ ճգնաժամովը, դէպի այդ հորիզոնները լարուած կամքով մը, վախ չի կայ որ Հայութիւնը կորսուի, պարո՛ն, յարեց տոքթորը ոտքի ելլելով : Ամբո՛ւ մը նորէն Հայաստան պիտի դառնամ :

Լոնսոն

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ



ՇԷՅՆՈՐԴԻՆ



Ա.ՆԱԿԱՅԻ ՎԷԱ



ԻՄ ԲԱՐԵԿԱՄ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆ

Սէմրայի ցեղը եօթը օր կուլար իր ալեւոր Շէյխին մահը : Սուգը վրանէ վրան գուժելով սեւ ծալքերը կը տարածէր վրանաստանին վրայ : Մահուան երգեր, տխուր քերթուածներու մեղեդիներ թնդացին եօթը օր : Հերարձակ՝ լալկան կանայք, մաղերու փետտումով՝ տխրագին ճիչերով հեծկտացին — անվրէժ մեռնող զիւցազնը կ'ողբային . . .

Ռաշխ, Սէմրայի Շէյխը անվրէժ մեռած էր : Գիշերային խաւարներուն մէջէն, նիզակի մը սլաքը, կանակէն յանկարծակի զարկած էր զանի . վատ էր այն տէգը, աւելի վատ զայն բռնող ձեռքը . էլ-Քաղզապինն էր : էլ-Քաղզա՛պ . . . շարսո՛ւռ ու սոսկում . . . ահարկո՛ւ անուն, էլ-Քաղզա՛պ . . . ամենուն ծանօթ էր այդ զարհուրելի անունը, սակայն ոչ ոք տեսած էր խաւարաբնակ աւազակին դէմքը . էլ-Քաղզապ, անապատին սարսափը, տակաւին կ'ապրէր, եւ վրէժխնդրութեան լուծը կը ծանրանար Սէմրայի ցեղին վրայ :

Ո՞վ պիտի լուծէր Շէյխ Ռաշխի մահուան վրէժը :

\* \* \*

Նէտիմ, սեւ գանգրաներ երկայն խոպերով

պատանին, նստած է վրանին անկիւնը: Նորաբոյս պեխեր հազիւ հազ կը ստուերին պատանւոյն գորշ դէմքը. 'Նէտիմ' Շէյխորդի հարազատ Շէյխին աչքին լոյսը՝ անշարժ նստած է ակնապիշ. արցունքները իր այտերը չեն ողողեր: Խոկմանց մէջ ընկղմեալ իր սիրուն դէմքը, ճակատագրին անտրտունջ հպատակող արտայայտութեամբ, յանկարծ տարիքներ առած է. ցաւէն նոր փորուած թշերը անապատին լուռ ու խորունկ տխրութիւնն ունին:

Վշտահար մօրը բերնէն լսած էր իր ծնողին մահուան գոյժը եւ թէ սպանիչ աւազակը դեռ կ'ապրէր. անոր վրայ՝ սեւաչեայ պատանին, վրանին տակ քաշուած, խոկմանց մէջ կ'անցընէ սուգի եօթը օրերը. աչքը ցամաք, սիրտը քար կտրած, լուռ ու անխօս է ան, եւ ամէն ոք անոր լուռութիւնը կը յարգէ:

Ութերորդ օրուան արեւը դեռ չմարած, Սէմրայի ամբողջ ցեղը ոտքի վրայ կանգնած է. Շէյխին վրանին մօտ, մատակ մը թամբած, անհամբեր սմբակը կը դափրէ. հանգուցեալ դիւցազնին մատակն է: 'Նէտիմ' գանդրահեր սեւ խոպերով պատանին, վրանէն դուրս կ'ելլայ՝ վարդ այտերը ցամքած, աչուրները խորունկցած. պատանին մարդ եղած է: Յամբաքայլ մօտեցաւ մատակին, ցատքեց ու հեծաւ.

— Աստուած դաշոյնդ ուղղէ, որդիս:

Ու նայուածքը որդւոյն վրայ սեւեռած, մայրը անոր մեկնումը երկա՛յն դիտեց, անշարժ, տըխրադէմ, թեւերը կախ . . .

— Աստուած հետզ ըլլայ, որդի՛:

Ու Սէմրայի ամբողջ ցեղը հաւաքուած, Աստուծոյ անունը յիշելով՝ թեւերու նահապետական շարժուածքի մը մէջ իր օրհնութիւնը կը շրկէր երիտասարդ ուղեւորին ետեւէն, ու կը հետեւէր ձիաորին տրոփին որ նիզակը ձեռքը անապատին դէպ ի անդունդքը քառարչաւ կ'անհետանայ, մինչ արեւակը, իր կրակի պոյն շէկ ճառագայթներովը՝ մարը չմտած՝ պահ մը եւս կը շառագունէ այդ նկարին վեհութիւնը:

\* \* \*

Անապատ . . . Անհունութիւն:

Հոն ամենայն ինչ անվերջ է — ծաւալական տեւողութիւնը անտատան կը տարածուի, կ'երկըննայ, յաւէտ կը սփռուի անծայրափակ գորշ մակարդակին վրայ . . .

Անապատ . . . Լուռութիւն:

Հոն ամենայն ինչ անձայն է — միօրինակ

տարածութեանց վրայ լուռութիւնը համր ու անքիթիթ կը սաւառնի . . . օդը մունջ է, սաղարդներու տերեւներուն մէջէն շփուելով անցնող հովին սօսափիւնը չես լսեր հոն. այդ վայրերը՝ գաղտնապահ ու անխօս՝ իրենց յանձնածո անդարձ կուլ կուտան. ձիուն խիսինջը արձագանգ երբեք չի գտնար, ձայն ու գոչ իսկոյն կը ցնդին եւ ներքեւ գետինները խուլ՝ այնքան խուլ են որ նժոյգիդ սմբակին դափրը անգամ չես լսեր. եւ շուրջդ լուռութիւնը նօսը է ու ջինջ ա՛յնքան որ մտքիդ խորհածը գողցես ականջդ կը լսէ:

Անապատ . . . Տխրութիւն:

Երբեք ծիծաղը անոր երեսը չ'ակօսեր. — Խուլ-մունջի մը տխուր դէմքով միշտ խոկմանց մէջ է ան: Սրտէ դուրկ ու անողոք, անապատը ճճիին իսկ կեանք չի պարդեւեր, եւ գուցէ այն տխրութիւնը իր ակամայ անողոքութեանը՝ կամ անէծքի մը վճռին հետեւանքն է, անոր համար մաղձ ու թախիծը իրենց ծանր նսեհը կը ծաւալեն չորս կողմը:

Անապատին խորհրդաւոր տրտում հողին, հողւոյդ վրայ անհպօրէն կ'աղղէ, Անսահմանն ու Անհունը ներսդ կը մոծուին. Անսկիզբն ու Անվերջը կ'ըմբռնես եւ այն պահուն մեկնութեան մը կարօտը գրեզ չի մարմաջեր:

Ա՛խ այդ անծայրափակ ամայութեանց տեւողութիւնը, այդ ներշնչող հեռաւորութեանց լոին ծաւալումը, երբեք հետքէ մը չգծուած, միօրինակ, միածաւալ, միահա՛րթ . . .

Մերթ ընդ մերթ ժանիքաւոր տափափուչներ թիղ մը վեր կը ջանան բարձրացնել գլուխնին. այն բոյսերը գետիններուն պէս գորշ են: Իրենց սայրածեւ երկայն տերեւները, չոր պապակած լեզուներու նման, արեգակին սլաքաց ներքեւ ջղերու պրկմամբ հրատապ շոյով կը տոչորուին. անշէջ ծարաւի դառապարտեալ այն անթառամները, օրհանին անհաս՝ կը սպասեն ուղտին անցքին որուն անունը պիտի ըլլան, միակ անունը անապատաց այն հարազատին:

Խորհրդապատ միայնութեանց մէջէն 'Նէտիմ' նետի պէս կ'ընթանայ . . .

Ատեններ անցան. 'Նէտիմ', վրէժի խուզակը, անդադար կը փնտոէ: Քանի անգամ արղէն անապատը խաչածեւ կտրած անցած է, աչքը հեռաւորութեանց վրայ յառած. աջ ու ձախ, ամէն կողմ կը փնտոէ, կ'որոնէ, անխոնջ անընդհատ կ'ընթանայ. ի զո՛ւր: Արեւուն խորհուրդ հարցուց, աստղերուն հետ խօսեցաւ. ի զո՛ւր. ո՛չ ոք . . .

Եւ կը սպասէ բաղդին ձայնին. Արաբացիին

համբերութիւնը իր անապատին նման լայն ու անհուն է, սակայն նոյնքան սաստիկ եւ մոլեգին է սրտին զայրոյթը :

Այլ եւս Նէտիմ կատղած է . անապատին անդունդքը իր գոչերով լեցուեցան , սրտին հեծեծանքէն մանչիւնները միջոցը բռնեցին . ցասու մի վայրագ շանթով աչուրները կը վառին . մագերը հովին , թեզանիքը ուռած , խրթնահայեաց , տէգ ի ձեռին , վագրի պէս կ'արշաւէ ան , ու մատակը , գրգռուած , հովուն հետ կը մրցի .

Ի զո՛ւր , ոչ ոք . . .

Գիշերները, երազէն արթնցած, գլուխը կ'առնէր կ'երթար հողմի մանչմամբ սուբալով . խսկ մատակը շէյսորդին հոգւոյն մըրիկը կը զգայ , ու հեւքը բռնած, աստղերուն փայլին տակ կը թռի գետինները լափելով .

Ի զո՛ւր . . . ո՛չ ոք . . .

Երբեմն, գիշերային խուզարկէն յոգնած, քնաթաթախ, գետինը փռուած կը ննջէ . իր խորագոյղ հագագը կը կասեցնէ անապատին թափառող առիւծը որ պահ մը կանգ կ'առնէ ու զգալով քնացող զիւցազին սրտին սեւ փոթորիկը , բաշը բարձր՝ ամմուռնչ ու վեհանձն յարգանօք մէկդի կը քաշուի խաւարներուն մէջ :

Օր մը սակայն , իրիկնամտին , գորշ տափաստանին ծայրը , հեռուն , հորիզոնին մօտ՝ գորշագոյն կէտ մը աչքը կը գրաւէ . բայց անապատին հեռուն այնքան մօտ է որ տեսողական տարակոյտ մը կը ծնի , յոյս մը թերեւս . . . ու Նէտիմ մտրակեց մատակը , թռաւ մօտեցաւ , մերձեցաւ . Ի զո՛ւր . . . շառագունեալ հորիզոնին վրայ , հետզհետէ վրանի մը քրգածեւ ուրուագիծը կը դրոշմուի , Արաբացիի փոքր վրան մըն է ան . Նէտիմ իր ցցած սեւ վրանը կը ճանչնայ , եւ կը գիմէ հոն գիշերը անցընելու :

\* \* \*

Կէս գիշեր է :

Սրածայր արծաթացու մահիկով , բիւրակարկաջ աստղերով փայլիլուն Արաբիոյ գիշեր մը : Ամենուրեք անդորրութիւն : Այն գիշերներէն մին ուր լուսնուհան եւ միայնութեան աղբիւրները աւելի խորունկ են :

Վրանին ներքեւ , Նէտիմ, կէս նիւրհի մը մէջ, յանկարծ երիվարի մը խխինջը լսեց , սիրտը թռնած՝ ալանջ զրաւ . զղբիւն մը . . . — տեղէն ցատքեց Նէտիմ , արգէն դուրսն է :

Ձիաւոր մը երիվարէն վար իջաւ :

— «Աէլամիւնա՛լէյք» , ըսաւ անձանթը :

— «Աէլէ՛յքիւսսէլամ» .

Եւ իւրաքանչիւր ոք ձեռքը կուրծքին տարաւ :

Նոր եկողը , նիհար ու երկայնահասակ է . դէմքը տգեղ՝ վայրագ արտայայտութեամբ , ուր մէկ հատիկ աչք մը (միւսը անշուշտ կոխի մը մէջ կորանցուցած) թափանցող ու զփնահայեաց , միապիշ՝ նայած տեղը կը գամուի :

Վրանը մտան : Չնստած , վերստին բարեւներ փոխանակուեցան : Նէտիմ լրած կը սպասէր , մինչ միականին շեշտակի նայելով երիտասարդին , ըսաւ .

— Օթեւան փնտոեցի ու վրանդ զիմացս ելաւ , հիւրասիրութեանդ զիմողը Վագրորդի էլ-Քազզայն է , Աստուած վրանդ մեծցնէ . . .

Վագրորդի էլ-Քազզայն . . .

Նէտիմի կեանքը կեցաւ :

Կայծա՛կ իջաւ թէ չէ կ'երագէ ան — շունչը բռնուած , ըզեղը դանկէն դուրս ժայթքելու մօտ , խենդենալու վրայ՝ աչուրները շանթեցին . . . մէջքին դաշոյնը պատեանին մէջ սարսուռներով դողդուաց . . . Սակայն Նէտիմ գլուխը ծռեց ու ձեռքը կուրծքին տանելով ,

— Բարո՛վ եկար, Աստուծոյ հիւրն ես, վրանս քուկդ է , հանգչէ , տէ՛ր :

Հանգչեցաւ ան :

Նէտիմ հօրը սպանիչը վայրկեան մը դիտելէն ետքը , յուզմունքէն կիսահեղձ՝ վրանէն դուրս նետուեցաւ շունչ առնելու : Աստղափայլ գիշերուան լոխն միայնութեանը մէջ , մատակը ցած խխինջներով կարծես թէ զինքը կը կանչէր . մօտեցաւ անոր ու սկսաւ փայփայել ու սիրել , մինչ կենդանին իր անսովոր եւ խուլ խխինջները կը շարունակէ երիտասարդ տիրոջը երեսն ու ձեռքը չրթներովը անուշ անուշ լզելով : Սիրտը խռոված ու յուզեալ , Նէտիմ, գգուեց շոյեց մատակը , գլուխը գլխուն մօտեցուց ու անոր լայն թրթռացող պինչքերուն համբոյրներ զրաւ եւ այն պահուն երեսին վրայ թաց ու խոնաւ ծորում մը զգաց . մատակը իր նախկին տիրոջը՝ Շէյխին՝ սպանիչը ճանչցած էր : Վերջապէս գտած էին զանի :

Անանկ գլուխ գլխու տուած մնացին :

Գիշերը կ'անցնէր . . . վրանին ներքեւ երկայն փռուած կը ննջէ էլ-Քազզայն . . . աւազակին խուստ խորդիւնին եւ արիւնոտ երազներուն զիմաց՝ քանի անգամներ , Նէտիմ , անզուսպ աչքերը վառ , արեան յիշատակէն կատրած , մոլեգնոտ ձեռքովը սեղմեց դաշոյնը . . . սակայն կարծես խաւարին մէջէն ձեռք մը ձեռ-

քին վրայ կը ծանրանար ու կը զսպէր զինքը :  
 Լուսնալու մօտ , հորիզոնը շիկակարժիր ե-  
 րանգներով զունաւորուած էր հազիւ , եւ անա  
 էլ-Քաղզապ յանկարծ կը ցատքէ՝ քունէն ար-  
 թընցած : Միակ աչքը շուրջը պտըտցուց , զէն-  
 քերը ու ձին փնտոեց :

Գուրսը նէտիմ արդէն անոր ձին պատրաստած  
 կը սպասէ : Աւազակը մօտեցաւ երիտասարդին :  
 Սակայն նէտիմ , առանց անոր ժամանակ ձգելու  
 երախտիքի ու չնորհակալութեան պարտքը կա-  
 տարել , ասանկ խօսեցաւ .

— Է՛ , էլ-Քաղզապ . Սէմրայի Շէյխ Ռաշի-  
 տին որդին եմ ես . . . հօրս վրէժն առնելու ե-  
 լած՝ տարիէն աւելի զքեզ ի զուր փնտոեցի :  
 Թուչունի պէս եկար ինկար վրանս . գիշերը դա-  
 շոյնիս տակ փոռուած էիր , սակայն շէյխորդի  
 նէտիմի վրանը հիւրասէր է . Աստուծոյ հիւրն  
 էիր . հիւրընկալութեան օրէնքը ոտնակոխ չըրի .  
 հիմա , հեծի՛ր , գնա՛ ազատ հեռացի՛ր , ես իմ վը-  
 րանէս չեմ շարժիր մինչեւ որ գիշերուան առա-  
 ջին աստղը չփայլի — էլ-Քաղզապ Վազորդի,  
 հիւր Աստուծոյ , երթաս բարեա՛ւ . . .

Ահարկու աւազակը , անշարժ , կայծակէ զար-  
 նուածի պէս , անձոռնի աչքը նէտիմի վրայ տըն-  
 կած , կը նայէր . . .

Նախազգացու՛մ թէ ճակատագիր : « Գիշերը  
 դաշոյնիս տակ փոռուած էիր . . . » Աչքը շան-  
 թեց եւ դէմքը դալկացաւ :

Առանց բառ մը արտասանելու , էլ-Քաղզապ  
 իր ձիուն մօտեցաւ . . . նէտիմ ասպանդակը  
 մատուց անոր՝ եւ աւազակը ցատքեց հեծաւ ,  
 ու պապանձած , վարազարար՝ աչքը քովետի՛  
 հեռացաւ սրարչաւ առանց ետին իսկ նայելու :

\* \* \*

Նէտիմ , ոտքի վրայ կայնած՝ մատակին մօտ ,  
 անոր հետ միասին աչուրնին արեւմուտքին տըն-  
 կած , լոխն կը սպասեն : Արեգակը ապշած ու  
 հմայուած՝ զանոնք դիտելով հորիզոնէն վար սա-  
 հեցաւ անցաւ :

Երկնից կապոյտը սկսած է մթադնիլ , ա՛լ  
 նէտիմ դէպի վեր կը նայի , կը փնտոէ . . .

Մահիկը՝ տարտամ ու թափանցիկ հազիւ հազ  
 երեւցաւ , նէտիմ ձեռքը դաշոյնին տարաւ ու  
 կրկին նայեցաւ սրածայր այն մահիկին որ ներ-  
 չընչած է Արաբին իր դաշոյնին կոր ձեւը , չըրթ-  
 ները մըմունջ մը ունեցան , աղօթք մը վեր  
 թռաւ , ու աստղ մը փնտոեց . . . պահ մը եւս  
 . . . մատակը , սկանջները ցցած , աչքը հրա-

վառ , պոչը կամար ու ծփուն , նշանի մը կը  
 սպասէ : Ահա թարթիչ մը , ցոլ մը , կարկաջներ ,  
 ահա՛ իրիկնաստղը , ու նէտիմ սանձը մատակին  
 բնազդին ձգեց . . . արոփ մը , հովու ձայն մը  
 . . . ու անհետացան :

Ատեններ անցած են :

Թեւերը կախ՝ տիրադէմ ու անշարժ , Շէյխին  
 այրին կը սպասէ . Սէմրայի ցեղը հաւաքուած ,  
 ձեռքը ճակտին , հորիզոնին պիշ կը նայի :

Յանկարծ անապատին անդունդքէն կէտ մը  
 կը ծնի , հետզհետէ կը խոչորնայ , ամպի փոշի  
 մը կ'ուռի , կը թաւալի , կը մերձենայ , սրարչաւ  
 ձիււոր մը միջոցը կը լափէ . նէտիմն է :

Վրէժի խուզակը նիզակածօճ կը տրոփէ , տէ-  
 գին ծայրը գլուխ մը գամած . էլ-Քաղզապին  
 գլուխը . . .

Սէմրայի Արաբները իսկոյն ճանչցան իրենց  
 շէյխորդին . ուժգին գոչեր , խնդութեան աղա-  
 զակներ թնդացուցին վրանաստանը :

Նէտիմ , յաղթական , գլուխը բարձր , մատա-  
 կէն վար ցատքեց .

— Ահա՛ , մա՛յր իմ , ըսաւ .

Եւ աւազին մէջ ուժգին խրեց նիզակը որուն  
 ճօճումէն ծայրի ցցուած գլուխը գլորեցաւ ըն-  
 կաւ գետին :

Մայրը սրտին վրայ երկայն սեղմեց իր նէ-  
 տիմը :

Նոյն օրն իսկ , էլ-Քաղզապին գլուխը Շէյխին  
 ոտքերուն ներքեւ թաղուեցաւ , եւ՛ Ռաշիտի ոս-  
 կերքը գերեզմանին մէջ ցնծացին :

Բարից

ՄԻՐ-ԵՐՕ



ԿԱՐՄԻՐ ԶԱՂԱՅԲԸ

Արձակ քերթուած

Տխուր նախազգացումներ իրենց սեւ պարովը  
 գլուխս կը դարձնէին եւ թաղծալի ներշնչում-  
 ներու մէջ հողիս առկախուած՝ պատրանքի աշ-  
 խարհներու ծոցը կը մղուէի :

Ամէն բան սեւ էր հոն . չղջիկներու երամբ  
 նմանող սգաւոր հողիներ կը սահէին միջոցին

մէջ , լացող երգեր կը լսէի շուրջս , եւ այրող սրտերու հոտ մը մուծիւն մէջ կը թանձրանար :

Սրտի տրոփներ կը թնդային հոն եւ առեւելի եղանակ մը կը շինէին որ բուերու լացին կը նըմանէր . պատար մը սեւ եզած էի ես ալ , անհուն աղջամուղջին փակած որ ամբողջ միջոցին կը տիրէր :

Կը թափառէինք այսպէս , եւ ա'լ գրեթէ մութը չէինք զգար . անոր խորութիւններուն մէջ հսկայ շինուածքներ իրենց օդային կառուցումը կը բարձրացնէին եւ անոնց մէջէն կ'անցնէինք առանց արգիլող կէտի մը հանգիպելու : Մթնուլորտային հծծիւն մը մեր գնացքը կը վարէր , որ ա'լ պար մը կ'ըլլար , խենդ , միօրինակ պար մը իրարու կապուած ստուերի պատաններու . եւ այսպէս իրարմէ քաշքշուած կը դառնայինք բանի մը շուրջը յուսահատեցուցիչ տենդով , յիմար , անգիտակից :

Պաղ լոյս մը իր ցուրը ձգեց միջոցին մէջ . եւ կանգնեցաւ մեր աչքին առջեւ կարմիր ջաղացքը որ կը դառնար :

Հսկայ ջաղացք մըն էր ասիկա , որուն գազաթը ստուերներու մէջ կը կորսուէր . կը դառնար շարունակ եւ ամէն մէկ անցքին կը լսուէր ճթրառուքը իր անտեսանելի անխիւն որ երկայն հեծիւնով մը կը վերջանար արձագանգին մէջ . կարմիր արիւնը կը հոսէր ամէն կողմէն , կարծես զանգուածին բոլոր ծակտիքներէն ու կը ներկէր ջաղացքը որ ա'լ խտացած արիւնէ շինուած կը թուէր :

Հեռուն անգլին բերաններ կը բացուէին եւ իրենց այլանդակ քրքիջով կը պատասխանէին ջաղացքին խորէն ելած հեծկտանքներուն :

Ի՞նչ կը մանրէին հոն , ի՞նչ կը ձգմէին :

Մեր պարը աւելի տենդոտ էր հիմա , ու սառած ցուրը հետզհետէ աւելի ուժով կը լուսաւորէր արհաւիրակից շինուածքը :

Այն ատեն տեսայ որ սրտեր կը նետէին անոր մէջը :

Կը նետէին , կը նետէին տարօրինակ արագութեամբ , այդ սեւցած ու ծակծկուած մսի կտորները , կը նետէին , շատերը խանձուած ու շատերէն գրեթէ ոչինչ մնալով . եւ քանի կը նետէին , այնքան սեւ հոգիները կը շատնային մեծ սուզին մէջ , եւ հծծիւնը ա'լ կը թնդար , կը տիրէր ամէն կողմէն արտաշնչուող լացերուն , ծիծաղներուն , երգերուն :

Ի՞նչպէս ասոնք կը ծծէի իմ էութիւնովս , ի՞նչպէս անոնց ներարկումը զիս հիւլէ առ հիւլէ կը քակէր . ու կը նայէի սրտերուն , երբեմն դեռ

թարմ , կարմիր սրտերուն՝ որ ջաղացքին մէջ կը նետէին :

Յանկարծ քամուելու պէս բան մը զգացի , տարտամ գոյութեանս անսուրանալը կարծես , եւ սրտերուն մէջ նշմարեցի իմն որ հոն կը նետէին :

Գերագոյն յուզումով մը սարսափած՝ շուրջս կը նայէի , երբ տեսայ Անոր աչքերը որ վերէն իրենց նայուածքով ջաղացքը կը վարէին :

Բարիդ

ՉԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ԱՆԱՊՍՏԷՆ ՉԱՅՆ



ՄՈՍՊ ԼԵՍԻՍ

Շարապատ , 5 հոկտ. 1898

Սիրելի բարեկամ ,

Բարիդի մէջ հրատարակուելիք հանդէսի մը աշխատակցելու հրաւերը կ'ընես ինձի՝ որ գրեթէ երկու տարիէ ի վեր Քեսիմի երկիրը կը բնակիմ , այն երկիրը ուր « Իսրայէլ կը բնակէր Եգիպտոսի երկրին մէջ » , Մէնզալէի լճին ու Սինայի լեռան միջեւ տարածուած անապատը... : Խոստովանէ՛ որ հրաւերդ ո՛րչափ զգուիչ , այնչափ դժուարին է ինձի համար : Բարեբաղդաբար այն անխոհեմ համարձակութիւնը զոր ունիմ եւ որուն շնորհիւ տասը տարիէ ի վեր կը գրեմ , այս անգամ ալ թեւ կուտայ ինձի առաջ նետուելու :

Մանաւանդ այժմ ինքզինքս աւելի զօրաւոր կը զգամ իմ անխոհեմ համարձակութեանս մէջ , որովհետեւ բաւական խարխափումներէ ետքը վերջապէս կրցայ իմաստասիրական զրութեան մը յանգիլ : Դիտելու , քննելու եւ որոշում տալու համար գործիք մը ունիմ որ կը հաւատամ թէ անսխալական է . երջանկութիւն չէ՞ ասիկա : Այո՛ , բարեկամ , յեսիմ մըն եմ հիմա . . . եւ պիտի ըլլամ մինչեւ ետքը :

Սողոմոնի Տաճարի մուտքին մօտ նստարան մը կար զոր Մոսապ յեսիմ կ'անուանէին՝ այսինքն « ծաղր ընողներու » նստարանը : Փարիսեցին կ'անցնէր այդ նստարանին քովէն երեսը ծածկելով , Սաղուկեցին արհամարհոտ նայուածք մը կը նետէր դէպ ի հոն , քահանայապետը ու Ղեւտացին կը գայթակղէին ամէն անգամ՝ տես-

ներով որ նստարանը լեցուն է : Քոնկենները , հազիսիւնները , նիպսադները , սոփերները անէծքով ու թշնամանքով կը նախատէին հոն եղողները , բայց նստարանին վրայ միշտ կը դրտնուէր շխիւններ :

« Ծաղր ընողներու ժողովին մէջ չնստայ » , կ'ազազակէ Երեմիա մարգարէն , եւ Սաղմոսերգուն , Սաղմոսներուն սկիզբը , երանելի կը գրտնէ այն մարդը որ « ծաղր ընողներուն նստարանը չի նստիր » :

Ա՛խ , այս շխիւնները , բան մը չէին խնայեր : Կը ծաղրէին կեղծաւոր Փարիսեցիները , հարուստ Սաղուկեցիները , մեծամիտ քահանայապետը , տգէտ բարեպաշտը , խղճագէտ դպիրը , Սրբութիւն Սրբոցը , Քաւութեան սեղանը , Ողջակէզը , Թորա՞ն , արարչութիւնը եւ Արարիչը . . . Ենովա՞ն :

Ահա՛ ես անոնցմէ եմ , շխիւններուն ընկերը , ծաղր ընողներուն նստարանին վրայ նստող մը : Թապալէ , հոգեվարք վիճակի մէջ , երբ ա՛լ պիտի մեռնէր , ըսաւ քովիններուն .

— Քաշեցէ՛ք վարադոյրը , զաւեշտը վերջացաւ :

Քանի որ կեանքը զաւեշտ մըն է , լաւագոյն տեղը այդ զաւեշտը դիտելու համար՝ Մոսապ շխիւնն է անշուշտ :

\* \* \*

Իրա՛ւ , կեանքը խաղ մըն է : Ծատ մը անկապակցութիւններէ , աղճատանքներէ , այլանդակութիւններէ , բառախաղներէ , ծաղրալից զէպքերէ ու խաղքութիւններէ կազմուած բան մը : Բայց ափսո՞ս որ այդ ամենը ի վնաս մեզի կը խաղցուի , այնպէս որ մենք , հանդիսատես ու դերասան միանգամայն , յաճախ կը շփոթենք ու չենք կրնար որոշել՝ կատակերգութեան թէ ողբերգութեան մը ներկայ կը գտնուինք եւ թէ իրաւունք ունինք զուարճանալու :

Այս անորոշութեան արգիւնքն է , ըսա իս , շխիւնը , որ փոխն ի փոխ լալու կամ խնդալու պատապարտուած՝ վերջապէս երկուքէն ալ կը հրաժարի ու կը սկսի ծաղրել : Ինչպէս կը տեսնես , երբէք չեմ նոյնացներ ծաղրելը խնդալուն հետ :

Խնդալը գոհունակութեան , հաճոյքի , զուարճութեան արտայայտութիւնն է : Արդ , Դիոգիւնէս , Արիստոփան , Լուկիանոս , Յորնաղ , Սէրվանթէս , Վոլթէն եւ ուրիշներ , որոնք շխիւն-

ներ եղած են , զո՞ն եւ ուրախ մարդի՛կ էին : Ծաղրը , ո՛վ գիտէ , զուցէ լալու մէկ դառնագոյն ձեւն է :

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

« ՃՈՔՈՆՏԱ »Ն (1)

Պատմութիւնն այս նկարը կը նշանակէ իբրեւ կենդանագիրը Մոնա Լիզա տէլ Ճոքոնտոյին . եւ ժամանակակից քննադատութիւնը զայն նկատեց իբրեւ բարձրագոյն հրաշակերտը մարդկային զէմքին արուեստական արտայայտութեան : Բայց այդ վրդովիչ երեւոյթը , անհատի մը նկարական վերարտադրութիւնէն աւելի բան մըն է : Ասի մէկն է այն գործերէն , ինչպէս հին Սոփոկլին Իդիպոսը կամ նոր տիտանին Հաւնիքը , որոնց նշանակութիւնը , իր անպարզիժ ընդարձակութեամբ , ժամանակին ու նոյն իսկ հեղինակին որոշ զիտաւորութիւնէն անդին կ'անցնի եւ կը կերպարանափոխուի ու կը բազմապատկուի այն բոլոր նորանոր տեսիլքներովն ու խորութիւններովը զոր հետզհետէ եկող սերունդները անոր մէջ կը գտնեն : Տարիներուն հոլովմամբը , զէմքին անցեալի մէջ նուազումովը , եւ այն խուսափուկ անսահմանելի հրապոյրովը զոր արուեստագէտներուն ամենէն մոգականը դրած է հոն բոլոր դարերուն համար , մենք այդ կենդանագրին մէջ կը տեսնենք նոյն իսկ Վինչիին հոգին , ազնուական խորհրդաւորութեամբ չինուած , այդ անպատում կերպարանքին մէջէն ժպտելով գերագոյն այն ժպիտը , զոր Աստուած գտած չէր եւ զոր ինքը ստեղծեց :


Գործին երկնումը կ'աննիւթանայ արդէն , աւանդութիւններուն համեմատ , արտասովոր եւ նուիրական մանրամասնութիւններով : Կը կարծուի թէ Վինչի կը սիրէր Մոնա Լիզան , եւ թէ

(1) Լիւնարտո տա Վինչի , հեղինակը «Ճոքոնտա»ին , «Ս. Յովհովնէս»ին , «Լէտա»ին , «Ընթրիք»ին եւ ուրիշ հրաշակերտներու , ծնաւ 1452ին Ֆլորենցայի շքշակաները եւ մեռաւ 1519ին : Հանրագիտական միտք մը եղաւ , միանգամայն երկրաչափ , բնագէտ , գրագէտ եւ նկարիչ : Իր կեանքին մեծ մասը անցուց Իտալիա , Մէտիչիններուն , Սֆորցաներուն մօտ , իսկ վերջին մէկ բանի տարիները՝ Ֆրանսա , Ֆրանսուս Ա.ի արքունիքը : — Վինչիի կեանքին ու գործին վրայ պիտի հրատարակենք ի մօտոյ մանրամասն ուսումնասիրութիւն մը մեր աշխատակից Տիգրան Եսայեանի ձեռքով պատրաստուած :



ԼԻՕՆԱՐՏՕ ՏԱ ՎԻՆՉԻ . — « ՃՈՒՈՆՏԱ » ն  
Լուվրի քանդարանին մեջ, Բարիզ

1850



Copyrighted by the Library of Congress

Digitized by Google

այդ պատճառով չորս տարի երկարաձգեց յօրինումն իր նկարին, զոր երբեք աւարտած չհամարեց: Գիտենք նաեւ որ երաժիշտներ, հրապիտներ եւ կաքաւոզներ կը խմբէր նազելի օրինակին շուրջը, որպէս զի նուագներուն ու խորախճանքին մէջ անոր դէմքին արտայայտութիւնը միշտ լուսաւորուած մնար քնքուշ ուրախութեամբ մը: Եւ ինքն իսկ Վինչի իր յիշատակներուն մէջ կը գրէ թէ երբեք իր նկարը այնչափ առաջ տարած չէր որչափ այն պահերուն երբ անշարժ, անոր դիմացը, կը նայէր ու կը խոկար: Սէրը, Երգն ու Լուսութիւնը համագործեցին ուրեմն որպէս զի ծնէր Վինչիին մշտքէն իր զաւակներուն ամենէն թանկագինը:

Անաւասի'կ անիկա, առեղծուածք: — Երազի խորքի մը վրայ, ուր կապոյտ բարակ ժայռեր կը բողբոջին մանուածապտոյտ շուրերու մէջէն, կը յառնէ ա'ն, երազի կի'նը, թաղուհին՝ գիտցողներու անբարբառ ու քօղարկեալ ընտանիքին: Ճակատը, թեթեւօրէն գմբէթարդ, մտածման անօթի մը պէս կը կլորնայ սեւ թափանցիկ լաչակին տակ, որուն երկու քովերէն մութ շէկ մազերու կրկին հիւսկէններ ոլորուելով կը կախուին եւ կ'երթան թափթփիլ մինչեւ կենդանի փղոսկրը կուրծքին: Դէմքը, որուն դիւթական ձուածեւը կը հանգչի ստուերով փայփայուած սլացիկ ճապուկ վզին վրայ, կը ներկայացնէ, իր ներդաշնակ ու թաւշենի ելեւէջներով, գերագոյն փթթուած Ենտրիին որ Նիւթին մարդկային ձեւէն արտաշնչուած ըլլայ երբեք: Աչքերը փոշեձեւ նրբանուրբ յօնքերուն ներքեւ թուլօրէն բացուած՝ անուշութեան ծաղիկներու պէս, կուպերուն եզերքը թեթեւ մթութեամբ մը պաշարուած՝ որ փափուկ խոնջենքի մը քօղը կը ձգէ անոնց վրայ, ընկղմած կը ծածանին աներկրաւոր նայուածքի մը մէջ ուր հեռաւոր ծագումը կը զգացուի ժպիտներու ժպիտին: Բերանը, մըստ ու նուրբ միանգամայն, շրթներուն գիծը քաղցրօրէն վէտվէտուն, եզրանկիւնները դէպի վեր այտերուն մէջ փոսուած, կ'ամփոփուի ինչպէս կնիք մը վարդագոյն՝ զաղտնիքին վրայ: Թուխ կանանչ խոպոպեալ պատմուճան մը երկիւղածաբար կը վարագուրէ լանջքը, որուն ծնունդը միայն կը նշմարուի վերին եզերքէն: Եւ ձեռքերը գոգին մէջ կը միանան ու կը փակուին:


Ասիկա Կոյնն է որ մեր սողումը ապրելէ առաջ, կեանքը գիտցաւ եւ չհաճեցաւ ապրիլ:

Իր գերագոյն զեղեցկութիւնը կը ծնի իր գերագոյն տրտմութենէն: Ասիկա Հոգին է գինովցած ներքին երաժշտութեամբն իր մաքուր մտածմանը: Ասիկա Կինն է որուն աչուրները խելայեղ երկրպագութիւններուն կը մղեն եւ անկարելի աննշանքները կը ներշնչեն, բայց որուն բերանը, անմատոյց՝ ամէն տարփանքի, երբեք պիտի չերկննայ վաղանցուկ Կրքին գոեհիկ հպումներուն: Ասիկա Խորհուրդին Տիրամայրն է, որուն առջեւ պիտի երթան սփոփուիլ կեանքին կեղեւէն զզուած բոլոր ազնուական մտքերը:

ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ



Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ՔՐՈՆԻԿ



ՀԱՅԵՐԸ Ի ԲԱՍՈՒՋ. — Վանքամ Սվաճեան, որ Էռոտի սրահին իր մասնաւոր նուագահանդէսներովը արդէն ունեցած էր զեղեցիկ յաջողութիւններ, առաջին անգամ ըլլալով հրաւիրուեցաւ մեծ ցերեկոյթի մը, որ արուեստաւ հոկտ. 19ին Թոքատէտոյի պալատը, ի նպաստ Մոռանթիի մէջ հաստատուելիք աղքատ երախաներու ապաստանարանի մը, եւ որուն կը մասնակցէին Թէաթո-Ֆոնանսէէն, Օբէնայէն, Վոտվիլէն, Օտէնէն արուեստագէտներ, ինչպէս Գոքլէն Գատէ, Մելքիսէտէք, Ֆիլիք Կառնիէ, Ժիլտէս, եւն: Սվաճեան զարկաւ իր հեղինակութիւններէն մին, Սիեռցօ ա շ'առմէնիեռն. կտորը՝ իր մրրկալից ու վեհ ներշնչմամբ, եւ արուեստագէտին կրակոտ ու ճարտար զարնուածքը երկարատեւ ծափահարութիւններով ողջունուեցան: Սրտանց կը շնորհաւորենք մեր բարեկամն ու աշխատակիցը, որ ոչ միայն Հայոց վարպետ գրագէտներէն մէկն է, այլ եւ կոչուած է Բարիզի հուշակաւոր երաժիշտներուն կարգը անցնելու:

Երուանդ Մանուէլեան, որուն անունը գիտական աշխարհին մէջ նշանակելի տեղ մը գրաւեց՝ յորմէհետէ Պ. Մաթիաս Տիւվալ Չղային բջիջներու վրայ անոր կատարած հիւսուածաբանական հետազօտութիւնները հրապարակեց իր ամսվերջի դասախօսութեամբ եւ Ռշվիւ Սիանքիֆիֆի (մարտ 11) յօդուածով, յառաջ տանելու

վրայ է իր աշխատութիւնները , որոնք կենսական նպաստ մը կը բերեն Ղղային գրութեան մեծագոյն երեւոյթներուն բացատրութեան :

Մեր ընթերցողները թերեւս արդէն գիտեն , հայ մամուլոյ մէջ այդ մասին հրատարակուած յօդուածներէն , թէ Մանուէլեան , իր գիտողութիւններէն եւ փորձարկութիւններէն յաջողեցաւ հասնիլ , Մաթիաս Տիւվալ վարպետին հետ , ընդհանուր վարկածի մը , որ այսօր հանրաձանօթ է hypothese des nervi nervorum (Չիղերու Չիղին վարկածը) անունով , եւ որու համեմատ կը հաստատուի գոյութիւնը բարձրագոյն Ղղային բջիջներու որոնք կը վարեն եւ կը կանոնաւորեն Ղղային գրութիւնը :

Այս վարկածը քայլ մը առնել կուտայ այն նոր ու մեծ ճամբուն մէջ գոր բացին Բէօլնիքէր , Կոլճի , Քահալ , Մաթիաս Տիւվալ : Մանուէլեանի աշխատութիւնները սկսած են եւրոպական ուշադրութիւն մը գրաւել : Ա. Պինէ , Սոպանի բնախօսական հոգեբանութեան աշխատանոցին տնօրէնը , իր այս տարուան Հոգեբանական Տարեգիրքին մէջ գրեթէ ամբողջութեամբ արտատպած է Մաթիաս Տիւվալի դասախօսութիւնը , իր կողմէ գնահատական գրուատալից ուսումնասիրութիւն մը աւելցնելով , եւ այդ առիթով խնդրած է Մանուէլեանէն մէկ քանի լուսարանութիւններ եւ գծագրութիւններ , որոնք հրատարակուած են նոյն յօդուածին հետ :


Պրեւքսէլի Էնսիդիլ Սորիէէն , Բոօֆ. Տրմուռ եւ Տր. Բէտոն , որոնք ծանօթ են նոյն ճիւղին մէջ իրենց աշխատութիւններով , իրենց լապտոթուաւին վերջին հրատարակութեան մէջ մեծ գովեստով կը յիշեն Մանուէլեանի հետազօտութիւնները եւ իրենց նոր կատարած փորձերով կը հաստատեն անոնց ճշգրութիւնը :

Բորզուկալցի գիտնական մը , Աթիաս , Ղղային բջիջներու վրայ երեւցած վերջին քննութեանց մասին ընդհանուր տեսութիւն մը հրատարակած է մօտերս , ուր շատ կարեւոր տեղ մը կուտայ Մանուէլեանի ձեռք ձգած արդիւնքներուն :

Ուրախութեամբ կը ծանուցանենք մեր երիտասարդ եւ արդէն մեծանուն բարեկամին յաջողութիւնները , որոնք պիտի շարունակուին , եւ որոնց մասին հաճոյքով պիտի տեղեկացնենք միշտ մեր ընթերցողները :

Բարիղի Հայ ուսանողաց Միութիւնը որոշած է գրական եւ երաժշտական հանդիսաւոր երե-

կոյթ մը տալ նոյեմբեր 5ին Խնկոն Բռեթիեկի սրահին մէջ , հայ մեծ վիպասան Սաչատուր Աբովեանին մահուան յիսնամեակի ազգային տօնին առթիւ : Միութիւնը յաջողած է պատրաստել շատ փայլուն յայտագիր մը , չնորհիւ բարիզաքնակ հայ արուեստագէտներու եւ արուեստասէրներու գործակցութեան : Ջերմապէս կը ծափահարենք մեր ուսանողութեան այս գեղեցիկ նախաձեռնութիւնը , եւ ապահով ենք որ Բարիղի հայ գաղթականութիւնը պիտի փութայ գնահատել եւ քաջալերել երեկոյթն ու անոր կազմակերպիչները :



**ԱՆԳՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ .** — Սեպտեմբերի սկիզբները , Գերմանիոյ Ախէն քաղաքին մէջ , մեռաւ Անդրէաս Արծրունի , Մշակի հիմնադիր Գրիգոր Արծրունու տղայը : Անդրէաս Արծրունի մին էր այն մեծ դէմքերէն որ Եւրոպայի մտաւորականութեան մէջ հայ ցեղին յարգելի ներկայացուցիչները կը հանդիսանան : Առաջին Հայը եղաւ որ Գերմանիոյ մէջ յաջողեցաւ դասախօս անուանուիլ եւ մասնագէտ գիտնականի համբաւ վայելել :

Ծնած էր 15 նոյեմբեր 1847ին , Մոսկուա 64ին , աւարտելով Թիֆլիզի գիմնազիոնը , մտաւ Ս. Բէդէրսպուրկի համալսարանը , ուրկից 68ին անցաւ Հայտէլպէրկի համալսարանը . 70ին աւարտեց եւ քիմիագիտութեան տօթորի վկայական ընդունեցաւ : 75—77ին Սթրազպուրկի մէջ օգնական ուսուցիչ եղաւ , 77—83ին Գերմանիոյ մեծագոյն համալսարանին , Պէրլինի համալսարանին մէջ Բոխլա-souենդ կարգուեցաւ , 83—84ին , արտասովոր դասախօս Պրէսլաւի համալսարանը , 84—98ին սովորական դասախօս Ախէնի բազմարուեստեան դպրոցը : Իր դասախօսած ճիւղն էր հանքաբանութիւն :

Արծրունին լոյս ընծայած է յիսունի չափ գիտական գրուածքներ , որոնցմէ նշանաւոր են բիւրեղներու վրայ աշխատութիւնը , ճեֆրիդներու , գաւեթիդներու մասին գրուածքները , քարացած գործարանական մարմիններու վրայ հետազօտութիւնները , եւն Արծրունի իրական ծառայութիւն մատուցած է հանքաբանական գիտութեան . իր չնորհիւ դանուած է ամբողջ շարք մը նոր միեկոռայներու : Իր հաւաքածոները որ Ուրալի , Կովկասի եւ Ամբրիկայի Բրիտանական Կուիանային մէջ կատարած ճամբորդութիւններու միջոցին ժողվուած են , կը գտնուին այժմ Ախէնի բազմարուեստեան

զպրոցը : Արծրունին ընտրուած էր թղթակից-անդամ Թուրինի արքայական ակադեմիային , Պրէմէնի աշխարհագրական ընկերութեան , Ուրալեան բնագիտասէրներու ընկերութեան , Բէզերսպուրկի կայսերական ակադեմիային , պատուոյ անդամ՝ Բէզերսպուրկի կայսերական հանքաբանական ընկերութեան , եւ անդամ ուրիշ շատ ընկերութիւններու (1) :

Փերմանիոյ ամենէն կարեւոր գիտնականները , ի միջի այլոց՝ Երեւելի Վիրխովի՝ որ անձնապէս կը ճանչնար եւ կը յարգէր Արծրունին , մեծ ցաւ յայտնած են գիտական աշխարհին կրած այս կորուստին համար :

Արծրունի ոչ միայն ճշմարիտ գիտնական մըն էր , այլ միանգամայն անկեղծ ազգասէր մը : Երբ անոր դասախօս անուանուելուն լուրը հաղորդելով , Մշակ յայտարարեց թէ Անդրէաս Արծրունի առաջին հայ բոօֆէսօրն է այդ ճիւղին մէջ , երիտասարդ գիտնականը հետեւեալ յուզիչ նամակը կը գրէր իր եղբօրը լրագրին .

« Թող չգատապարտեն ինձ հայրենակիցներս որ ես հետու եմ հայրենիքից . ինձ համար մի գործունէութիւն եմ ընտրել եւ իմ ոյժերս այսպէսով պէտք է , գոնէ առժամանակ , գործ դնեմ առանց անմիջական օգուտներ բերելու հայրենակից հասարակութեանը : Բայց թող յիշեն որ իմ ընտրած ճանապարհս ամենայն ազգութիւնից դուրս է , որովհետեւ գիտութիւնը միջազգային է , չնայելով որ այս կամ այն երկրում նրա զարգացմանը աւելի նպաստում են քան թէ մի ուրիշի մէջ , եւ ինչ որ գիտութեան ասպարիզում կատարվում է մի երկրի մէջ՝ մենակ այն երկրի սեփականութիւնը չէ , այլ նոյնքան պատկանում է եւ մի այլ երկրին , որ գուցէ ժամանակաւորապէս աւելի անաջող պայմանների մէջ գտնվելով , կարող է գիտութեան ճանապարհի վրայ աւելի քիչ արդիւնաբերել : Իսկ այն գիտութիւնը որ իմ պարապմունքների առարկան է , կարող է ժամանակով մեր երկրին դեռ մեծ արդիւնքներ բերել , աչքի առջեւ ունենալով երկրի հանքային գանձերը , որոնք ապագային կարող են մեր երկրի հարստութեան աղբիւր դառնալ : Միւս կողմէն գուցէ եւ մեր հայրենիքը որ համեմատաբար շատ քիչ է հետազօտված , գիտութեան համար շատ օգտուէտ կարող է դառնալ , ներկայացնելով մի դեռ անմշակ բայց հարուստ դաշտ , որ արժանի է ուսումնասիրած

լինելու . թող թոյլ տրուի ինձ յուսալ որ ես դեռ եւս մի անգամ այնքան երջանիկ կը լինիմ որ ինձ կ'աջողվի իմ ոյժերս մեր հայրենիքին նուիրելու եւ այսպէսով ապացուցանելու որ մեր երկրին պիտանի դառնալը անդադար մտածմունքիս առարկայ է եւ իմ մշտական ձգտումս : »

Ո՛րքան սիրուն , ո՛րքան ազնիւ է այս զգացումը որով Արծրունին կերպով մը ներում խնդրելու ձեւ կառնէ իր ազգէն՝ ինքզինքը ամբողջապէս անոր ուղղակի ծառայութեանը գնել չկարենալուն : Յիշեցինք այդ գեղեցիկ հատուածը մանաւանդ այն տեսակ մը Հայերուն համար որոնք օտար երկրի մը մէջ հազիւ դիրք մը կը շինեն , կը փութան իրենց հայութիւնը ուրանալ : Անդրէաս Արծրունի , բացի այն բարձր օգուտէն զոր իր ցեղին մատուց Եւրոպայի գիտնականներուն շարքին մէջ հայ անուն մը աւելցնելով , կրցաւ միանգամայն ուղղակի նպաստել իր ազգին զարգացմանը , Մշակին անընդհատ ուղարկելով թղթակցութիւններ , գիտական , քաղաքական , բարոյական , ազգային ինդիքներու վրայ , ամէնքն ալ տողորուած ազնիւ , ազատ ոգով մը :

Արծրունիի մահն իսկ պատիւ կը բերէ իրեն . այդ կանխահաս մահը արդիւնքն է իր զուցաղնական գիտասիրութեան : 1894ին Արարատին կատարը վերելքը՝ հզօրապէս խախտած էր անոր առողջութիւնը . բայց հակառակ ասոր , իր խուզարկութիւնները առաջ տանելու համար , Ամբիկայի լեռները գնաց , երկու տարի ետքն ալ Ռուսաստան անցաւ Ուրալի վրայ բարձրանալու . այդ վերջին յանդգնութիւնը իր արգէն քայքայուած կազմուածքին վերջին հարուածը տուաւ :

**ԹՐԵՍԱՆՑ .** — Կովկասի թերթերէն կ'իմանանք թէ Դաւիթ Թրեանց (զոր ռուսահայք թուրեան կոչելու քմահաճոյքն ունեցան մինչեւ վերջը) մեռեր է Թիֆլիսի մէջ : Թրեանց Պոլսոյ հին գերասանական խմբին համակրելի անդամներէն մէկն էր : Ռչտունիէն յետոյ , մեր ամենէն օժտուած կատակերգուն կը համարուէր : Դժբաղդաբար , իր բնական սիրուն ձիւքերը չէր կրցած կամ չէր ուզած լուրջ ու գիտակից արուեստի մը գործածել . եւ յաճախ աւելի միմոս մը եղաւ քան ճշմարիտ կատակերգու : Բայց հայ թատրոնի պատմութեան մէջ չմոռցուող անուններէն պիտի մնայ անունն այդ առաձգական , արագաշարժ , ծայրայեղօրէն զուարթ մարդուն որ ծամառութիւնն էր մարմնաւորեալ :

**ՅԱՍՈՒՎՆԱՃՅՆ .** — Կարծես տերեւաթափն

(1) Այս կենսագրական տեղեկութիւնները կը քաղենք Ալիէնէն « Մշակ » ի զրկուած հեռագրէ մը :

է հայ թատրոնին, խեղճ հին աղւոր հայ թատրոնին որուն արդէն ստուերը միայն կ'ապրէր երկայն առեմէ ի վեր : Այն պահուն ուր Թըրեանց կը մեռնի, կ'իմանանք որ Փասուլեանեան ծանրապէս հիւանդ կը տառապի . Տիկին Փասուլեանեան, կը գրէ Իրաւունք, ներկայացում մը կազմակերպելու վրայ է Վառնայի մէջ ի նըպաստ իր ամուսնոյն : Կը յուսանք որ Վառնայի հայութիւնը զրական համակրանքի ապացոյց մը տալ պիտի չզլանայ մեր թատրոնի ոռմանդիկ օրերուն ամենէն խանդավառ ներկայացուցիչներէն մէկուն :

**ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՅ.** — Մուրճի մէջ կը կարդանք թէ Պ. Պերճ Պոջեանց, որ քառասուն տարի շարունակ դպրոցական ասպարէզին մէջ գործած է, նախ իբր տեսուչ Կովկասի ծխական դպրոցներուն, յետոյ իբր թեմական վերատեսուչ ծխական դպրոցներու, եւ վերջին տասնըմէկ տարիներուն ալ իբր ուսուցիչ Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցին, ներկայ տարւոյ սեպտեմբերէն սկսեալ վերջնապէս քաշուած է ուսուցչական պաշտօնէն, եւ Վեհ. Կաթողիկոսին առաջարկութեամբ, պիտի ստանայ մինչեւ մահը տարեկան 600 ռուպլի՝ զոր իրեն պիտի հատուցանէ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը :

Բարոյական աշխատաւորներուն համար հանգրստեան թոշակի հաստատումը մեր մէջ՝ ամենէն կարեւոր քայլերէն մէկն է զոր կ'անենք դէպ ի քաղաքակրթութիւն : Կը մաղթենք որ ուսանայոց այս գեղեցիկ նորամուծութիւնը փոխանցուէր նաեւ թրքահայոց, որոնց մէջ գրագէտներու եւ ուսուցիչներու անօթութենէ մեռնիլը սովորական երեւոյթ մըն է : Մեր անկեղծ ուրախութիւնները կը յայտնենք ուսուցիչ Պոջեանցին, սպասելով որ ընդհուպ հանդիսաւոր յարգանք մը կարենանք մատուցանել զրագէտին, Սօս եւ Վարդիթերի, Կոռաձաղիկի, Տեցերու գողտրիկ, համեղ վիպողին :

**ՋԷՅԹՈՒՆԻ ՀԱՄԱՐ.** — Նոր Կեանքի հրատարակչին վրայ՝ Նիւ-Եօրքի Տիգրիս լրագրին նախաձեռնութեամբ ի նպաստ Ջէյթունի հայ հասարակութեան բացուած հանգանակութիւնը յաջողութեամբ կը յառաջանայ : Ամերիկայի հայութիւնը, երկրին ամէն նահանգներէն փութալով մասնական եւ հաւաքական գումարներ ուղարկել Տիգրիսին, երախտագէտ համակրութեան մը ապացոյցը կուտայ Տաւրոսի լեռնականներուն

որոնք վերջին դէպքերու տխուր շրջանին մէջ՝ հայ ժողովրդին պատիւը փրկեցին իրենց արի զինագրութեամբը եւ որոնց այսօրուան նիւթական ողբալի կացութիւնը պէտք է ուշադրութիւնը գրաւէ բովանդակ Հայութեան : Կը յուսանք որ Ամերիկայի Հայոց օրինակին պիտի հետեւին ուրիշ երկիրներու Հայերն ալ, օգնութեան հասնելով մեր Ջէյթունի ազգակիցներուն որոնք Թրքին զիմացը անվախ ցցուեցան, բայց որոնք այսօր զիրենք անզօր կը զգան աւելի մեծ թշնամի մը, Անօթութեան առջեւ :



**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՉ**

Ռըլիս sk Ռըլիսի Սեպտ. 15 թուով հրատարակուած է ֆրանսերէն թարգմանութիւնը մեր աշխատակից Վ. Փափագեանի մէկ նորավէպին, Թեթի գրասեփեղը, քաղուած իր Տուրիսի յիշողութիւններ հատորէն : Թարգմանութեանը կ'ընկերանայ ներդաշնակ կենսագրական ծանօթութիւն մը Թրֆահայոց կեանքին պատկերներու, Սանթոնի, Անյազին, Խար.Սաքային իսկապիպ ու կենդանի զրագէտին վրայ :

Գերմանացի նոր բանաստեղծ մը, Արթուր Լայսթ, Լայսթիկի մէջ հրատարակած է գրքոյկ մը, Հայ բանաստեղծներ (Armenische Dichter) տիտղոսով : Հաւաքածոյ մըն է մեր բանաստեղծներէն ոմանց քերթուածներուն ու տաղերուն, գերմաներէն ոտանաւորի վերածուած : Հատորը կը պարունակէ կտորներ Սէյազի (Մատթեանց), Պետրոս Դուրեանի, Ռափայէլ Պատկանեանի, Մկրտիչ Պէշիկթաշեանի, Ղեւոնդ Ալիշանի, Արշակ Զօպանեանի, Յովհաննէս Յովհաննիսեանցի, Դողոսեանի, Ս. Շահազիզեանցի, երգեր Սայադ-Նովա, Թուրինջ, Աղբար, Ստեփաննոս եւ Քէօսա աշուղներէն, եւ բազմաթիւ ժողովրդական բանաստեղծութիւններ : Այս վերջիններուն թարգմանութիւնը շատ յաջող է եւ սիրուն . մինչդեռ գրական քերթուածներուն իմաստը յաճախ խանգարուած, երբեմն նոյն իսկ տողեր ու տուներ կրճատուած են, յանգաւոր թարգմանութեան զփուարութեանց յաղթելու համար : Բայց հակառակ այդ մէկ քանի թերութեանց, Պ. Լայսթ ջերմապէս շնորհաւորելի է իր բարձրօրէն հայասէր ձեռնարկին համար :

Le gérant : Georges WALINE

Իշխան Գուրտոն Լուսինեան՝ նուիրեց երկու օրինակ տարեկան Անահիտ Բարիզի հայ Ուսանողաց Միութեան :

Պ. Յովսէփ Իսքէնաէր, նախագահ Բարիզի Հայոց Հայրենասիրական Միութեան, նուիրեց երկու օրինակ տարեկան Անահիտ՝ Կիպրոսի որբանոցին եւ երկու օրինակ՝ Ռէքանատի որբանոցին :

Կ'արտատպենք այստեղ Անահիտի հիմնարկութեան մասին հայ մամուլի մէջ երեւցած կարծիքներէն մէկ քանին :

« . . . Եստ հաճութեամբ կը լսենք թէ ի մօտոյ լոյս պիտի տեսնէ Անահիտ անուն գրական թերթ մը Պարիսու մէջ, որոյ հրատարակիչն ծանօթ գրագէտ եւ բանաստեղծ, իւր փայլուն անցելովն՝ մեծամեծ բաներու յուսալ կուտայ մեզ : Տակաւին թարմ է ամենուս յիշողութեան մէջ Պ. Չօպանեանի խմբագրած Ծաղիկ թերթն իւր կրթիչ եւ հմուտ յօդուածներով, գրախօսութեամբք, եւրոպացի մատենագրաց ընտիր հատուածներով, խնամով եղած ուսումնասիրութեամբք, եւն :

ԲԱԶՄԱՎԷՊ. — Օգոստոս 98

« . . . Ծաղիկաբայ կը յորդորէ ընթերցող հասարակութիւնն այժմէն իսկ քաջալերել այսպիսի հանդէս մը, քանի որ ի Պարիս եղած լրագրական հրատարակութիւնները միշտ օգտակար եղած են ազգին, բայց այնու մանաւանդ որ Արշակ Չօպանեան մըն է հրատարակողը : Բաւական է Չօպանեանի Ծաղիկը աչքէ անցընել համոզուելու համար թէ ինչպիսի կենդանի շունչ ու ոգի պիտի գտնուի Անահիտին մէջ :

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ. — Օգոստոս-Սեպտեմբեր 98

« Հայ գրասէրներուն համար գեղեցիկ լուր մը ունինք տալիք : Արշակ Չօպանեան, որ երկու քուկէս տարի է Բարիզի մէջ աւելի՛ զբաղած էր ֆրանսական գրականութեան մէջ հայ միտքը ճանչցնելու գրքերով, տեսարակներով ու յօդուածներով, առանց թողլու այդ ա՛յնքան կենսական գործը՝ կը դառնայ նորէն հայ գրականութեան մշտական ձեռնարկով մը : Յաւաքիկայ Նոյ. Լէն սկսեալ, Բարիզի մէջ պիտի հրատարակէ Անահիտ անունով ազգային, գրական, գեղարուեստական ամսաթերթ մը . . . Մեր սրտագին խնդակցութիւնները մեր բարեկամին ու աշխատակցին : Տարակոյս չունինք թէ իր ձեռնարկը կոչուած է մեծագոյն յաջողութիւնը ունենալու :

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — Օգոստոս 98

Անահիտի գլխաւոր նպատակներէն մէկն է իրարու ճանչցնել հայ ցեղին իրարմէ անջատ հատուածները, մասնաւորապէս ուսանայ եւ թրքահայ հասարակութիւնները, միեւնոյն մտաւորական ժամագրավայրին մէջ գումարելով մեր արդի գրականութեան երկու գլխաւոր բաժիններուն ներկայացուցիչները : Ուրախ ենք որ Անահիտի ծրագիրը իր ամբողջութեանը մէջ մեծ համակրութեամբ ընդունուած է մեր ուսանայ կղբայրակիցներէն . ահա մէկ քանի տողեր՝ անոնց կարեւորագոյններէն ստացուած նամակներէ.

« Անահիտը դուք սնունտնու՛մ էք ժամագրավայր : Ես՛տ գեղեցիկ պաշտօն . եւ հաւատացէք, եւ չեմ լինի այն գրողը որ յօժարութեամբ եւ սիրով չէ շտապում տեսակցելու իր եղբայրակիցների հետ Ի՞մ փափաքը վաղուց եղած է տեսնել արեւմտեան եւ արեւելեան հայ գրագէտներին խմբուած միասին : Եթէ կայ մի չէզոք միջնավայր, ուր առանց նիւթական անպատեհութիւնների, կարելի էր շփման բերել մեր ազգի երկու մեծ եւ անջատ մասերը, այդ անշուշտ գրական ասպարէզն էր : Պէտք էր որ արեւելքի եւ արեւմուտքի մէջ ժողովրդային կեանքի բազմակողմանի նկարագիրների մի եռանդուն փոխանակութիւն լինէր, որով մեր կեանքը կ'ընդհանրանար մտաւորի մէջ : »

Թիֆլիս

ԼԷՕ

« Ենորհաւորում եմ ձեր Անահիտի ձեռնարկը, եւ յաջողութիւն եմ ցանկանում :

Թիֆլիս

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

« Գեղեցիկ է ձեր յղացած միտքը — հրատարակել աշխարհանոյակ Պարիզում մի հանդէս որ « կարողանայ մի տեսակ միջնորդ հանդիսանալ եւրոպական քաղաքակրթութեան եւ մեր ժողովրդի միջեւ » : Յիրաւի այդպիսի մի միջնորդի կարիքը անչափ զգալի է հայ ժողովրդի համար, որ տակաւին կարօտ է լոյսի եւ մտաւոր սնունդի : Անահիտը, թէ՛ չնորհիւ ձեր ջանքերի եւ թէ՛ մանաւանդ իր ծննդավայրի գեղարուեստական ճոխութեան ու մտաւոր բերրութեան քաջ կերպով կարող է մատակարարել հային ե՛ւ այդ լոյսը ե՛ւ այդ սնունդը :

« Համակիր եւ միանգամայն նախանձախնդիր ձեր ձեռնարկած բաղմաշահ գործին , սրտանց կը փափաքէի որ , ինչպէս մի ժամանակ նշանաւոր Հիւսիսայինայն էր Ռուսաստանի կեդրոնից նոր կեանքի , վերածնութեան լոյս առաքում ուսանայրին , այնպէս էլ ձեր Անահիսը , առաւել պայծառ եւ առաւել վառվռուն , մտաւոր լոյս ցողէր հանուր հալութեան՝ քաղաքակիրթ Եւրոպայի այդ լուսաւոր կեդրոնից » :

Մոսկուա

ԱՂԵՔՍԱՆԴԻՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

« Ստացայ ձեր նամակը Անահիսի ծրագրի հետ , եւ շտապում եմ պարտքի տակ չը մնալ : Ձեր հանդէսի ծրագրերը միանգամայն ժամանակակից է , համապատասխան մեր գրականութեան այժմեան շահերին , մանաւանդ իմ հայեացքներին . . . Մենք Հայերս չունինք ոչ գրականութիւն եւրոպական մտքով եւ ոչ մանաւանդ հրապարակախօսութիւն . թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը պիտի ստեղծել , խորտակելով հինը , նրա աւերակները վրայ կառուցանել նորը : . . . Ուրախութեամբ կ'աշխատակցիմ Անահիսին , թէ՛ վէպիկներով եւ թէ՛ յօդուածներով :

Օսկա

ՇԻՐՎԱՆՁԱԴԻ

« Որովհետեւ Անահիսը հրատարակելով՝ հայ գրականութեան ծառայելու գեղեցիկ-պատակը ունիք , ուստի հարկ է որ ամենայն հայ գրագէտք սիրով վերաբերին դէպի այն եւ մանաւանդ թէ խրախուսեն զձեզ իրական գործակցութեամբ :

« . . . Եթէ Անահիս չչեղի այն ճանապարհէն զոր գծած էք նրա համար , եւ լինի արգարեւ զուտ մտաւորական հրատարակութիւն , զերծ անձնական եւ կուսակցական գիտումներէ , եւ ձգտի միայն լուսոյ եւ գիտութեան մատակարար լինել հայ ընթերցողի համար , անշուշտ սիրալիր ընդունելութիւն կը գտնէ Հայոց մէջ եւ կը լրացնէ կատարեալ եւ ի վաղուց հետէ ակնկալեալ մի ամսագրի թերին :

Թիֆլիս

ՄՈՒՐԱՑԱՆ

Յառաջիկայ թուով , կը սկսինք հրատարակել թարգմանութիւնը ԿԻՒՍԹԱՎ ՖԼՕՊԷՌԻ Հերոյդիս հրաշակերտին : Նոյն թուով , ուսումնասիրութիւն մը՝ հայ մեծ լիպասան ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ վրայ , իր մահուան յիշատակին առթիւ :

Մտակայ թիւերով , վիպակ մը ԼԷՕԻ , վիպակ մը ՇԻՐՎԱՆՁԱԴԻԻ , վիպակ մը ՄՈՒՐԱՑԱՆԻ : Ուսումնասիրութիւն՝ Բիւզանդեան կայսրութեան մէջ հայ տարրին կատարած գերին վրայ , օգտուելով ԿԻՒՍԹԱՎ ՇԼԷՕՆՊԷՌԻՎԻԻ աշխատութիւններէն :

Ուսումնասիրութիւններ Պ. Պ. ՕԿԻՒՍԴ ԲԱՌԻԷՐԻ , Ա. ՄԷՅՆԷԻ , ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՈՆԵԱՆԻ , ԿԱՐԱՊԵՏ ԲԱՍՄԱՁԵԱՆԻ , ԼԵՒՈՆ ՄՍԵՐԵԱՆՅԻ , եւն . եւն :

Անահիսի յաջորդ թիւերը պիտի ունենան նաեւ՝ ազգային եւ ընդհանուր լուրերու քաղուածք մը , երբեմն քաղաքական տեսութիւններ , Բարիզի գրական , գեղարուեստական եւ գիտական նորութեանց վրայ ծանօթութիւն տուող յօդուածներ , եւ հայերէն լեզուով ամէն տեսակ հրատարակութեանց վրայ գրադատականներ :

« ԱՆԱՀԻՏ » Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիս պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր. 25 (օտար երկիրներ) :

Անահիսի առաջին թիւը բացառաբար կը բաղկանայ 48 էջէ , առանց գնոյ յաւելման : Բաժանորդագրինն է տարեկան 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2, 50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

Բաժանորդագրինը կանխիկ է : Անոնք որ չեն ուզեր բաժանորդ գրուիլ , կը խնդրուի որ հաճին իսկոյն ետ դարձնել այս առաջին թիւը :

Ռուսներոյ , Պարսկաստանի եւ Ռուչուքի համար Անահիսի գործակալն է Պ. Գառնիկ Տէօբմէճեան (Ռուսչուք , Պուլկարիա) :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր : Կ'ընդունուին ամէն տեսակ ազգեր : Նամակ , յօդուած եւ բաժանորդագրին զրկել առ Ա. Չօպանեան , 6, Place de l'Odéon, Paris.